



# Զհաց մեր իանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՀՈՒՆԻՍ 2023

Լ.Դ. ՏԱՐԻ

Բ. ԵՌԱՄՍԹՅԱԿ

Մեր խորին չնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությանը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road  
Paramus, New Jersey 07652, USA  
E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ  
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

Երանի՝ նրան, ում անօրենությունը թողություն գտավ, և ում մեղքը ծածկվեց: (Սահմ. 32.1)

## ՄԱՇԿԻ ԽՈՐՔԻՑ ԱՎԵԼԻ

**Ե**րիտասարդ հավատացյալ ժողեն գնացել էր իր եղբոր եկեղեցին: Պաշտամունքից առաջ, տեսնելով սրբավայր մտող ժողեին, եղբայրը մոռայլվեց, որովհետև նրա կարճաթև շապիկի տակից երևում էին թեւերի դաշվածքները: Նա եղբորը խորհուրդ տվեց տուն գնալ ու հագուստը փոխել, որովհետև դաշվածքները ցույց են տալիս անցյալի իր անցած ճանապարհները: Այդ պահին ժողեն իրեն կեղտոտ զգաց: Բայց մեկ ուրիշ մարդ, լսելով եղբայրների խոսակցությունը, ժողեին բերեց հովվի մոտ ու պատմեց պատահածը: Հովվիվը ժամանակով քանդեց իր շապիկի կոճակները և ցույց տվեց իր կրծքի վրայի մեծ դաշվածքը, որ արել էր անցյալում: Նա ժողեին վստահեցրեց. քանի որ Աստված իրեն ներսից մաքրել է, նա այլևս կարիք չունի ծածկելու իր ձեռքերը: Դավիթն ունեցել է Աստծո կողմից մաքրվելու ուրախության փորձառությունը: Իր մեղքը նրան խոստովանելուց հետո նա գրեց. «Երանի՝ նրան, ում անօրենությունը թողություն գտավ, և ում մեղքը ծածկվեց» (Սահմ. 32.1): Այժմ նա կարող էր «ուրախանալ ու ցնծալ» նրանց հետ, որոնք «ուղիղ են սրտով» (Հմ.11): Հետագայում Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված նամակի 4.7-8-ում մեջբերում է սաղմոս 32-ի 1-2-ը, որը հայտարարում է, թե Հիսուսի հանդեպ ունեցած հավատը տանում է դեպի փրկություն ու Աստծո առաջ մաքուր կեցվածք (տե՛ս հռոմ. 4.23-25): Հիսուսով ձեռքբերված մաքրությունը շատ ավելին է, քան մաշկի խորքը, քանի որ նա գիտի ու մաքրում է մեր սրտերը (Ա. Թագ.16.7, Ա.Հովհ. 1. 9): Թող որ այսօր ուրախանանք նրա մաքրագործող արարքով:

**Աղոթք - ՏԵՇԻ Հիսուս, շնորհակալ եմ քեզ, որ ներեցիր մեղերս ու ինձ ներսից նաքրեցիր: Ամեն:**

**Անցյալում մեր գործած մեղերի նեմ դայլարելիս հիշենք, որ ՏԵՇԻ Հիսուսին հավատալով՝ մենք կերպարանափոխվում ու մարվում ենք լիովին:**

Նա պատասխանեց ու ասաց. «Եթե դրանք լոեն, քարերն են աղաղակելու»: (Դուկ. 19. 40)

## ԿԱՊՈՒՅՏ ՔԱՐԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳ

**Կ**ապույտ քարը շատ հետաքրքիր քարատեսակ է, այն երաժշտական հնչողություն ունի: Ուելսի Մենքլոչոգ գյուղի անունը թարգմանաբար նշանակում է զանգ կամ զողանջող քարեր: Այստեղ մինչև 18-րդ դարը որպես եկեղեցու զանգ օգտագործել են կապույտ քարը: Ուշագրավ է, որ Անգլիայի պատմական հուշարձան Սթոունհենջում նույնպես օգտագործված է կապույտ քարը, ինչը ենթադրել է տալիս, որ այս տեսարժան վայրի նախնական նպատակը երաժշտական է եղել: Ավելին, որոշ հետազոտողներ հաստատում են, որ Սթոունհենջի կապույտ քարերը բերվել են Մենքլոչոգի մերձակայքից, որը մոտ երկու հարյուր մղոն հեռավորության վրա է:

Երաժշտական հնչողության քարերը Աստծո մեծ արարչագործության հրաշալի օրինակներ են, որոնք մեզ հիշեցնում են Ծաղկազարդի կիրակի՝ երուսաղեմ մտնելու ժամանակ Հիսուսի ասած խոսքը: Երբ ժողովուրդը գովաբանում էր Հիսուսին, կրոնական առաջնորդները նրանից պահանջեցին հանդիմանել նրանց: Հիսուսը պատասխանեց ու ասաց. «Եթե դրանք լոեն, քարերն են աղաղակելու» (Դուկ. 19. 40):

Եթե կապույտ քարերն ստեղծում են երաժշտություն, և եթե Հիսուսն է հիշել քարերը, որոնք վկայում են Արարչի մասին, մենք ինչպե՞ս կարող ենք մեր գովաբանությունը հայտնել նրան, ով ստեղծել է մեզ, սիրում է և փրկել է: Նա արժանի է երկրպագության: Թող Սուրբ Հոգին մղի մեզ, որ պատվենք նրան, ով արժանի է:

**Աղոթք** - Արարի՛ Աստված, արժանի ես ամենայն պաշտամունքի, գովաբանության ու երախտագիտության: Երբ սիրոս կարծրանա ու չտեսնեմ քո արժանիքները, իիշեցրո՛ ինձ, որ բոլոր

ստեղծագործությունները թեզ են գովերգում: Ամեն:

**Բոլոր ստեղծագործությունները գովաբանում են Աստծուն: Մեր ձայնը բարձրացնելով՝ միանանք այդ սիամնելի դաշտամունքին:**

Ավելի հոժարությամբ իմ տկարություններով կպարծենամ, որպեսզի քրիստոսի գորությունն իմ մեջ բնակվի: (Բ. Կորնթ. 12:9):

## ՈՒԺ ԳՏՆԵԼ ԱՍՏԾՈ ՄԵԶ

**Ա**մերիկացի Փուտբոլիստ Քրիստիան Պուլիշչը մի քանի անգամ վնասվածք ստացավ, որը շատ խանգարեց նրան: Տեղեկանալով, որ չեմպիոնական լիգայի կիսաեղբափակիչ խաղին ինքը ընդգրկված է թիմի հիմնական կազմում, մարզիկը շատ էր վշտացել: Բայց հետագայում նա նկարագրում է, թե այդ ժամը պահին ինչպես է Աստված Հայտնվել իրեն: «Ինչպես միշտ ես ձեռքս մեկնում եմ Աստծուն, և նա ինձ ուժ է տալիս: Զգում եմ, որ կա մեկը, որ միշտ ինձ հետ է: Զգիտեմ՝ ինչ կարող էի անել առանց այդ զգացումի»: Ի վերջո այդ խաղում Պուլիշչը, փոխարինման դուրս գալով, կարողացավ խելացի խաղով ու վճռորոշ հարվածով ապահովել իր թիմի մրցանակային տեղը: Այս փորձը նրան շատ կարևոր դաս տվեց. տկարություններն ընդունել որպես առիթ Աստծո համար իր անչափելի զորությունը բացահայտելու: Աշխարհը մեզ սովորեցնում է խնդիրներ ունենալիս հիմնվել սեփական ուժի ու կարողության վրա: Սակայն Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստծո ուժն ու շնորհը մեզ զորություն կտան նույնիսկ ամենալժվարին իրավիճակներում (Բ. Կորնթ. 12: 9): Հետևաբար, մենք կարող ենք կստահորեն շարժվել՝ իմանալով, որ երբեք չենք կարող միայնակ գիմագրավել փորձությունները: Մեր «տկարությունները» Աստծո համար իր զորությունը բացահայտելու հնարավորություններ են, որովհետև «երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ» (Հմ.10): Այսպիսով, մենք կարող ենք օգտագործել մեր պայքարը՝ գովարանելու Հայր Աստծուն, շնորհակալություն հայտնելով Նրա բարության համար և այդ մասին պատմելով ուրիշներին, որպեսզի նրանք էլ կարողանան զգալ Նրա սերը:

**Աղոթք - Սիրելի՝ Երկնավոր Յայր, շնորհակալ եմ, որ Դո՛ւ ես իմ ուժի աղբյուրը և առաջնորդում ես ինձ ամեն օր: Ամեն:**

**Դժվար է միայնակ հաղթահարել մեր դայլաները: Իսկ Աստծո մեջ զորություն գտնելով՝ կկարողանանք:**

Մնացեք իմ մեջ, ես էլ՝ ձեր մեջ: (Հովհ. 15. 4)

## ՏԱՆԸ ՀԻՍՈՒՍԻ ՀԵՏ

**S**արիներ առաջ կենդանիների ապաստարանից Զունո անուշնով մի կատու բերեցինք մեր տուն: Ճիշտն ասած՝ ես ուղղում էի կատու ունենալ մկների քանակը պակասեցնելու համար, բայց ընտանիքիս անդամները հենց ընտանի կենդանի էին ուղղում պահել: Ապաստարանում մեզ հրահանգներ տվեցին, թե առաջին օրերին ինչ պետք է անել, որպեսզի կատուն իմանա, որ դա այսուհետեւ իր տունն է, որտեղ ինքը գտնելու է ապահովություն ու սնունդ: Այդպիսով նա, եթե նույնիսկ դուրս գար տնից, ի վերջո անպայման կվերադառնար:

Եթե մենք չգիտենք մեր իսկական տունը, միշտ կփորձենք զուր տեղը փնտրել բարություն, սեր և իմաստ: Եթե ուղղում ենք գտնել մեր իսկական կյանքը, լսենք Հիսուսին, որն ասել է. «Մնացեք իմ մեջ, ես էլ՝ ձեր մեջ» (Հովհ. 15.4):

Աստվածաշնչի մասնագետ Ֆրեդերիկ Դեյլ Բրաներն ընդգծում է, որ Հիսուսի մեջ մնալը նման է տուն ու ընտանիք ունենալուն: Հիսուսի խոսքերը նա այսպես է թարգմանում. «Մնա՛ տանը՝ ի՛մ մեջ»:

Այս գաղափարը բացատրելու համար Հիսուսն օգտագործել է որթատունկին ամրացված ճյուղերի օրինակը: Որպեսզի ապրեն, ճյուղերը պետք է միշտ կապված մնան իրենց արմատին:

Բազմաթիվ ձայներ գատարկ խոստումներով հուշում են մեր խնդիրների լուծումը՝ մեզ տալով ինչ-որ նոր «իմաստնություն» կամ ուրախ ապագա: Բայց եթե մենք ուղղում ենք իսկապես ապրել, պետք է մնանք Հիսուսի հետ: Պետք է մնանք տանը:

**Աղոթք - Հիսուս, ես սիրում եմ թափառել, ինձ ձգում են տարբեր ուղղություններով: Բայց ես ուզում եմ մնալ տանը՝ քեզ հետ: Դու ես իմ կյանքը: Օգնիր ինձ, որ մնամ քո մեջ: Ամեն:**

**Ի՞նչն է ոեց հեռացնում տնից՝ Հիսուսից:  
Հիշի՛ր, որ նա է կյանքի աղբյուրը և մնա՛ նրա մեջ:**

Եթե մեկը կամենում է իմ հետևից գալ, թող ուրանա ինքն իրեն, վերցնի իր խաչը և գա իմ հետևից: (Մատթ. 16. 24)

## **ՄԻ ՓՈՔՐԻԿ ՍԱՍԻՑ ԱՎԵԼԻՆ**

**Մ**ենք բոլորս, երբ տեղափոխվում ենք նոր տեղ ապրելու, մեզանից մի մաս ենք թողնում հին բնակավայրում: Իսկ եթե որոշենք երկար ժամանակով ապրել Անտարկտիկայի Վիլյա Լաս Էստրելաս ցուրտ ու ամայի վայրում, այդ մի մասը բառացի կղառնա: Ամենամոտ հիվանդանոցն այդտեղ 625 մղոն հեռավորության վրա է, և մարդիկ լուրջ անախորժությունների կհանդիպեն, եթե ասենք մեկի կույր աղիքը պայթի: Թերևս ճիշտ կլինի այնտեղ տեղափոխվելուց առաջ վիրահատել այդ օրգանը:

Ուժեղ կլիներ: Բայց դա այնքան ուժեղ չէ, որքան Աստծո թագավորության բնակիչ դառնալը: Քանի որ մարդիկ Հիսուսին հետևում են իրենց պայմաններով և ոչ թե նրա (Մատթ. 16. 25-27): Նա վերաիմաստավորում է, թե ինչ է նշանակում լինել աշակերտ: Նա ասում է. «Եթե մեկը կամենում է իմ հետևից գալ, թող ուրանա ինքն իրեն, վերցնի իր խաչը և գա իմ հետևից» (Հմ. 24): Սա ենթադրում է թողնել այն ամենը, ինչ մրցակից է նրան ու նրա թագավորությանը: Վերցնելով խաչը՝ մենք պատրաստակամություն ենք հայտնում հանուն Քրիստոսի ենթարկվել հասարակական ու քաղաքական ձնշումների, նույնիսկ մահվան: Բայց մենք պետք է պատրաստ լինենք նաև իսկապես հետևելու նրան, ընդունելու նրա առաջնորդությունը:

Հիսուսին հետևելը շատ ավելին է, քան մեր կյանքի մի մասնիկը հետևում թողնելը: Երբ նա օգնում է մեզ, դա վերաբերում է մեր ամբողջ կյանքին՝ ներառյալ մեր մարմինը միայն իրեն հանձնելուն և հնազանդվելուն:

**Աղոթք - Սիրելի Յիսուս, օգնի՛ ինձ, որ հրաժարվեմ այն բոլոր բաներից, ինչը մրցակցում է քեզ ու թող թագավորության հետ: Անեն:**

**Տեր Յիսուսին հետևելը նշանակում է հրաժարվել մեր կյանքից ու այն գոհաբերել նրան:**

Մարդու Որդին չեկավ, որ իրեն ծառայեն, այլ որպեսզի ինքը ծառայի: (Մատթ. 20.28)

## ԾԱՌԱՎՅԵԼՈՒ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐԸ

**Դ**ե Ավիոնն ընդամենը 13 տարեկան էր, երբ ընդունեց ուրիշներին ծառայելու մարտահրավերը: Նա և իր մայրը լսել էին մի մարդու մասին, որն իր գավակներին կոչ էր անում ամառային արձակուրդի ժամանակ անվճար մաքրել հիսուն մարդագետնի մոլախոտերը: Նպատակն էր օգնել վետերաններին, միայնակ մայրերին, հաշմանդամություն և օգնության կարիք ունեցողներին: Հիմնադիրը, որ հիսուն մարդագետնի խոտերը մաքրել էր, նախաձեռնեց այդ մարտահրավերը՝ աշխատանքային բարոյականություն սովորեցնելու և համայնքին ինչ-որ բան վերադարձնելու համար:

Եվ հակառակ շոգ եղանակին՝ Դե Ավիոնն ընդունեց ուրիշներին ծառայելու առաջարկը:

Ծառայելու մարտահրավեր է ուղղվում նաև Հիսուսին հավատացողներին: Բոլոր մարդկանց համար մեռնելու նախօրյակին Հիսուսն ընթրեց իր բարեկամների հետ (Հովհ. 13. 1-2): Լավ իմանալով շուտով իրեն սպավող տառապանքների ու մահվան մասին՝ նա ոտքի կանգնեց, մի գոգնոց կապեց մեջքին ու սկսեց լվանալ աշակերտների ոտքերը (Հմ. 3-5), ապա սսաց. «Եթե ես՝ Տերս ու Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք նույնպես պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ» (Հմ. 14):

Հիսուսը՝ խոնարհ ծառան ու մեր օրինակը, հոգ տարավ մարդկանց մասին, բուժեց կույրերին ու հիվանդներին, սովորեցրեց իր թագավորության բարի լուրը և իր կյանքը տվեց հանուն իր բարեկամների: Քանի որ Քրիստոսը սիրում է քեզ, հարցրու՝ նրան, թե այս շաբաթ ո՞ւմ կուզենա, որ ծառայես:

**Աղոթք - Սիրելի՛ Շայր, ցույց տուր, թե ինչպես ուրիշներին սիրեմ այն սիրով, որ Դու ունես իմ հանդեա: Ամեն:**

**Եթե Ասծոն սերն ու կարեկցությունը իմաս ունեն եեզ համար, օգտագործի՛ր ու ունեցած ընորհները, որդեսզի ծառայես ուրիշներին:**

Նրա քրտինքը դարձավ արյան կաթիլների պես, որ թափվեցին գետնին: (Ղուկ. 22.44)

## ԿԱՐՄԻՐ ԿԱԹԻԼՆԵՐ

**Կ**ոտլանդիայի ազգային պատկերասրահում ուշադրությունս գրավեց հոլանդացի նկարիչ Վինսենթ վան Գոգի հումկու վրձնահարվածներով ու վառ գույներով կտավներից մեկը՝ «Զիթենիները»: Շատ մասնագետների կարծիքով՝ աշխատանքը նվիրված է Զիթենյաց լեռան վրա գտնվող Գեթսեմանի պարտեզում Հիսուսի ունեցած փորձառությանը: Կտավի վրա իմ ուշադրությունը հատկապես գրավեցին հինավուրց ձիթենիների մեջ երեացող կարմիր բծերը:

Հիսուսը, նախապես իմանալով, որ իր աշակերտներից մեկը՝ Հուդան, իրեն պիտի մատնի, այդ գիշեր գնաց Զիթենյաց լեռ՝ աղոթելու: Նա ճնշված էր, որովհետև գիտեր, որ այդ դավաճանությունն իրեն տանելու է խաչելության: Երբ նա աղոթում էր, «Նրա քրտինքը դարձավ արյան կաթիլների պես, որ թափվեցին գետնին» (Ղուկ. 22. 44): Հիսուսի տառապանքը երեսում էր նաև, երբ նա պատրաստվում էր հրապարակային մահապատժի ցավին ու նվաստացմանը, որի հետևանքով այդ ավագուրբաթ թափվելու էր իր արյունը:

Վան Գոգի կտավի կարմիր ներկը հիշեցնում է, որ Հիսուսը պետք է, «շատ չարչարվի ու փորձության ենթարկվի» (Մարկ. 8.31): Թեև տառապանքը նրա պատմության ընդամենը մի մասն է, սակայն այն չի գերակայում կտավում: Մահվան դեմ Հիսուսի տարած հաղթանակը փոխում է նունիսկ մեր տառապանքը՝ թույլ տալով, որ այն դառնա Աստծո ստեղծած մեր կյանքի մի դաշտանկարի միայն մի մասը:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, շնորհակալ եմ, որ պատրաստ ես տառապելու մինչև մահ, որպեսզի ես հավիտենական կյանք ստանամ: Անեն:**

**Յիշենf Str Յիսուսի տառադանիը, որդեսզի Նրա օրինակը օգնի մեզ, երբ մենf էլ ենթարկվենf տառադանիների:**

Երկուսը միասին վազում էին, բայց մյուս աշակերտը Պետրոսից ավելի արագ վազեց և առաջինը գերեզման հասավ: (Հովհ. 20.4)

## ՎԱԶԵԼ ԴԵՊԻ ՀԻՍՈՒՍԸ

**Փ**արիզ կատարած ճամփորդության ժամանակ Բենն ու իր ընկերը այցելեցին քաղաքի հայտնի թանգարաններից մեկը: Թեև Բենը արվեստի բնագավառի ուսանող չէր, բայց շատ տպագործեց Յուջին Բեռնարի «Պետրոս և Հովհաննես աշակերտները վազում են գերեզմանի մոտ. Հարության առավոտ» կտավով: Քրիստոսի աշակերտների հայացքներն ու ձեռքերի դիրքը շատ խոսուն էին ու հրավիրում էին դիտողներին հայտնվել իրենց տեղում, ունենալ նույն զգացումները:

Կտավը պատկերում էր Հովհաննու 20. 1-10 հատվածը, որտեղ նկարագրվում է երկուսի վազքը գեպի Հիսուսի դատարկ գերեզմանը (Հմ.4): Նկարում շատ մեծ վարպետությամբ ցույց է տրված աշակերտների ապրումները. այդ պահին նրանց հավատքը գեռ լիովին ձևագորգած չէր, սակայն նրանք ճիշտ ուղղությամբ էին ընթանում: Ի վերջո Հարություն առած Հիսուսը երեաց նրանց ու հայտնեց իր մասին (Հմ. 19-29): Նրանց որոնումը նման չէր դարերի ընթացքում Հիսուսին փնտրողների որոնմանը: Մենք կարող ենք հեռու լինել դատարկ գերեզմանից կամ արվեստի նման փայլուն գործից, բայց կարող ենք հստակ տեսնել բարի լուրը: Աստվածաշունչը մեզ ստիպում է հուսալ, փնտրել և վազել դեպի Հիսուսն ու նրա սերը, եթե նույնիսկ ունենք կասկածներ, հարցեր ու անորոշություններ: Վաղը, երբ նշենք Զատիկը, հիշենք Հիսուսի խոսքերը.«Դուք կինտրեք ինձ ու կգտնեք, երբ ինձ ձեր ամբողջ սրտով որոնեք» (Երեմ. 29.13):

**Աղոթք - Տե՛ր Հիսուս, առաջնորդի՛ր ինձ այսօր դեպի Ձո սիրո բազուկները: Ամեն:**

**Եթե դեռ չգիտես Հիսուսին, ինչո՞ւ ես վազելու դեռի ինքն ու իր սերը: Եթե հավատում ես, ինչո՞ւ ես բաժնեկցելու Նրա սերը ուրիշների հետ:**

Նրա վերքերով մենք բժշկվեցինք: (Ես. 53.5)

## ԱՎԵԼԻ ԽՈՐ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

**2**020-ի Հարության տոնին Բրագիլիայի Ոիո դե Ժանեյրո Քաղաքին նայող «Քրիստոս քավիչի» հուշարձանն այնպես էին լուսավորել, ասես նա բժշկի հագուստով լիներ: Քրիստոսի՝ որպես բժշկողի պատկերի միջոցով գնահատանք էր տրվում առողջապահական համակարգի աշխատողներին, որոնք պայքարում էին թագավարակի դեմ և միաժամանակ ընդգծվում Հիսուսի՝ մեծ բժիշկ լինելու առաքելությունը (Մարկ. 2.17):

Իր երկրային ծառայության ժամանակ Հիսուսը շատ մարդկանց է բուժել ֆիզիկական տառապանքներից: Ինչպես օրինակ կույր Բարտիմեոսին (Մարկ. 10. 46-52), մի բորբոքի (Ղուկ. 5. 12-16), անդամալույծի (Մատթ. 9. 1-8): Իրեն հետեւողների հանդեպ նրա հոգատարությունը դրսեռորդեց նաև այն ժամանակ, երբ նա, պարզ կերակուրը բազմապատկելով, հագեցրեց ամբողջ բազմության քաղցը (Հովհ. 6.1-13): Այդ հրաշքներից յուրաքանչյուրը բացահայտում է, որ ինչպես Հիսուսի գործությունն է մեծ, այնպես էլ մարդկանց հանդեպ նրա սերն է անկեղծ:

Բայց նրա բժշկության ամենամեծ գործողությունը կատարվեց իր մահվան ու Հարության միջոցով: «Նա մեր հանցանքների համար վիրավորվեց.... և նրա վերքերով մենք բժշկվեցինք (Ես. 53. 5): Թեև Հիսուսը չի բուժում մեր բոլոր հիվանդությունները, բայց մենք կարող ենք վստահել իրեն մեր ամենախոր բուժման կարիքի գեպքում, այն բժշկությանը, որ նա բերում է Աստծո հետ ունեցած մեր հարաբերություններում:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, շնորհակալություն Ձո զոհաբերության համար, որ բուժում է իմ հոգևոր հիվանդությունը: Օգնի՛ր, որ դիզիկական դժվարությունների ժամանակ վստահեմ քեզ: Ամեն:**

**Յիսուսն իմեն իրեն զոհաբերեց Աստծո հետ մեզ հաշտեցնելու և նրա հետ մեր հարաբերությունները ըսկելու համար:**

Եվ Տերն ասաց Գեղենմին.«Քեզ հետ եղած ժողովուրդը շատ է»: (Դատ. 7.2)

## ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

**Ե**թք որդիս գրեթե երեք տարեկան էր, ես վիրահատության անհրաժեշտություն ունեցա, որը պահանջում էր երկարաժամկետ ապահքինում: Նախքան վիրահատությունը ես սկսեցի պատկերացնել սպասվելիք դժվարությունները տնային գործերում, և վախենում էի, որ չեմ հաղթահարի այդ ամենը:

Նախքան մաղիանացիների գեմ սպասվող ճակատամարտը՝ Աստված միտումնավոր թուլացրեց Գեղեռնի զորքը: Նախ վախեցողներին թույլ տրվեց հեռանալ, քսաներկու հազար մարդ գնաց տուն (Դատ. 7.3): Մնացած տասը հազարից մնացին այն երեք հարյուրը, որոնք ձեռքը բերանին տանելով էին խմում ջուրը: Հենց դա էլ խանգարեց իսրայելցիներին (Հմ. 5-6), նրանք չէին կարող ասել՝ «Իմ ձեռքն ինձ ազատեց» (Հմ.2):

Մեզանից յուրաքանչյուրի համար էլ կինեն թուլության ու հյուծվածության պահեր: Երբ ես էի այդ վիճակում, հասկացա, թե որքան կարիք ունեմ Աստծո: Նա ներքուստ քաջալերեց ինձ, իսկ արտաքուստ այդ օգնությունը եղավ ընկերներիս ու ընտանիքիս աջակցության ձևով: Ճիշտ է, որոշ ժամանակ զրկված էի իմ անկախությունից, սակայն այդ ընթացքում սովորեցի, թե ինչպես լիովին ապավինեմ Աստծուն: Քանի որ Նրա «զորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում» (Բ. Կորնթ.12.9), մենք կարող ենք վստահել Նրան, երբ ի վիճակի չենք միայնակ հոգալ մեր կարիքները:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, օգնի՛ ինձ, որ օրեցօր ավելի ու ավելի կախյալ լինեմ քեզանից: Ամեն:**

**Եթե ու սկարության մեջ զգացել ես Ասծոն զորությունը, օգնի՛ ուրիշներին, որ իրենի էլ Ասծով ուժ գտնեն իրենց սկարության մեջ:**

Ավետարանչի գործն արա: (Բ. Տիմ. 4.5)

## ԱՌԻԹՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

**Ք**սանամյա Շին Յին, մինչ կընդունվեր համալսարան, որոշեց ամռան երեք ամիսներին ծառայել երիտասարդական միսիոներական մի կազմակերպությունում: Նկատի առնելով թագավարակի հարուցած սահմանափակումներն ու շփման դժվարությունները, տղայի որոշումը տարօրինակ էր թվում: Սակայն նա այսպես պատճառաբանեց. «Մենք չկարողացանք Zoom-ի կամ հեռախոսակապի միջոցով կապ հաստատել հավատացյալ ուսանողների և ոչ հավատացյալների հետ, որպեսզի միասին աղոթեինք»:

Շին Յին վարվեց այնպես, ինչպես Պողոս առաքյալն էր խրախուսում Տիմոթեոսին. «Ավետարանչի գործն արա» (Բ. Տիմ. 4.5): Պողոսը զգուշացնում է, որ մարդիկ գտնում են ուսուցիչներ, որոնք սովորեցնում են այն, ինչ իրենք են ուզում լսել, և ոչ այն, ինչը պետք է լսեն (Հմ. 3-4): Նա Տիմոթեոսին խրախուսեց. «Քարոզի՛ր Աստծո Խոսքը՝ պատեհ թե անպատեհ առիթով, հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր ամենայն համբերատրությամբ և վարդապետությամբ» (Հմ.2):

Թեև մեզանից ոչ բոլորն են կոչված ավետարանիչ կամ քարոզիչ լինելու, բայց յուրաքանչյուրս կարող ենք մեր դերն ունենալ մեր հավատը մեզ շրջապատողների հետ կիսելու առումով: Անհավատները կկորչեն առանց Քրիստոսի: Հավատացյալները նույնպես զորացման ու քաջալերանքի կարիք ունեն: Աստծո օգնությամբ եկե՛ք հոչակենք նրա բարի լուրը երբ և որտեղ կարող ենք:

**Աղոթք -** Սիրո՞յ տեր Յիսուս, օգնի՛ր ինձ, որ օգտագործեմ ցանկացած առիթ թու խոսքն ուրիշների հետ բաժնեկցելու համար, որպեսզի նրանք հույս ու միսիթարություն գտնեն թեզնով: Անեն:

**Կարող են մեր հավատը բաժնեկցելուն խանգարող բաներ լինել:**  
**Սակայն Տեր Յիսուսը օգնում է մեզ՝ հաղթահարելու այդ բոլոր արգելվները:**

Եվ Սամուելն ասաց.«Խոսի՛ր, Տե՛ր, որովհետև քո ծառան լսում ե»: (Ա.Թագ. 3.10)

## ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է ՄԵԶ ՀԵՏ

**Ա**նձանոթ հեռախոսահամարից զանդ ստացա: Սովորաբար նման զանգերին չեմ պատասխանում, բայց այս անգամ վերցրի: Պատահական զանգահարողը քաղաքավարի հարցըեց, թե արդյո՞ք կարող եմ ընդամենը մի քանի րոպե լսել աստվածաշնչային մի հատված: Նա մեջբերեց Հայտնության 21. 3-5 հատվածը, որտեղ ասվում է, թե Աստված «նրանց աչքերից պիտի սրբի ամեն արտասուլք»: Նա խոսեց Հիսուսի մասին, որը մեր վստահությունն ու հույսն է: Ես անձանոթին ասացի, որ արդեն ճանաչում եմ Հիսուսին՝ որպես իմ անձնական Փրկիչ: Եվ նա խնդրեց միասին աղոթել:

Այդ հեռախոսազանգն ինձ հիշեցրեց Աստվածաշնչի մեկ այլ կանչ. Աստված կեսդիշերին կանչեց պատանի Սամուելին (Ա.Թագ. 3. 4-10): Վերջինը երեք անգամ լսեց ձայնը և կարծեց, թե իրեն կանչողը ծեր քահանա Հեղին է: Վերջին անգամ, հետևելով Հեղիի խորհրդին, Սամուելը հասկացավ, որ իրեն կանչողն Աստված է և ասաց.«Խոսի՛ր, Տե՛ր, որովհետև քո ծառան լսում է» (Ա.Թագ. 3.10): Աստված մեզ հետ էլ կարող է խոսել գիշեր, թե ցերեկ: Մենք պետք է «վերցնենք» ու պատասխանենք, ինչը նշանակում է ավելի շատ ժամանակ անցկացնել իր հետ և լսել իր ձայնը:

Հետո մեկ այլ կողմից սկսեցի մտածել այդ «կանչի» մասին: Իսկ գուցե մե՞նք ենք Աստծո Խոսքի պատգամարերը ուրիշների համար: Կարող է մտածենք, որ նրանց օգնելու միջոց չունենք, բայց քանի որ Աստված է առաջնորդում մեզ, մենք կարող ենք զանգահարել մի ընկերոջ ու հարցնել.«Կլինի՞», որ ես այսօր քեզ հետ աղոթեմ»:

**Աղոթք - Սիրելի՛ հայր, հուշի՛ ինձ, որ մտածեմ ուրիշների մասին, ուն ես կարող եմ քաջալերել քո տված իմաստնությամբ: Ամեն:**

**Հեռախոսազանգով որևէ մեկին բաջալերական խոսելը ասելը կարող է խրախուսիչ լինել նրա համար:**

Սահման երգեցեք Տիրոջը, ո՞վ նրա հավատարիմներ, և փառաբանեցեք նրան՝ իր սրբությունը հիշելով: (Սահմ. 30. 4)

## ՓԱՌԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՑՈՒԽԵՆԵՐ

**S**արիներ առաջ, երբ հանգստյան տանը խնամում էի մորս, շնորհակալություն հայտնեցի Աստծուն այն չորս ամիսների համար, որ Նա հնարավորություն տվեց լինել մորս խնամակալը, և խնդրեցի, որ ինձ օգնի վշտիս պահին: Աստծուն փառաբանելու համար ես հաճախ էի պայքարում իմ խառը զգացումների գեմ: Մորս վերջին շնչում չկարողացա զսպել արցունքներս ու շշնջացի՝ Ալելուիա: Հետո ինձ մեղավոր էի զգում այդ ցավալի պահին Աստծուն փառաբանելու համար, մինչև որ տարիներ անց ավելի ուշադիր կարդացի 30-րդ սաղմոսը:

«Տաճարի նվիրագործման համար» երգում Դավիթն Աստծուն փառաբանում է Նրա հավատարմության ու ողորմության համար (Հմ. 1-3): Նա մյուսներին հորդորում է սաղմո՛ս երգել Տիրոջը (Հմ.4): Ապա բացահայտում է, թե ինչպես է Աստված սերտորեն միահյուսում դժվարությունն ու հույսը (Հմ.5): Նա ընդունել էր վշտի և ուրախության ժամանակները, ապահովություն ու խոռվքի ժամանակները (Հմ. 6-7): Նրա օգնության աղերսանքները կապված էին Աստծո հանդեպ իր ունեցած վստահությանը (Հմ. 7-10): Նրա գովարանության արձագանքն այսպիսին եղավ. «իմ սուրգը ցնծության փոխեցիր, իմ քուրձը հանեցիր և ուրախություն հագցրիր ինձ (Հմ.11): Կարծես ընդունելով տառապանքին դիմանալու խորհուրդն ու բարդությունը, նաև ակնկալելով Աստծո հավատարմությունը՝ Դավիթը հայտարարում է Աստծուն իր անվերապահ նվիրվածության մասին (Հմ.12):

Դավիթի նման մենք էլ կարող ենք երգել. «Ո՛վ Տեր իմ Աստված, հավիտյան պիտի փառաբանեմ Քեզ» (Հմ.12):

**Աղոթք - Սիրելի՛ Ջայր, խնդրում եմ՝ օգնի՛ր, որ վստահեմ քեզ ու գովարանեն, երբ զգացումներս խառն են: Ամեն:**

**Մեր խառն զգացումների և դիմագրաված դժվարությունների մեջ Աստված դատրաստ է օգնել մեզ: Ուստի կարելի է փառաբանել Նրան:**

Թող նա ինձ անի այն, ինչ հաճելի է իր աչքին: (Բ. Թագ. 15.26)

## ԶԱՌԻՎԵՐ ճԱՆԱՊԱՐՀ

**Բ**անաստեղծ և հոգեոր խորհրդածությունների հեղինակ Քրիսթինա Ռոսեթը պարզել էր, որ իրեն ոչինչ հեշտ չի տրվել: Ամբողջ կյանքում եղել են նեղություններ, բազում հիվանդություններ, երեք անհաջող ամուսնություն: Ի վերջո նաքաղցկեղից էլ մահացավ:

Իսրայելի ազգային գիտակցության մեջ Դավիթը հաղթական մարտիկի կերպար է: Բայց նա էլ իր ողջ կյանքում հաղթահարել է բազում գժվարություններ: Թագավորության վերջում նրա հարազատ որդին՝ իր վստահելի խորհրդականի և երկրի մեծ մասի հետ ապստամբեց նրա դեմ (Բ.Թագ. 15.1-12): Դավիթն, իր հետ վերցնելով Աբիաթար և Սադովկ քահանաներին ու Աստծո սուրբ տապանակը, փախավ երուսաղեմից (Հմ. 14, 24):

Աբիաթարի՝ Աստծուն զոհեր մատուցելուց հետո, Դավիթը դարձավ Սադովկ քահանային. «Աստծո տապանակը վերադարձո՞ւ քաղաք. եթե ես չնորհ եմ գտել Տիրոջ աչքի առաջ, նա ետ կդարձնի ինձ և ինձ տեսնել կտա այն ու նրա բնակարանը» (Հմ.25): Հակառակ անորոշության՝ Դավիթն ասաց.«Բայց եթե նա ասի.«Ես քեզ չեմ հավանում», ահա՝ ես, թող նա ինձ անի այն, ինչ հաճելի է իր աչքին» (Բ. Թագ. 15.26): Նա գիտեր, որ կարող է վստահել Աստծուն:

Քրիսթինա Ռոսեթը նույնպես վստահեց Աստծուն, և նրա կյանքն ավարտվեց հույսով: Խսկապես, ճանապարհը կարող է զառիվեր լինել, սակայն այն մեզ տանում է դեպի մեր երկնավոր Հայրը, որը մեզ սպասում է գրկաբաց:

**Աղոթք** - Սիրելի Յայր, այս կյանքը երբեմն այնքան դժվար է թվում: Բայց ես վստահում եմ թեզ, որ անես այն, ինչը ճիշտ ես համարում ինձ համար: Օգնի՛ր, որ ապրեմ թու տված հույսով՝ միշտ սպասելով, որ մի օր թեզ հետ եմ լինելու: Անեն:

**Կյանքը միշտ էլ ոլորաններով լի է ու զարիվեր է թվում: Վատահի՛ր Աստծուն, որ թեզ առաջնորդի այդ դժվարին ճանադարիին:**

Միմյանց հետ քաղցր եղեք, գթած՝ միմյանց ներելով, ինչպես որ Աստված էլ քրիստոսի միջոցով ձեզ ներեց: (Եփ. 4.32)

## ՅԱՇՏԱՐԱՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ե**րբ փոքր էինք, ես ու քույրս շատ էինք կռվում ու վիճում, բայց հիշողությանս մեջ հատկապես մի դեպք է առանձնանում: Երկուսս էլ միմյանց վիրավորական բառեր էինք ասում, երբ քույրս իմ կարծիքով աններելի մի բան ասաց: Տեսնելով մեր միջև աճող թշնամանքը՝ տատս մեզ հիշեցրեց իրար սիրելու պատասխանատվության մասին.«Աստված ձեզ մի քույր է տվել: Դուք երկուսդ էլ պետք է միմյանց հանդեպ չնորհք ցուցաբերեք», -ասաց նա: Մենք Աստծուց խնդրեցինք, որ մեզ լցնի սիրով ու հոգատարությամբ: Նա մեզ օգնեց, որ ներենք միմյանց:

Հեշտ է պահել դառնությունն ու բարկությունը, բայց Աստված ուզում է, որ մենք զգանք այն խաղաղությունը, որ կարելի է ունենալ միայն այն ժամանակ, երբ խնդրենք իրեն, որ մեզ ազատի սրտմտությունից ու չարությունից (Եփ. 4.31): Այդ զգացումները կրելու փոխարեն՝ կարող ենք նայել Քրիստոսի ներումի օրինակին, որ ծնվում է սիրուց ու չնորհքից՝ ձգտելով լինել «քաղցր և գթած և միմյանց ներել, ինչպես որ Աստված էլ Քրիստոսի միջոցով մեզ ներեց» (Հմ.32): Երբ կդժվարանանք ներել, եկե՛ք նկատի առնենք այն չնորհք, որ նա տալիս է մեզ: Անկախ նրանից, թե քանի անգամ ենք մենք թերանում, նրա գթությունը երբեք չի սպառվում (Ողբ 3.22):

Աստված կարող է օգնել մեզ, որ մեր սրտից հեռացնենք դառնությունը, որպեսզի ազատ լինենք հույսով և ընկալունակ՝ իր սիրո հանդեպ:

**Աղոթք -Երկնավոր Յայր, շնորհակալ եմ քեզ այն մարդկանց համար, որ դրել ես իմ կյանքում: Օգնի՛ր, որ ունենամ սիրող ու ներողամիտ հոգի: Ամեն:**

**Մարդիկ կվիրավորեն, կնեղեն ու կցավեցնեն մեզ: Կարևոր է, որ Աստծո սիրով մշակենի հաւաքարար հաւաքերություններ:**

Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամ-ների համար: (Հովհ. 15.13)

## ՄԵԾ ՄԵՐ

**Ա**վագ շաբաթից ընդամենը մի քանի օր առաջ, երբ ողջ աշխարհի քրիստոնյաները հիշում են Հիսուսի զոհաբերությունն ու պատրաստվում տոնել Նրա հարությունը, մի ահաբեկիչ ներխուժեց Ֆրանսիայի հարավարևելյան շուկաներից մեկը, կրակ բացելով սպանեց երկու հոգու, շատերին էլ պատանդ վերցրեց: Բանակցություններից հետո ահաբեկիչը բաց թողեց բոլոր պատանդներին՝ բացի մեկից, որին դարձրել էր կենդանի վահան: Ոստիկան Առնո Բելթրամն աներևակայելի արարք գործեց. առաջարկեց փոխարինել պատանդ կնոջը: Հանցագործն ազատ արձակեց կնոջը, բայց առաջացած ծեծկութիւն ժամանակ ոստիկանը վիրավորվեց ու մահացավ:

Ոստիկանին ճանաչող հովիվներից մեկը նրա սիրանքը վերագրեց Հիսուսի հանդեպ ունեցած իր հավատքին՝ մատնանշելով Նրա խոսքերը Հովհաննու 15. 13-ում. «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամների համար»: Դրանք այն խոսքերն էին, որ Քրիստոսն ասաց իր աշակերտներին վերջին ընթրիքից հետո: Նա իր բարեկամներին պատվիրեց, որ «սիրեն միմյանց, ինչպես ինքը նրանց սիրեց» (Հմ.12) և որ մեծագույն սերը ուրիշի համար սեփական կյանքը նվիրելն է (Հմ.13): Դա հենց այն էր, ինչ Հիսուսն արեց հաջորդ օրը, գնաց գեպի խաչը՝ փրկելու մեզ մեղքերից, որովհետև միայն ինքը կարող էր անել դա:

Թերեւս մենք չունենանք Առնո Բելթրամին հետեւելու առիթ: Բայց Աստծո սիրով համակված կարող ենք ծառայել ուրիշներին և Նրա մեծ սիրո մասին պատմել նրանց:

**Աղոթք - Սիրելի՛ Հիսուս,** Դու մեռար ինձ հավիտենական կյանք տալու համար: Թող որ ես երախտապարտ լինեմ այդ նվերի համար և այդ մասին պատմեմ ինձ հանդիպողներին: Ամեն:

**Նման դատմությունները դիմի իրախուսեն, որդեսզի մենք էլ անձնազոհաբար ծառայենք ուրիշներին:**

Պիտի հիշատակեմ Տիրոջ ողորմությունները, Տիրոջ գովաբանությունները: (Ես. 63.7)

## ՅԻՇԵԼ ՈՒ ՓԱՌԱԲԱՆԵԼ

**Ե**րբ մեր եկեղեցու ժողովուրդը կառուցեց առաջին շենքը, մարդիկ ներքին հարդարումից առաջ պատերին ու հատակին երախտագիտական հիշեցումներ էին գրում: Դրանք աստվածաշնչային հատվածներ էին, փառաբանություններ, աղոթքներ, կամ ուղղակի «Դու այնքա՞ն լավն ես» բառերը: Այդ գրություններն այդպես էլ պահպանվել են՝ ցույց տալու համար գալիք սերունդներին, որ անկախ մեր դժվարություններից՝ Աստված միշտ մեր հանդեպ եղել է բարի ու հոգատար:

Մենք պետք է հիշենք, թե Աստված ինչ է արել մեզ համար և այդ մասին պատմենք ուրիշներին: Եսային հենց այդ էր անում, երբ գրում էր. «Պիտի հիշատակեմ Տիրոջ ողորմությունները, Տիրոջ գովաբանությունները՝ ըստ այն ամենի, որ Տերն արեց մեզ համար» (Ես. 63.7): Ավելի ուշ մարդարեն պատմում է նաև իր ժողովրդի հանդեպ Աստծո կարեկցության մասին. «Նրանց բոլոր նեղությունների մեջ նեղություն քաշեց» (Հմ.9): Եթե շարունակենք կարդալ գլուխը, կնկատենք, որ իսրայելը դարձյալ հայտնվել է դժվար ժամանակներում, և մարդարեն խնդրում է Աստծո միջամտությունը:

Անցյալում Աստծո կատարած բարությունները հիշելը կօգնի նեղությունների պահին: Դժվարությունները գալիս են ու անցնում, իսկ Նրա հավատարիմ բնավորությունը երբեք չի փոխվում: Երբ մենք երախտապարտ սրտով դիմում ենք Նրան՝ հիշելով իր արածները, բացահայտում ենք, որ Նա միշտ արժանի է փառաբանության:

**Աղոթք - Յայր,** Դու ես իշխում ամբողջ ստեղծագործության վրա: Գովաբանում եմ թեզ, որովհետև Ձո բարությունը չի փոխվում, և Դու միշտ ինձ հետ ես: Անեն:

**Անցյալում Աստված մեզ միշտ բարիք է դարձել: Ուստի գովաբանեն Նրան այսօր, երբ դարձյալ դժվարին ժամանակներում ենք աղրում:**

Նրանց վրա պիտի բերեմ այն ամբողջ բարիքը, որ ես խոստացել են նրանց: (Եր. 32. 42)

## ԱՊԱԳԱ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

**Ա**ռաւան չորս տարեկանում կորցրեց մորը: Շատ չանցած՝ նրա քույրերն ու եղբայրները զրկվեցին նաև տնից և դարձան թափառաշրջիկ: Տարիներ անց Սառան որոշեց իր երեխաների համար ստեղծել կայուն ժառանգություն, որ հնարավոր լիներ փոխանցել սերնդեսերունդ: Նա տքնածան աշխատում էր՝ իր ընտանիքին տալու համար այն տունը, որ ինքը երբեք չէր ունեցել:

Անհայտ ապագայի, սերունդների համար տուն ապահովելու նպատակով ներդրումներ անելը հավատքի գործ է: Բարեկոնացիների կողմից երուսաղեմը պաշարելուց անմիջապես առաջ Աստված Երեմիային ասաց, որ մի հողակտոր գնի (Եր. 32. 6-12): Մարգարեի համար Աստծո հրահանգը տեղին չէր, քանի որ շուտով իրենց ողջ ունեցվածքը պիտի բռնագրավեին:

Բայց Աստված Երեմիային տվել էր այսպիսի՝ խոստում. «Ինչպես որ այս ժողովրդի վրա այս ամբողջ մեծ չարիքը բերեցի, նրանց վրա պիտի բերեմ այն ամբողջ բարիքը, որ ես խոստացել եմ նրանց» (Հմ. 42): Մարգարեի ներդրումը կալվածքի մեջ Աստծո հավատարմության նշանն էր այն խոստման, որ մի օր անպայման խրայելցիներին է վերադարձնելու իրենց հայրենիքը: Նույնիսկ սարսափելի հարձակման ժամանակ Աստված խոստացել էր իր ժողովրդին, որ նորից խաղաղություն է գալու, տներ ու կալվածքներ են գնվելու ու վաճառվելու (Հմ. 43-44): Այսօր մենք կարող ենք վստահել Աստծո հավատարմությանը և «ներդրում անել» հավատքի վրա: Հնարավոր է, որ մենք չտեսնենք իրավիճակի փոփոխությունը, բայց վստահ պետք է լինենք, որ նա մի օր անպայման ամեն ինչ կճշտի:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, օգնի՛ ինձ այսօր, որ ներդրումներ կատարեն անհայտ ապագայի համար: Ամեն:

**Կյանքի իրավիճակները կարող են ստիղել, որ չտեսնենք Ասծոն հավատարմությունը, բայց Երա խոստացած վերականգնումի լույսի ներքո կարելի է «ներդրումներ անել»:**

«Ո՞ւմ հանար եմ ես աշխատում և իմ անձը զրկում բարիքից»: (ժող. 4.8)

## ՎԱՐՉՈՒ ԲԱՐԵԿԱՍ

**Ա**շխարհում գնալով ավելանում են միայնակ մարդիկ: Ամերիկայում բարեկամ չունեցողների թիվը 1990թ-ից այս կողմ քառապատկվել է: Որոշ եվրոպական երկրներում այդ թիվը 20 տոկոս է կազմում, իսկ Ճապոնիայում որոշ տարեցներ նույնիսկ հանցանք են գործում, որպեսզի կարողանան մտերմանալ բանտարկյալների հետ:

Որպես միայնակության այս համաճարակի «լուծում»՝ որոշ նախաձեռնողներ առաջարկում են բարեկամ վարձել: Ժամաֆճարով վարձված այդ մարդիկ իրենց շահառուի հետ հանդիպում են սրճարանում, զրուցում, ուղեկցում որևէ հավաքույթի: Այդպիսի «մի բարեկամի» հարցըին, թե ովքեր են իր օգնությունից օգտվողները: Պարզվեց՝ 30-40 տարեկան մասնագետներ, որոնք երկար ժամանակ աշխատում են և ժամանակ չունեն բարեկամներ ունենալու համար: Ժողովողի 4-րդ գլխում նկարագրվում է մի մարդ, որը միայնակ է՝ «չունի ո՛չ որդի և ո՛չ եղբայր»: Նա անդադար աշխատում է, բայց նրա աչքը չի կշտանում հարստությամբ (Հմ.8): Եվ նա հարցնում է՝ «Ո՞ւմ համար եմ ես աշխատում և իմ անձը զրկում բարիքից» (Հմ.8): Արթնանալով իր ծանր վիճակից՝ նա հասկանում է, որ ավելի լավ է բարեկամ ու լծակից ունենալ, որով կթեթևանա ծանրությունը, ավելի հեշտ կհաղթահարվեն դժվարությունները (Հմ. 9-12): Որովհետև ի վերջո հաջողությունն առանց բարեկամի «ունայնություն է և չար զբաղմունք» (Հմ.8): Ժողովողն ասում է, որ «եռապատիկ թելը շուտ չի կտրվի» (Հմ.12), բայց ոչ էլ արագ կհյուսվի: Որովհետև իսկական բարեկամներին չեն վարձում: Հարկավոր է ժամանակ տրամադրել այդպիսիք ձեռք բերելու, ձեավորելու համար: Աստված էլ, որպես երրորդ շարան, ամուր կհյուսի մեզ:

**Աղոթք - Յայր, օգնիր ինձ, որ լինեմ հավատարիմ ու լավ բարեկամ: Ամեն:**

**Լավ բարեկամին ոչ թե «վարձել» է դեմք, այլ ժամանակ ու զանի ներդնելով՝ ծեռք բերել:**

Հետևում թողածը մոռանալով՝ դեպի առջևում եղածներն են ձգտում: Հետևում են նպատակակետին: (Փիլ. 3. 13-14)

## ՀԻՍՈՒՍԻՆ ՀԵՏԵՎԵԼ

**Ա**նտառում վագելիս, փորձելով ավելի կարճ ճանապարհ գտնել, իջա անծանոթ կածանով: Քիչ անց դիմացից եկող վազորդին հարցըի, թե արդյո՞ք ճիշտ եմ գնում: «Այո» վստահ պատասխանեց անծանոթն ու տեսնելով կասկածամիտ հայցքս՝ ավելացրեց. «Մի՛ անհանգստացիր, ես փորձել եմ սխալ ուղիները: Դա բնական է, և այդ բոլորը վագքի մի մասն են»:

Որքա՞ն նման է այդ նկարագրությունը իմ հոգեւոր ճամփորդությանը: Քանի՛ անգամ եմ շեղվել Աստծուց՝ փորձությունների ու ձախողված կյանքի պատճառով: Բայց Աստված ներել է ինձ և օգնել, որ առաջ գնամ՝ անշուշտ իմանալով, որ կրկին սայթաքելու եմ: Աստված շատ լավ գիտե սխալ ճանապարհով գնալու մեր միտումը: Բայց նա միշտ պատրաստ է ներելու, եթե իհարկե խոստովանենք մեր մեղքերն ու թույլ տանք, որ նրա Հոգին փոխի մեզ:

Պողոսը նույնպես գիտեր, որ այդ ամենը հավատքի ճամփորդության մի մասն է միայն: Լիովին գիտակցելով իր մեղավոր անցյալն ու ներկա թուլությունները՝ նա հասկանում էր, որ քրիստոնեական կատարելության հասնելու համար գեռ ճանապարհ ունի անցնելու (Փիլ. 3.12): Նա ասում է. «Հետևում թողածը մոռանալով՝ դեպի առջևում եղածներն եմ ձգտում: Հետևում եմ նպատակակետին» (հմ. 13-14): Սայթաքումը Աստծո հետ քայլելու մի մասն է, մեր սխալների շնորհիվ է, որ նա մաքրում է մեզ: Նրա շնորհքը մեզ հնարավորություն է տալիս առաջ գնալու՝ որպես Աստծո ներված զավակներ:

**Աղոթք - Փա՛ռք թեզ, Աստված, Քո ողորմության համար: Օգնի՛ ինձ, որ թեզ գոհացնող կյանք ապրեն: Իմանալով, որ Քո Հոգին գործում է իմ մեջ, փոխակերպի՛ ինձ Քո Որդու նմանությամբ:**

**Ամեն:**

**Եթե խոստվանենք մեր մեղերն ու սխալները, Նա հավատարմորեն կների ու բարին հետաղնդելով՝ կուղղի մեր ճանադարիք:**

Նրա ձեռքին են երկրի խորքերը: (Սահմ. 95.4)

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄ

**Ա**շխարհի ամենախոր՝ Կրութերի կամ Ագուավների քարանձավը Վրաստանի Գագրայի շրջանում է: Հետազոտողների մի խումբ ուսումնասիրել է ուղղահայաց քարայրի խորքերը՝ հաղթահարելով մինչև 2197 մետր խորության մութն ուսարսափը: Երկրագնդի վրա գոյություն ունի այդպիսի 400 քարանձավ, և նորերն են հայտնաբերվում:

Դրանցով շարունակում են բացահայտվել ստեղծագործության նորանոր գաղտնիքներ՝ ավելացնելով մեր ըմբռնումները տիեզերքի մասին, միաժամանակ մեր զարմանքը Աստծո ձեռքի աշխատանքի՝ նրա անզուգական ստեղծագործության հանդեպ, որի նկատմամբ հոգատար լինելու կոչ է արել նա մեզ (Ծնն. 1. 26-28):

Սաղմոսերգուն բոլորիս հրավիրում է, որ «ցնծանք Տիրոջով, երգերով ուրախության աղաղակ բարձրացնենք նրան, որով հետեւ Տերը Մեծ Աստված է» (Սաղմ. 95.1-3): Վաղը նշելով երկրի օրը՝ եկե՛ք նկատի ունենանք Աստծո արարչագործության անհավատալի գործը: Այն ամենը, ինչ կա երկրի վրա, անկախ նրանից, հայտնաբերված է այն, թե ոչ, առիթ է երկրպագելու նրան (Հմ.6):

Նա գիտե ոչ միայն իր հսկայական ստեղծագործության բոլոր վայրերը, այլև մեր սրտի խորքերը: Վրաստանի քարանձավի հետազոտողների նման մենք էլ ենք անցնում կյանքի մութու սարսափելի եղանակների միջով: Եվ գիտենք, որ նույնիսկ այդ պահերին Աստված պահում է իր հզոր ու քնքուշ հոգածությունը:

**Աղոթք - Արարիչ աստված, օգնի՛ր ինձ վստահելու իմ հանդեպ Զո հոգատարությանը նույնիսկ ամենամութ տեղերում: Ամեն:**

**Կյանքում անխուսափելի է մութ ու սարսափելի վայրերով անցելը, սակայն կարենո՞ւ է Աստծո հոգածությանն աղավինելը:**

Որովհետև դու, Տե՛ր, բարի ես և ներող և ողորմությամբ հարուստ բոլոր քեզ կանչողների համար: (Սաղմ. 86.5.)

## ՆԵՐՄԱՆ ՈՒԺԸ

**Հ**Օ21-ի լրատվական հաղորդումները պատմեցին, որ մի ավագակախումբ առևանգել էր տասնյոթ միսիոներների և սպառնում էր նրանց սպանել, եթե չփճարվեր իրենց պահանջած փրկագինը: Ի վերջո բոլոր միսիոներները կամ ազատ արձակվեին, կամ էլ կարողացան փախչել: Հասնելով ապահով վայր՝ նրանք իրենց առևանգողներին այսպիսի պատգամ ուղարկեցին. «Հիսուսը մեզ խոսքով և իր օրինակով սովորեցրել է, որ ներող սիրո ուժն ավելի զորեղ է, քան բռնի ուժն ու ատելությունը: Ուստի մենք ներում ենք ձեզ»:

Հիսուսը այսպես է բացատրում ներման ուժի էությունը. «Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների» (Մատթ.6.14): Ավելի ուշ, պատասխանելով Պետրոսի այն հարցին, թե քանի անգամ ինքը կարող է ներել իր եղբորը՝ մինչև յո՞թ, Հիսուսն ասում է. «Քեզ չեմ ասում՝ մինչև յոթ անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթ» (18. 22, տե՛ս հմ.21-35): Նա աստվածահաճո ներողամտություն դրսեորեց անգամ խաչի վրա՝ ասելով. «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23.34):

Ներողամտությունն ամբողջությամբ կիրականանա, եթե երկու կողմն էլ շարժվեն դեպի հաշտություն: Չնայած դրանով չեն վերանում եղած վնասի հետևանքներն ու անառողջ հարաբերությունների մեջ խորանալու անհրաժեշտությունը, բայց շարժ կիրի դեպի նորացված հարաբերություններ, ինչը կվկայի Աստծո սիրո և զորության մասին: Եկե՛ք որոնենք «ներողամտություն ցուցաբերելու» ուղիները:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, օգնի՛ր հասնելու նրանց, ովքեր ին ներման կարիքն ունեն՝ որպես բարության ու ուժի վկայություն: Ամեն:**

**Դժվար է ներել բոլորին: Սակայն Սուրբ Յոգին օգնում է մեզ, որդեսզի կարողանանք ներել նույնիսկ աններելին:**

Որդյակներ, խոսքով ու լեզվով չսիրենք, այլ գործով ու ճշմարտությամբ: (Ա.Յովհ. 3. 18)

## ՍԻՐԵԼ ՀԻՍՈՒՏՈՒՄ՝ ՆՄԱՆ

**Ω**ռքջիա նահանգի Ատլանտա քաղաքի երկաթուղային կայարանում պաշտոնական հագուստով գնացքի սպասող երիտասարդը նստեց նստարանին ու փորձում էր կապել փողկապը: Տարեց մի կին իր ամուսնուն հորդորեց օգնել երիտասարդին: Երբ տղամարդը թեքվեց դեպի երիտասարդն ու սկսեց բացատրել, թե ինչպես են կապում փողկապը, մի անձանոթ լուսանկարեց եռյակին: Համացանցում տարածված լուսանկարը մեկնաբանողները գրում էին պատահական բարության ուժի մասին:

Հիսուսին հավատացողների համար ուրիշների հանդեպ կատարված բարությունն արտացոլում է այն անձնուրացությունը, որ Հիսուսը ցուցաբերեց մարդկանց նկատմամբ: Դա Աստծո սիրո արտահայտությունն է և այն ցանկությունը, որ Նա հայտնեց իր աշակերտներին. «Սա է պատվիրանը, որ միմյանց սիրենք» (Ա.Հովհ. 3.11): Հովհաննեսը եղբորը կամ քրոջն ատելը հավասարեցնում է սպանության (Հմ.15), և որպես գործով ցույց տրված սիրո արտահայտություն՝ հիշում Հիսուսի օրինակը (Հմ.16):

Անշահախնդիր սերը չպետք է լինի զոհաբերության շռայլ ցուցադրում: Այդպիսի սերը մեզանից պահանջում է ընդունել Աստծո պատկերը կրողների արժեքը և նրանց կարիքները վերդասել մերինից: Սովորական թվացող այդ պահերին մեր ցուցաբերած օգնությունն անշահախնդիր է, եթե սիրուց է մղված: Երբ մենք տեսնենք մեր անձնական տարածքից այն կողմ, դուրս կդանք մեր հանգստավետ գոտուց և կծառայենք ուրիշներին, կտանք, այն է՝ կսիրենք Հիսուսի նման:

**Աղոթք - Սիրոն՝ Յայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ մարդկանց տեսնեմ կարեկից ու անձնուրացության պատրաստ սրտով և սեր ցուցաբերեն, որտեղ էլ ուղարկես: Անեն:**

**Հիսուսը անձնուրաց սիրով սիրեց մեզ: Յետևար մենի էլ, որդես իր աշակերտները, նման սեր ցուցաբերեն ուրիշների հանդեղ:**

«Ահա ես ձեր մեջ շունչ պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք»:  
(Եղ. 37. 5)

## ՇՆՋՈՂ ՉՈՐ ՈՍԿՈՐՆԵՐԸ

**1** 915թ. ապրիլի 24-ը հայ ժողովրդի պատմության սկ էջերից է, երբ ավելի քան 300 ղեկավարներ ու մտավորականներ ձերբակալվեցին ու սպանվեցին: Այնուհետև սկսվեց հայ ժողովրդի ջարդն ու տարագրումը: Մի ամբողջ ժողովուրդ մեռնում էր արհավիրքի ճամփեքին՝ իր հետևից թողնելով ոսկորներ: Ցեղասպանության ու կոտորածների հետևանքը եղավ ավելի քան մեկուկես միլիոն անմեղ հայի նահակատությունը: Աստվածաշնչում նույնպես կա նման պատկեր Խսրայելի ժողովրդի մասին: Եզեկիել մարգարեն Սր. Հոգու առաջնորդությամբ հայտնվում է մի դաշտում, որտեղ սփռված էին անթիվ ոսկորներ, և պտտվում է դրանց շուրջը: Հոգին հարցնում է նրան. «Մարդու որդի, մի՞թե կկենդանան այս ոսկորները» (Եղ. 37.3): Ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը կկարողանա՞ վերակենդանանալ: Գիտե միայն Աստված:

Խսրայելի ժողովրդի պարագայում դաշտում սփռված ոսկորները Աստծո կամքով ու մարգարեի միջոցով կենդանություն են ստանում: Աստված շարժում է դրանք, մոտեցնում իրար, շունչ տալիս, և դրանք վերակենդանանում են: Նույնը կարող է տեղի ունենալ հայ ժողովրդի դեպքում, որովհետև Աստված խոստանում է վերականգնել: Այսքան ժամանակ, քանի դեռ Հոգին կենդանի է և Աստծո մոտ է, մարմինը Աստծո կամքով հարություն կառնի: Մեր հույսն Աստված է, որը վերակենդանացնում է մեռած ու սպանված մարմինը՝ նրա մեջ դնելով կենդանության հոգի: Աստված խոստանում է ոտքի կանգնեցնել, և այդ ժամանակ չորացած ոսկորները կշնչեն:

Աղոթք - Կենսատու Աստված, Դու ես մեր հույսը, Վստահությունն ու ապավենը: Որդուն՝ Տեր Յիսուս Քրիստոսի միջոցով կարող ենք մեր մեջ կենդանության շունչ ստանալ: Ամեն:

**Անհույս ու անկարելի բաները Աստծո համար անհնար չեն: Նա եր գորությամբ կարող է մեզ կենդանացնել ու չորացածին կյանի դարձել:**

Մարմնի մասին մի՛ հոգացեք ցանկությունը բավարարելու համար: (Հօդ. 13.14)

## ԹՈՇՆ

**Ա**վգուստինոս Երանելու «Խոստովանություններ» վերտառությամբ գրքում նկարագրվում է հեղինակի՝ դեպի Հիսուս տանող երկար ու ոլորապտույտ ճանապարհը: Մի օր հերթական անգամ նա գնում է պալատ՝ կայսեր համար գովասանքի ու շողոքորթության խոսքեր ասելու: Առաջին անգամ իր վաստակած ծափահարությունները նրան խարուսիկ են թվում, երբ նկատում է, որ մի հարբած մուրացկան ուրախ կատակում է ու ծիծաղում: Հասկանում է, որ այդ մարդը, ավելի քիչ ջանք թափելով, արդեն իսկ ունի այդպիսի անցողիկ երջանկություն: Եվ նա դադարում է աշխարհիկ հաջողության ձգտել: Բայց դեռ ստրկացած էր մնում կրքին: Իմանալով, որ առանց մեղքից հրաժարվելով՝ չի կարող դառնալ դեպի Հիսուսը, նա մկնեց պայքարել անբարոյականության դեմ, աղոթեց. «Տո՛ւր ինձ պարկեշտություն»: Սակայն այդ հարցում դեռ հաստատակամ չէր: Նա անդադար սայթաքում էր կորսված փրկության ու մեղքի միջև, մինչև որ վերջապես վճռեց փոխվել: Ոգեշնչված դեպի Հիսուսը դարձած շատերի օրինակով՝ բացեց Սր. Գրքի՝ Հոռմեացիներին ուղղված նամակի 13. 13-14 հատվածը. «Պարկեշտությամբ շրջեք, ոչ թե անառակություններով ու հարբեցողությամբ, անկողնային խառնակությամբ ու պղծություններով, ոչ Հակառակությամբ, ոչ էլ նախանձով: Զգեստավորվե՛ք Տեր Հիսուս Քրիստոսով ու մարմնի մասին մի՛ Հոգացեք ցանկությունը բավարարելու համար»:

Աստված, լսելով այդ ներշնչված խոսքերը, կտրեց Ավգուստինոսի ցանկության շղթաները և նրան տեղափոխեց «Իր սիրելի Որդու արքայության մեջ, որի միջոցով ունենք փրկություն՝ մեղքերի թողություն» (Կող. 1.13-14): Ավգուստինոսը դարձավ եպիսկոպոս: Նա արդեն գիտեր՝ ում դիմել փառքի ու ցանկության գայթակղության պահերին: Նա դարձավ դեպի Հիսուսը: Իսկ դո՞ւ:

**Աղոթք - Յա՛յր, թող ոչինչ չլինի իմ ու քո միջև: Ամեն:**

**Խանգարող բաները մեզ հետ են դահում Յիսուսից: Բայց մեր կյանքը կարող է փոխվել, եթե մենք կամենանք:**

Այն քարը, որ շինարարներն անարգեցին, դարձավ անկյունաքար: (Սաղմ. 118.22)

## ՀՅՈՒ ՈՒ ԲԱՐԻ

Համալսարանի հոգեոր տեսուչը անհանգիստ էր: Նա ավելի հակասական տեսք ստացավ, երբ ես հարցրի, թե արդյո՞ք ինքը Պողոսի ասածի նման անդադար աղոթում է Աստծո առաջնորդությունն ստանալու համար: Ի պատասխան՝ երիտասարդը խոստովանեց, որ ինքն այնքան էլ վստահ չէ, որ Աստվածած լսում է իրեն, և չի հավատում աղոթքի զորությանը: Փաստորեն այդ երիտասարդ ղեկավարի ծառայությունը ձախողվում էր, որովհետև նա մերժում էր Աստծուն:

Հիսուսը, որպես եկեղեցու անկյունաքար, միշտ էլ մերժվել է, սկսած իր ժողովրդից (Հովհ. 1.11) և մինչև այսօր, երբ շատերն իրենց կյանքն ու աշխատանքը կառուցում են սեփական ծրագրերի, երազանքների անհուսալի հիմքերի վրա: Բայց մեր զորությունն ու պաշտպանությունը մեր բարի Փրկիչն է միայն (Սաղմ. 118.14): Հիրավի, «այն քարը, որ շինարարներն անարգեցին, դարձավ անկյունաքար» (Հմ. 22):

Մեր կյանքի կարևոր անկյունում դրված՝ նա հայթայթում է միայն ճիշտ դասավորումներ հանուն այն բանի, ինչ ձգտում ենք կատարել իր համար: Հետեւաբար՝ մենք աղոթում ենք.«Օ՛, Տե՛ր, փրկի՛ր, օ՛, Տե՛ր, հաջողություն տո՛ւր» (Հմ. 26):

Ծնորհակալություն հայտնենք Նրան, որովհետև նա հզոր է ու բարի:

**Աղոթք -**Տե՛ր Հիսուս, փառաբանում ենք քեզ՝ գլխավոր անկյունաքարը լինելուդ համար: Միայն քեզ վրա կարող են իհմնվել քո եկեղեցին և մեր ծրագրերը: Ամեն:

**Ի՞նչ երազանեներ կամ ծրագրեր ունեն Ասծոն համար կատարելիք:**  
**Ի՞նչո՞ւ կարող են, որդես այդ ծրագրերի անկյունաքար, Քրիստոսին դնել և կառուցել իր համար:**

Սակայն ասում եմ. «Հոգով ընթացեք ու մարմնի ցանկությունը մի՛ կատարեք»: (Գաղ. 5.16)

## ԶՐԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԸ

**Ա**յս գարնանը մոլախոտերն այնքան էին շատացել, ասես Յուրայան այգուց եկած լինեին: Մեկն այնքան էր մեծացել, որ երբ փորձեցի պոկել, քիչ մնաց վնասվեի: Մինչ բահը կրերեի, որ այն արմատախիլ անեմ, նկատեցի, որ դուսարս ջուր էր լցնում դրանց վրա: Իմ զարմացած հարցին էլ անպատկառորեն պատասխանեց, թե ուզում է տեսնել՝ որքան կմեծանան: Մոլախոտերը չենք խնամում, բայց մեր հոգեոր կյանքի «որոմները» երբեմն ջրում ենք՝ սնուցելով մեր ցանկությունները, որոնք խեղդում են մեր աճը:

Պողոս առաքյալն այդ մասին գրում է գաղատացիներին ուղղված նամակի 5. 13-26-ում, որտեղ նա մարմնով ապրելը հակադրում է հոգով ապրելուն: Նա ասում է, որ միայն կանոններին հետեւելը չի կարող ապահովել մեր երազած «որոմներից զերծ» կյանքը: Մոլախոտերին սնունդ տալուց խուսափելու համար մեզ սովորեցնում է «Հոգով ընթանալ» և ավելացնում, որ Աստծո հետ կանոնավոր քայլելը մեզ կօգնի «մարմնի ցանկությունը չկատարել» (Հմ.16):

Պողոսի ուսմունքը հասկանալը ամբողջ կյանքի գործ է: Իսկ ես սիրում եմ նրա տված առաջնորդության պարզությունը. փոխանակ մեր անձնակենտրոն ցանկությունները սնուցելու և անցանկալի բաներ աճեցնելու՝ հարկավոր է զարգացնել հարաբերությունն Աստծո հետ: Այդպիսով կաճեցնենք ու կբաղենք աստվածապաշտ կյանքի բերքը (Հմ.22-25):

**Աղոթք - Հայր, երբեմն ես էլ եմ ջրում կյանքի որոմները: Օգնի՛ր ինձ, որ դրա փոխարեն քայլեմ թեզ հետ, երբ Դու իմ մեջ հոգևոր պոտուղ ես աճեցնում: Ամեն:**

**Մեր հոգենոր կյանում ածող վնասակար բաներից ազատվելու համար դեմք է Աստծո հետ խայլ դահել՝ խնդրելով նրա օգնությունը:**

Աստված ծիծաղեցրեց ինձ, ով որ լսի, կծիծաղի: (ԾՆ. 21.6)

## ԲԱՐՁՐ ԾԻԾԱՂԵԼ

**Ա**մերիկացի կատակերգու Զոն Բրանյանն ասել է. «Ծիծաղը մեր գաղափարը չի եղել: Այն մեզ տվել է Աստված, որովհետև նա գիտեր, որ մենք ծիծաղի կարիք ունենալու ենք: Նա գիտեր, որ գժվարություններ են լինելու, մարտահրավերներ... Հետևաբար ծիծաղն ու խնդությունը նրա պարգևն են»:

Աստծո ստեղծած արարածներին մի հայացք ձգելով անգամ կարելի է ծիծաղելի բազում օրինակներ գտնել հենց միայն դրանց տարօրինակությունների պատճառով. ավստրալիական բաղ, կապիկներ, ջրասամույրներ... Աստված օվկիանոսում ապրող կաթնասուն է ստեղծել և թռչել չիմացող, երկարոտն թռչուններ: Սա նշանակում է՝ Աստված հումորի գգացում ունի, և մենք էլ, որ ստեղծված ենք իր պատկերով, նույնպես ունենք ծիծաղելու, ուրախանալու անհրաժեշտություն:

Ծիծաղել բառին Աստվածաշնչում առաջին անգամ հանդիպում ենք Աբրահամի և Սաուայի պատմության մեջ: Աստված այս տարեց զույգին խոստանում է զավակ պարզեցել. «Նա, որքո մեջքից է գուրս գալու, նա՛ կլինի քո ժառանգը» (ԾՆ. 15.4): Աստված նախապես ասել էր. «Նայի՛ր երկինք և հաշվի՛ր աստղերը....այդքան կլինի քո սերունդը» (Հմ.5): Երբ Սառան 90 տարեկանում վերջապես ծնեց իր որդուն, Աբրամը նրան անվանեց Իսահակ, որ նշանակում է «ծիծաղ»: Սառան ապշում է, որ այդ տարիքում կարողանում է կերակրել նորածին որդուն և բացականչում է. «Աստված ծիծաղեցրեց ինձ, ով որ լսի, կծիծաղի» (Հմ. 21.6): Բայց Աստված նրա թերահավատությունը փոխակերպում է լիակատար ուրախության:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ ինձ ծիծաղ պարգևելուն համար: Անեն:

**Ծիծաղը կամ ուրախությունը լավ դեղամիջոց է: Այն օգնում է մարդուն նույնիսկ կյանքի ամենադժվարին դահերին:**

Քո թագավորությունը հավիտենական թագավորությունն է, և քո իշխանությունը՝ սերնդից սերունդ: (Սաղմ. 145.13)

## ՄԻՇՏ ՎԱՏԱՐԵԼԻ

**Ե**ս մտահոգություններ շատ ունեմ: Հատկապես առավոտներն ամենավատ ժամերն են ինձ համար, որովհետեւ մենակ եմ իմ մտքերի հետ: Այդպիսի խոցելի պահերին ինձ օգնության են հասնում Հաղոսն Թեյլորի հետեւյալ բառերը, որ փակցրել եմ բաղնիքի հայելուն. «Կա՛ կենդանի Աստված: Նա խոսում է Աստվածաշնչում: Նա կատարում է իր բոլոր խոստումները»: Թեյլորի այդ միտքը ձևավորվել է Աստծո հետ երկար տարիներ քայլելու նրա փորձառությունից և մեզ հիշեցնում է, թե ով է Նա և ինչ կարող է անել մեր հիվանդության, աղքատության, մենության կամ վշտի պահերին: Թեյլորը ոչ թե ուղղակի ասում էր, այլ անձամբ զգացել էր նրա վստահելի լինելը: Եվ քանի որ վստահում էր Աստծո խոստումներին և հնազանդ էր նրա պատվիրաններին, Զինաստանում նրա միսիոներության տարիներին հագարավոր չինացիներ նվիրվեցին Հիսուսին:

Աստծո և նրա ուղիներն իմանալու փորձառությունն օգնեց նաև Դավթին հասկանալու, որ նա վստահելի է: Նրա 145-րդ սաղմուր փառաբանության երգ է՝ ուղղված Աստծուն, որը բարի, կարեկից ու հավատարիմ է իր խոստումներին (Հմ.13): Երբ մենք վստահենք ու հետևենք Աստծուն, կդիտակցենք (կամ ավելի լավ կհասկանանք), որ նա է, որ հավատարիմ է իր խոստումներին (Հմ.13): Դավթի պես մենք էլ կպատասխանենք՝ գովաբանելով նրան և ուրիշներին պատմենով նրա մասին (Հմ.10-12): Անհանգստացնող ու տագնապալի ժամանակներ դիմագրավելիս Աստված կարող է օգնել մեզ, որ չխցենք կապը իր հետ, որովհետեւ նա վստահելի է (Եթ.10. 23):

**Աղոթք - Սիրելի՛ Յայր,** շնորհակալ եմ վստահելի լինելուդ և խոստումներդ կատարելու համար: Խնդրում եմ օգնի՛ր, որ հիշեն հավատարմությունդ ամեն օր: Ամեն:

**Մատուցելու շատ դաշտաներ կարող ենք ունենալ: Յատոն Թեյլորի և Դավթի նման եկե՛՛ մենք էլ կսահենի Աստծուն:**

Քսու մարդկանց խոսքերը քաղցր պատառների ննան են: (Առ. 18.8)

## ՀԱՐԺՎՈՂ ՊՈՉԵՐ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐ

**Օ**րաթերթը գրում էր, որ Պեպը սպանել է նահանգապետի կնոջ կատվին: Բայց նա այդպիսի բան չէր արել: Միակ բանը, որի համար նրան կարող էին մեղադրել այն էր, որ ծամել էր նահանգապետի գղյակի բազմոցը:

Պեպը լաբրադոր տեսակի երիտասարդ շուն էր, որը պատկանում էր Փենսիլվանիայի նահանգապետ Գիֆորդ Փինչոսին: Իրականում կենդանին ուղարկվել էր Արևելյան նահանգի քրեական հիմնարկ, որտեղ գրանցել էին նրա տվյալները՝ որպես բանտարկյալ: Լրագրողներից մեկը, լսելով այդ պատմությունը, և հազարավոր ընթերցողներ հավատացել էին, որ այդ շունը կատու սպանող է:

Իսրայելի Սողոմոն թագավորը լավ գիտեր ապատեղեկատվության ուժի մասին, երբ գրում էր.«Քսու մարդկանց խոսքերը քաղցր պատառների նման են, նրանք իջնում են մարմնի խորքերը» (Առ. 18.8): Երբեմն մեր մարդկային էությունը ստիպում է հավատալ ուրիշների մասին ասված ստերին:

Բայց եթե ուրիշները հավատան մեր մասին հորինված չարախոսություններին, Աստված դեռ կարող է օգտագործել մեզ բարի նպատակով: Իրականում նահանգապետը շանն ուղարկել էր բանտ, որպեսզի նա այնտեղի բանտարկյալների հետ բարեկամանա, և Պեպը երկար տարիներ ծառայել էր որպես բուժող կենդանիների առաջնորդ:

Աստծո նպատակները մեր կյանքի համար մնում են, անկախ նրանից, թե ուրիշներն ինչ են ասում կամ մտածում մեր մասին:

**Աղոթք - ՍիրելիՇայր, շնորհակալ եմ, որ ինձ դարձրել ես Ձո զավակը: ՕգնիՇ, որ Ձո սիրո մասին պատմեմ ուրիշներին: Ամեն:**

**Խրախուսվենք, որ Ասծոն վրա չի ազդում մեր մասին մարդկանց մտածածն ու ասածը: Միայն հիշենք Խրա կատարյալ սիրո մասին:**

Միշտ պատրաստ եղեք պատասխան տալու ամեն մեկին, ով ձեր մեջ եղած հույսի մասին հարցնի: (Ա. Պետ. 3.15)

## ՅԱՎԱՏԻ ՍԵՐՄԵՐ

**Ա**նցյալ գարնանը մեր տնամերձ հողամասը վարելուց մեկ օր առաջ սաստիկ քամին գետնին թափեց թխկու սերմերը: Եվ երբ փխրեցնող մեքենան փորեց հողը, այդ սերմերը տարածվեցին ամբողջ բակում: Մի քանի շաբաթ անց դրանք սկսեցին աճել ու չուտով թխկիների մի անտառ գոյացավ:

Երբ ուշադիր հետևում էի այդ երևույթին, զարմացա, որ ընդգամենը մեկ ծառ կարող էր այդպիսի առատ ծլարձակում ունենալ: Այդ փոքր ծառերից յուրաքանչյուրն ինձ համար Քրիստոսով նոր կյանքի մի պատկեր դարձավ, որի մասին ես կարող էի պատմել ուրիշներին: Մեզանից յուրաքանչյուրն էլ ունենում է «մեր մեջ եղած հույսի մասին» (Ա. Պետ. 3.15) պատմելու բազում հնարավորություններ:

Եթե Հիսուսի հույսով «արդարության համար չարչարվենք» (Հմ.14), դա տեսանելի կլինի մեր շրջապատում, իսկ Աստծուն չճանաչողների համար կարող է ուղղակի հետաքրքիր թվալ: Իսկ եթե նրանք խնդրեն ավելին իմանալ, ապա մենք պետք է պատրաստ լինենք նրանց հետ կիսել այն սերմը, որի միջոցով Աստված նոր կյանք է ծնում: Մենք պարտավոր չենք միանդամից՝ հոգևոր փոթորկի նման կիսվել բոլորի հետ: Այլ հեղությամբ ու երկյուղածորեն նետենք հավատքի սերմը այն սրտի մեջ, որը պատրաստ է ընդունելու:

**Աղոթք - Հիսուս, շնորհակալ եմ, որ իմ կյանքում հավատի սերմ ես աճեցնում: Օգնի՛ ինձ, որ կարողանամ իմ հույսի պատճառի՝ թու մասին հայտնել նրանց, ովքեր կիսնդրեն, և թող որ նրանք ածեն թու հանդեպ ունեցած սիրով: Ամեն:**

**Եթե ու մեջ կա հույս, բաժանի՛ այն ուրիշներին:**

Այս է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ իբրև միակ ճշնարիտ Կստօն և նրան, որին ուղարկել են՝ Հիսուս Քրիստոսին: (Հովհ. 17.3)

## ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

«Անմահները» կինոֆիլմի հերոսներից Անգուս Թակն ասում է. «Վինի՛, մի՛ վախեցիր մահից, այլ վախեցի՛ր չապրված կյանքից»: Այս խոսքն ավելի հետաքրքիր է դառնում, եթե իմանում ես, որ դա ասողը չի կարող մեռնել: Թակն ընտանիքը դատապարտված էր անմահության: Երիտասարդ Զեյմս Թակը, որ սիրահարվում է Վինիին, խնդրում է, որ վերջինը նույնպես անմահություն փնտրի, որպեսզի իրենք հավիտայան միասին լինեն: Բայց իմաստուն Անգուսը հասկանում է, որ ուղղակի հավերժ լինելը գոհացում չի կարող տալ:

Հստ ընդունված տեսակետի՝ եթե մենք կարողանայինք հավիտայն առողջ, երիտասարդ ու եռանդուն լինել, իսկապես երջանիկ կլինիկնք: Բայց իրականում դրա մեջ չէ երջանկությունը: Խաչին մոտենալուց առաջ Հիսուսն աղոթեց իր աշակերտների և ապագա հավատացյալների համար՝ ասելով. «Այս է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ իբրև միակ ճշմարիտ Աստծու և նրան, որին ուղարկել ես՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ. 17.3): Մեր գոհացումը կյանքում գալիս է Հիսուսի հանդեպ մեր հավատի միջոցով Աստծո հետ ունեցած մեր հարաբերություններից: Հիսուսն աղոթեց, որ իր աշակերտներն ընդունեն նոր կյանքի օրինակները, որպեսզի «պահեն նրա խոսքերը» (Հմ.6), հավատան, որ նա է իրեն ուղարկել (Հմ.8) և լինեն միավորված, «ինչպես որ մենք ենք միավորված» (Հմ.11): Որպես Քրիստոսին հավատացողներ՝ մենք անհամբեր սպասում ենք նրա հետ ունենալիք մեր հավիտենական կյանքին: Բայց քանի դեռ ապրում ենք երկրի վրա, կարող ենք վայելել «հարուստ և առատ կյանքը» (Հմ. 10.10), որ խոստացել էր նա:

**Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնի՛ր ինձ, որ կառչեմ այն առատ կյանքին, որ Դու ես տվել ինձ: Անեն**

**Այս կյանքում որտե՞ղ է մեր ուրախությունն ու գոհունակությունը: Մենք ինչո՞ւ կարող ենք ցույց տալ նոր՝ Հիսուս Քրիստոսով կյանք:**

Քանզի մենք՝ այս վրանի տակ եղողներս, ծանրություն կրելով հառաջում ենք: (Բ.Կորնթ. 5. 4)

## ՀՈԳՆԱԾ ՎՐԱՆԵՐ

«Վրանը հոգնած է» արտահայտությունը իմ ընկեր Փոլինն է, որը Քենիայի մայրաքաղաք Նյորբերի եկեղեցիներից մեկի հովին է: 2015-ից ի վեր նրանց պաշտամունքներն անցկացվում էին վրանանման մի կառույցում, որի մասին Փոլը գրում է. «Մեր վրանը մաշված է, և անձրեւ ժամանակ ջուրը լցվում է ներս»:

Ընկերոջս այս խոսքերը հիշեցնում են Պողոս առաքյալի ասածը մարդկային էության դյուրաքեկության մասին. «Մեր արտաքին մարդը քայլայվում է.... Քանզի մենք՝ այս վրանի տակ եղողներս, ծանրություն կրելով հառաչում ենք» (Բ.Կորնթ. 4.16. 5. 4): Թեև մեր մարդկային թուլությունները դրսեղրվում են համեմատաբար վաղ տարիքում, սակայն դրանց մասին գիտակցումը գալիս է տարիքն առնելուց հետո: Որովհետև դա կատարվում է ժամանակի ու պայմանների միջոցով: Երիտասարդության կենսուրախությունը դժկամորեն է ենթարկվում ծերության իրականությանը (տե՛ս Ժող.12.1-7): Բայց մեր մարմինները, ասել է թե՝ մեր վրանները, հոգնում են:

Սակայն հոգնած վրանները չպետք է հավասարեցնել հոգնած վստահության հետ: Տարիքի հետ հույսն ու սիրտը չպետք է մարեն: «Դրա համար չենք վհատվում: Թեև մեր արտաքին մարդը քայլայվում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է», -ասում է առաքյալը (Բ. Կորնթ. 4.16): Նա, որ կերտել է մեր մարմինները, իր Հոգու միջոցով այնտեղ տուն է գտել իր համար: Եվ երբ այս մարմինն այլևս չկարողանա ծառայել մեղ, մենք կունենանք «Աստծուց ստեղծված մի բնակավայր՝ անձեռագործ հավիտենական մի տուն երկնքում» (5.1):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Ձո մշտական ներկայության համար: Երբ ես ֆիզիկապես անհանգիստ եմ, օգնի՛ ինձ, որ վստահեմ Ձեզ, նույնիսկ եթե ակնկալում եմ ունենալ հավիտենական բնակարան: Ամեն:

**Քրիստոը կարող է իր Հոգով բնակվել մեր մեջ: Աղոթե՛նք, երբ նեղության ու ծանր վիճակի մեջ ենք:**

Հոսափատը վախեցավ, երեսն ուղղեց դեպի Տերը՝ փնտրելու նրան: (Բ.Մնաց. 20.3)

## ՎԻՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂՈԹՔՈՎ

**Պ**րգիս ողնաշարի վիրահատության կարիք ուներ, և ես չնորհակալություն հայտնեցի նրա փորձառու բժշկին, որը վատահեցրեց, որ ամեն ինչ լավ կլինի, և որ ինքը օգնել է նման խնդիր ունեցող հազարավոր հիվանդների: Այնուամենայնիվ, վիրահատությունից առաջ բժիշկը աղոթեց և Աստծուց խնդրեց, որ այն հաջող անցնի: Դրա համար ես շատ երախտապարտ եմ նրան:

Փորձառու ազգային առաջնորդ Հոսափատը նույնպես աղոթեց ճգնաժամի պահին: Երեք ազգեր միացել ու հարձակվել էին իր ժողովրդի վրա: Ունենալով երկու տասնամյակի փորձառություն՝ Հոսափատն, այնուամենայնիվ, որոշեց հարցնել Աստծուն, թե ինչ անել. «Մեր նեղության մեջ կաղաղակենք դեպի քեզ, և այն ժամանակ գու կլսես ու կազատես մեզ» (Բ. Մնաց. 20. 9): Նա նաև առաջնորդություն խնդրեց՝ ասելով. «Մենք չգիտենք, թե ինչ անենք, որովհետև մեր աչքերը քեզ են ուղղված» (Հմ.12): Լուրջ մարտահրավերի պահին Հոսափատի այս խոնարհ մոտեցումը նրա սիրտը բացեց Աստծո միջամտության առջև, որը եկավ քաջալերանքի ու աստվածային միջամտության տեսքով (Հմ.15-17, 22): Անկախ նրանից, թե որքան փորձառություն ունենք որևէ ասպարեզում, օգնության համար աղոթելը զարգացնում է Աստծո հանդեպ սուրբ ապավինում: Դա հիշեցնում է, որ նա ավելին գիտե, քան մենք, և ի վերջո նա է վերահսկում: Դա մեզ դնում է մի խոնարհ դիրքում, որտեղ նա ուրախ է պատասխանելու և աջակցելու մեզ՝ անկախ նրանից, թե ինչ է լինելու արդյունքը:

**Աղոթք** - ՍիրելիՇայր, շնորհակալություն մեր աղոթքը լսելուդ ու պատասխանելուդ համար: Պաշտում եմ քեզ՝ որպես ամենագետ ու ամենակարող Աստված: Խնդրում եմ օգնիՌ ինձ՝ դիմագրաված յուրաքանչյուր մարտահրավերի մեջ: Ամեն:

**Աղոթքը կենսական է մեզ համար: Մեր դիմագրաված մարտահրավերների ժամանակ աղոթքով դիմենք Աստծուն:**

Մովսեսը վախեցավ և ասաց իր նտքում. «Անշուշտ այս բանն իմացված է»: (Ել. 2. 14)

## ՇՆՈՐՅՔ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

**8** նցող հանցագործության հեղինակը դատապարտվել էր ցմահ ազատազրկման: Բանտարկության տարիներին մարդն իր մենախցում սկսեց հոգեկան ու հոգեոր ապաքինման մի գործընթաց, ապաշխարեց և դարձավ գեպի Հիսուսը: Նրան թույլատրվեց սահմանափակ շփումներ ունենալ այլ բանտարկյալների հետ, որոնցից ոմանք, Աստծո չնորհիվ և այդ մարդու վկայություններով, որպես Փրկիչ ընդունեցին Քրիստոսին ու ներում գտան Նրա միջոցով:

Մովսեսը, որը ճանաչված է որպես մեծ հավատացյալ, նույնպես ծանր հանցագործություն էր կատարել: Տեսնելով, որ «մի եղիպտացի ծեծում է իր երրայեցի եղբայրներից մեկին, նայեց այս ու այն կողմ և տեսնելով, որ մարդ չկա, սպանեց եղիպտացուն և նրան թաղեց ավագի մեջ» (Ել. 2.11-12): Հակառակ այդ մեղքին՝ Աստված Մովսեսին ընտրեց, որ ազատի իր ժողովրդին եղիպտացիների ճնշումներից (3.10): Հռոմեացիներին ուղղված նամակի 5.14-ում կարդում ենք. «Աղամից մինչև Մովսես մահը թագավորեց նույնիսկ Աղամի մեղքի պես մեղք չգործածների վրա»: Հաջորդ համարներում Պողոսն ասում է, որ «Աստծո չնորհը» հնարավորություն է տալիս մեզ, անկախ մեր անցյալի մեղքերի ծանրությունից, փոխվելու և Նրա հետ ճիշտ հարաբերություններ հաստատելու» (Հմ. 15-16):

Մենք կարող ենք մտածել, թե մեր արածները թույլ չեն տա արժանանալ Աստծո ներողամտությանը և օգտագործվել Նրա պատվի համար: Սակայն Հիսուսի չնորհիվ մենք կարող ենք փոխվել և փրկվել՝ օգնելով ուրիշներին, որ նրանք էլ փոխվեն հավիտենականության համար:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ կյանք փոխող քո շնորհքի համար: Ամեն:

**Ասված Իր ընորհենով փոխում է մեզ և ակնկալում, որ մենք կշարունակենք մեր կյանքը՝ որդես փոխված ու նորոգված անձինք:**

Վերադառներ չգտնվեցի՞ն Աստծուն փառք տալու համար, բացի այս այլազգուց: (Դուկ.17.18)

## ՇՆՈՐՉԱԿԱԼ ՄՐՏԵՐ

Հ անսըլ Փարչմընթը դժվարին կացության մեջ էր: Տոկիոյի օլիմպիական խաղերի եզրափակիչ մրցումներին մասնակցելու համար նա սխալ ավտոբուս էր նստել և սխալ տեղ հասել: Ճիշտ մարզադաշտը հասնելու հույսը նա գրեթե կորցրել էր, երբ, բարեբախտաբար, հանդիպեց Տրիժանա Ստոյկովիչ անունով մի կամավորի: Աղջիկը նրան գումար տվեց, որ տաքսի նստեր ու հասներ մրցափայր, և Հանսըլը ժամանակին հասավ, մասնակցեց 110 մետր արգելավագրին ու շահեց ոսկե մեդալ: Ավելի ուշ նա վերադարձավ նույն վայրը՝ անծանոթութուն գտնելու և շնորհակալություն հայտնելու համար:

Հուկասի 17-ում պատմվում է սամարացի մի բորոտի մասին, որը վերադառնում է, որ շնորհակալություն հայտնի Հիսուսին, որը բուժել էր իրեն (Հմ.15-16): Հիսուսը մի գյուղում տասը բորոտների հանդիպեց, որոնք բուժում էին խնդրում: Նա օգնեց բոլորին, բայց շնորհակալություն հայտնելու եկավ միայն մեկը: Նա «վերադարձավ՝ բարձրաձայն փառաբանելով Աստծուն, երեսնիվայր ընկավ Հիսուսի ոտքերի առաջ և գոհություն էր հայտնում» (Հմ.15-16):

Ամեն օր մենք բազմաթիվ ձևերով ստանում ենք Աստծո օրհնությունները: Դա կարող է լինել աղոթքի պատասխան, անծանոթի կողմից ժամանակին ստացված օգնություն: Երբեմն այդ օրհնությունները կարող են լինել ամենասովորական ձևերով: Օրինակ լավ եղանակ բացօթյա գործ անելու համար: Այնպես որ սամարացու նման եկե՛ք հիշենք ու շնորհակալություն հայտնենք Աստծուն՝ մեր հանդեպ ցուցաբերած իր բարության համար:

**Աղոթք - Հայր, Դու այնքան լավ ես վարվում ինձ հետ:**  
**Շնորհակալ են քո արած բոլոր բարությունների համար: Ամեն:**

**Երախտագետ լինենք և շնորհակալություն հայտնենք Աստծուն այսօր:**

Տերն ինձ ուղարկել է դարմանելու բեկված սիրտ ունեցողներին: (Ես. 61.1)

## ՆԵՐՔՈՒՄ ԱՊԱՔԻՆՎԵԼ

**Գ**արսոնը միշտ բազմազբաղ էր. գնում էր որսի, ձկնորսության, հեծանիվ ու չմուշկ էր վարում: Սակայն մի անգամ հեծանվով վթարի ենթարկվեց ու գամփեց անվասայլակին: Բնականաբար, տղան շատ էր ճնշվել ու իր ապագան տեսնում էր միայն մոռայլ գույներով: Մի օր նրա ընկերներն ստիպեցին, որ դարձյալ որսի գնա: Համաձայնեց ու որոշ ժամանակ անց մոռացավ իր վնասվածքի մասին, սկսեց վայելել շրջապատի գեղեցկությունը: Այդ փորձառությունը նրան ներքին ապաքինում տվեց ու ոգեշնչեց գտնել կյանքի նոր նպատակ, այն է՝ իր փորձը փոխանցել ուրիշներին: Դրա համար նա հիմնեց «Որսալ՝ բուժվելու համար» բարեգործական կազմակերպությունը: Գարսոնը համոզված էր, որ իր հետ պատահածը «քողարկված օրհնություն» էր, և այժմ ինքը ուրախությամբ կարող է վերադարձնել այն, ինչի մասին միշտ երազել է: Նա ոգենորում էր ծանր հաշմանդամություն ունեցողներին ու նրանց խնամողներին՝ ապաքինվելու ճանապարհին:

Եսայի մարգարեն կանխատեսել էր Մեկի գալուստը, որը դարմանելու էր բեկված սիրտ ունեցողներին ու մխիթարելու սգավորներին (Հմ.61.1-2): Սուրբ Գիրքը կարդալով իր հայրենի քաղաքի ժողովարանում՝ Հիսուսն ասում է. «Այսօր այս գրվածքը կատարվեց, որ ձեր ականջներով լսեք» (Ղուկ. 4.21): Հիսուսն եկավ մեզ փրկելու և լիովին առողջացնելու:

Կարիք ունես ներքին ապաքինմա՞ն: Դիմի՛ր Հիսուսին: Նա քեզ կտա «գովարանության պատմուճան՝ հուսահատ հոգու փոխարեն» (Ես. 61. 3):

**Աղոթք - Ծնորհակալ եմ, Յիսո՛ս, այն բժշկության համար, որ Դու բերեցիր ինձ և շատ ուրիշների: Անհամբեր սպասում եմ մի օր երկնքում լիակատար ապաքինում ստանալուս: Ամեն:**

**Ծնորհակալ եմ, Յիսո՛ս, այն բժշկության համար, որ Դու բերեցիր ինձ և շատ ուրիշների: Անհամբեր ստասում եմ մի օր երկնքում լիակատար ապաքինում ստանալուս: Ամեն:**

Ես էլ, որ սկզբից ճշգրտորեն հետևում էի ամեն բանի, ուզեցի կարգով գրել քեզ: (Ղուկ. 1.3)

## ՃՇԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՌՈՂՆԵՐԸ

**Մ**ի կին պատմեց, որ իրենց եկեղեցին պառակտվել է այն պատճառով, որ անհամաձայնություն է եղել երկրի ձևի շուրջ: Մի քանի ամիս անց էլ լուր տարածվեց, որ մի քրիստոնյա զինված ներխուժել էր ճաշարան՝ իրը փրկելու երեխաներին, որոնք նրանց ասելով բռնության էին ենթարկվում հետեւի սենյակներից մեկում: Իրականում հետեւի սենյակ չկար: Ուստի այդ մարդը ձերբակալվեց; Երկու դեպքում էլ մարդիկ գործել էին դավադրության տեսությամբ, որ տեսել ու կարդացել էին համացանցում: Հիսուսին հավատացողները լավ քաղաքացի լինելու կոչում ունեն (Հոռմ. 13.1-7), իսկ լավ քաղաքացիները ապատեղեկատվություն չեն տարածում: Հուկասի ժամանակներում Հիսուսի մասին բազում պատմություններ էին վերաշարադրվում (Հուկ. 1.1), որոնց մի մասը ճիշտ չէր: Հուկասը, փոխանակ իր լսածները փոխանցելու, դարձավ յուրատեսակ հետազոտող լրագրող ու խոսեց ականատեսների հետ (Հմ. 2), «սկզբից ճշգրտորեն հետեւում էր ամեն բանի» (Հմ. 3) և ավետարանում գրում էր իր գտածները, որոնք հիմնված են գիտուն մարդկանց ասածների և ոչ թե չստուգված պնդումների վրա:

Մենք էլ կարող ենք նույն կերպ վարվել: Կեղծ տեղեկությունները կարող են պառակտել եկեղեցիներն ու վտանգել կյանքը (10. 27): Երբ մեր ճանապարհին հայտնվի որևէ զգայացունց պատմություն, կարող ենք ներկայացված տեղեկություններն ստուգել փորձագետների հետ և ոչ թե առանց ստուգելու տարածել: Նման վարքագիծը կբարձրացնի ավետարանի վարկը: Ի վերջո մենք պաշտում ենք նրան, որը լի է ճշմարտությամբ (Հովհ. 1. 14):

**Աղոթք - Հայր, օգնիր ինձ՝ զանազանելու ճշմարտությունը սխալից, քանի որ Ձո՞ւ Հոգին է առաջնորդում ինձ: Ամեն:**

**Դավադրությունների տեսությունները արագ տարածվում են, բայց մենք ուստի ենք որոնենք ճշմարտությունը:**

Մարիամը շրջվեց ու երրայերեն ասաց. «Ռաբբոնի»: (Հովհ. 20. 16)

## ԱՍՏԾՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏՆԻ

**Ե**րկու եղբայրները որդեգրվել էին տարբեր ընտանիքներում ու բաժանվել իրարից: Քսան տարի անց ԴՆԹ քննության շնորհիվ նրանք կրկին գտան միմյանց: Երբ Կեյրոնը կարծ հաղորդագրություն ուղարկեց Վինսենթին՝ հարցնելով, թե ինչ են անվանել իրեն ծննդյան ժամանակ, նա սկզբում մտածեց, թե ով է այդ անծանոթը: Բայց իր պատասխանից հետո իմացավ, որ նա իր եղբայրն է: Նա ճանաչվեց իր անունով:

Անունը կարեոր դեր ունի նաև հարության պատմության մեջ: Մարիամ Մագդաղենացին, գալով Հիսուսի գերեզմանը և տեսնելով, որ Նրա մարմինը չկա, լալիս է: Հիսուսը հարցնում է. «Կի՞ն, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտրում» (Հովհ. 20.15): Կինը ճանաչում է Նրան, երբ լսում է իր անունը՝ Մարիամ (Հմ.16): Ապա «Մարիամը շրջվեց ու երրայերեն ասաց. «Ռաբբոնի», որ «Վարդապետ» է նշանակում (Հմ.16): Կնոջ արձագանքը արտահայտում է այն ուրախությունը, որ Հարության օրը զգում են Հիսուսին հավատացողները՝ գիտակցելով, որ հարություն առած Քրիստոսը բոլորի համար հաղթեց մահվանը՝ մեզանից յուրաքանչյուրին ճանաչելով որպես իր զավակներ: Նա Մարիամին ասաց. «Ես իմ Հոր և Ճեր Հոր մոտ եմ բարձրանում, իմ Աստծու և Ճեր աստծու մոտ» (Հմ.17):

Երկու եղբայրներ վերամիավորվեցին անունով՝ երդվելով հասցնել «Հարաբերությունները հաջորդ մակարդակի»: Հարության տոնին գովաբանենք Տեր Հիսուսին այն բանի համար, որ նա արդեն իսկ առավելագույն քայլը կատարել է զոհաբերական սիրով: Մեզ համար նա իսկապես ողջ է:

**Աղոթք - Սիրո՞ղ Յիսո՞ւս, իմ մասին Ձո իմանալը խոնարհեցնում է ինձ: Շնորհակալ եմ Ձո իմանալու և զոհաբերության պատրաստ սիրո համար: Ամեն:**

**Դարություն առած Stev Յիսուսը մեզ ճանաչում է մեր անունով:  
Ուստի արժե ավելի լավ ճանաչել Նրան:**

Դու մարտնչեցիր Աստօն հետ ու մարդկանց հետ և հաղթեցիր: (Ծն. 32.28)

## **ԳՈՂԱՑՎԱԾ ԱՍՏՎԱԾՆԵՐ**

**Ե**կվա անունով մի կնոջից գողացել էին փայտից պատրաստված ու փորագրված արձանիկը, և նա այդ մասին հայտնել էր ոստիկանությանը: Իրավապահները, գտնելով կուռքի մի արձանիկ, կանչեցին կնոջը և հարցրեցին.«Սա քո աստվա՞ծն է»: Կինը տիսուր պատասխանեց.«Ո՛չ, իմ աստվածը շատ ավելի մեծ է ու գեղեցիկ»: Մարդիկ միշտ էլ փորձել են ձեւավորել աստվածության իրենց հայեցակարգը՝ հուսալով, որ ձեռակերտ որևէ առարկա կարող է պաշտպանել իրենց: Հավանաբար այդ է պատճառը, որ Հակոբի կինը՝ Ռաքելը, «գողացավ իր հոր կուռքերը», երբ Լաբանը գնացել էր իր ոչխարները խուզելու (Ծն. 31.19): Բայց Աստված իր ձեռքը դրել էր Հակոբի վրա՝ չնայած այն բանին, որ բանակավայրում թաքնված կուռքեր կային (Հմ.34): Հենց նույն ճամփորդության ժամանակ Հակոբը մի ամբողջ գիշեր գոտեմարտեց մեկի հետ (Հմ.32.24): Այդ հակառակորդը սովորական մարդ չէր, քանի որ արևածագին իրեն թողնելու խնդրանքին ի պատասխան՝ Հակոբը նրան ասում է. «Ձեմ թողնի քեզ, մինչև որ ինձ չօրհնես» (Հմ.26): Մարդը Հակոբին վերանվանեց Խորայել («Աստծո հետ գոտեմարտող»), ապա օրհնեց նրան (Հմ. 28-29): Հակոբն այդ տեղն անվանեց Փանուել («Աստծո երես»), քանի որ «Աստծուն տեսա դեմ առ դեմ և ողջ մնացի» (Հմ.30):

Այս Աստվածը՝ միակ ճշմարիտ Աստվածը, անսահման մեծ է ու ավելի գեղեցիկ, քան այն ամենը, ինչ էկվան կարող էր պատկերացնել: Այն անհնար է փորագրել, գողանալ կամ թաքցնել: Ինչպես Հակոբին հաջողվեց այն գիշեր, մենք էլ կարող ենք մոտենալ նրան: Տեր Հիսուսը սովորեցրել է իր աշակերտներին այս Աստծուն անվանել «Մեր Հայրը, որը երկնքում է» (Մատթ. 6.9):

**Աղոթք - Երկնավո՞ր Յայր, ների՞ր ինձ, որ թեզ ավելի փոքր եմ տեսնում, քան դու կաս իրականում: Օգնի՞ր ինձ, որ ընդունեմ իրականությունը քո մասին: Ամեն:**

**Մեր Աստվածը մեծ ու հզոր աստված է, և անհնար է նրան կուռենի նման սահմանափակել:**

Մեծ է մեր Տերը և շատ զորավոր, նրա իմաստությանը չափ չկա: (Սաղմ. 147. 5)

## ԱՍՏՎԱԾ ՏԵՍՆՈՒՄ, ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՎ ՀՈԳՈՒՄ Է

**Ե**րբեմն մշտական ցալն ու հոգնածությունը պատճառ են դառնում մեկուսանալու և միայնակ զգալու: Ես հաճախ եմ Աստծո և ուրիշների կողմից անտեսված զգացել: Մի օր էլ վաղ առավոտյան, երբ շանս հետ զբոսնում էի, հանկարծ հեռվում նկատեցի մի օդապարիկ, որում տեղափորված մարդիկ, իհարկե, վայելում էին մեր խաղաղ թաղամասի գեղեցիկ տեսարանը, բայց չէին տեսնում ինձ: Այսպես քայլելով հարեանների տների մոտով՝ հառաչեցի: Քանի՛ քանիսը կան այս փակ դռների հետեւում, որոնք նույնպես անտեսված ու միայնակ են զգում: Վերջացնելով առավոտյան զբոսանքս՝ Աստծուն խնդրեցի հնարավորություն տալ ինձ, որպեսզի հարեաններս իմանան, որ ես տեսնում եմ իրենց և մտածում իրենց մասին: Աստված նույնպես: Աստված ստեղծել է աստղերը, հաշվել դրանք և բոլորին կոչել իրենց անուններով (Սաղմ. 147. 4): Սրանով ցույց է տրվում Նրա ուշագրությունը նույնիսկ ամենափոքր ու անտեսանելի մանրամասների հանդեպ: Նրա ուժին, խորաթափանցությանն ու «իմաստությանը չափ չկա» (Հմ. 5): Աստված լսում է յուրաքանչյուր հուսահատ լաց, տեսնում է յուրաքանչյուր լուռ արցունք, ինչպես նաև գոհունակության ու ուրախության ձայն: Նա տեսնում է, թե մենք երբ ենք սայթաքում, երբ ենք հաղթանակած վեր կենում: Նա հասկանում է մեր ամենախոր վախերը, մեր ամենաներքին ապրումներն ու մտքերը, մեր մուայլ երազները: Նա գիտե, թե որտեղ էինք և ուր ենք գնում: Երբ Աստված օգնում է տեսնելու, լսելու և սիրելու մեր հարեաններին, մենք կարող ենք վստահել նրան, որ նա տեսնում, հասկանում ու հոգ է տանում մեր մասին:

**Աղոթք - Հայ’ր, խնդրում եմ՝ օգնի՛ ինձ, որ կարողանամ գործնականում տեսնել, լսել և սիրել ուրիշներին: Ամեն:**

**Ինչուս Ասված է սիրում, հասկանում ու հոգում մեր մասին, այնուս էլ մենի վարվենի մեր դրացիների հետ:**

Թող ամեն մարդ արագահաս լինի լսելու մեջ, ծանրաշարժ խոսելու և բարկանայլու մեջ, որովհետև մարդու բարկությունն Աստծու արդարությունը չի կատարում: (Հակ. 1.19-20)

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՎԱՐՈՒՄ

**Բ**եռնատար մեքենան հանկարծակի հայտնվեց իմ դիմաց, ու ես հազիվ խուսափեցի հարվածից: Այդ պահին նկատեցի, որ մեքենայի հետեւմ փակցված է «ինչպե՞ս եմ վարում» գրությունը և հեռախոսահամար: Ես անմիջապես զանգահարեցի ու հայտնեցի վրդովմունքս: Ինձ լսող կինը գրանցեց մեքենայի համարանիշը և ասաց, որ կարող եմ իրենց զանգահարել նաև այն դեպքերում, եթե լավ վարողի եմ հանդիպում:

Այդ խոսքերն ազդեցին ինձ վրա, ես ամաչեցի, որ օրինապահ քաղաքացու իմ բուռն վարմունքով ակամա զայրացած եմ խոսել իր աշխատանքը բարեխղճորեն կատարող մարդու հետ:

Մեր գործողությունների և համոզմունքների միջև եղած հակասությանն է վերաբերում Հակոբոսի գիրքը, որի 1.19-20-ում կարդում ենք. «Իմացե՞ք, իմ սիրելի եղբայրներ, թող ամեն մարդ արագահաս լինի լսելու մեջ, ծանրաշարժ խոսելու և բարկանալու մեջ, որովհետև մարդու բարկությունն Աստծու արդարությունը չի կատարում»: Ապա Հակոբոսն ավելացնում է. «Խոսքը կատարողնե՞ր եղեք և ոչ միայն լսողներ, որ ինքներդ ձեզ խաբեք» (Հմ.22):

Մեզանից ոչ մեկը կատարյալ չէ: Կյանքում երեխն մեր «վարելու ձեր» օգնության կարիք է ունենում, որն սկսվում է խոստովանությամբ և մեր նկարագրի կոպիտ եղբերը լցնելու համար Աստծուն ուղղված խնդրանքով:

**Աղոթք -** Հայր, երբեմն բարկությունը հաղթում է ինձ, ու ես վիրավորական խոսքեր եմ ասում: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ աճեմ ու փոխվեմ: Ամեն:

**Արագ ու զայրութով ասված խոսերը կարող են խնդիրներ առաջացնել: Բայց Աստծո ընորհեով կարելի է խոսելիս ու բարկանալիս չըսադել:**

Եղբայրասիրության մեջ միմյանց նկատմամբ գթասիրտ եղեք, պատվելու մեջ միմյանց գերազանցեք: (Հռոմ. 12.10)

## ՅԱՆՈՒՆ ՍԻՐՈ

**Վ**ազքի մրցումներին մասնակցելը ենթադրում է ֆիզիկական ու հոգեկոր ուժերի լարում ու նպատակադրում: Իսկ միջնակարգ դպրոցի աշակերտներից մեկի համար դա նաև մեկ ուրիշին օգնել էր նշանակում: Փորձերի ու հանդիպումների ժամանակ տասնչորս տարեկան Այուզան Բերգեմանը հրում էր իր եղբայր Զեֆրիի անվասայլակը: Տղան երկու տարեկանում ուղեղային կաթված էր ստացել ու դարձել հաշմանդամ: Այսօր քույրը վազքի իր անձնական նպատակները գոհաբերում էր հանուն եղբոր: Ինչպիսի՞ սեր ու նվիրում: Պողոս առաքյալն այդպիսի սերն ու անձնագոհություննը նկատի ուներ, երբ իր ընթերցողներին քաջալերում էր. «Եղբայրասիրության մեջ միմյանց նկատմամբ գթասիրտ եղեք, պատվելու մեջ միմյանց գերազանցեք» (Հռոմ. 12.10): Նա գիտեր, որ Հռոմի հավատացյալներն ուզում էին հաղթահարել շատերի նկատմամբ ունեցած ատելությունը, վրեժխնդրությունն ու նախանձը (Հմ.18): Հետևաբար խրախուսեց, որ թույլ տան, որպեսզի աստվածային սերը տիրի իրենց սրտերում: Որովհետեւ Քրիստոսի սիրո վրա հիմնված սերը պայքարում է ուրիշների բարիքի համար: Այն անկեղծ է և առաջնորդում է առատաձեռն բաժնեկցության (Հմ.15): Այս ճանապարհն ընտրողները մեծամիտ չեն, այլ խոնարհ են և ուրիշներին ավելի մեծ պատվի են արժանացնում (Հմ.16): Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք սիրո մրցավազք ենք դրսենորում, երբ օգնում ենք ուրիշներին՝ ավարտել իրենց վազքը: Դա կարող է դժվար լինել, բայց պատիվ է բերում Տեր Հիսուսին: Ուրեմն հանուն սիրո եկե՛ք ապավինենք նրան, որ սիրո և ծառայելու ուժ տա մեզ:

**Աղոթք - Սիրո՝ Աստված, իհանուն սիրո ու քո փառքի, օգնի՛ր ինձ, որ նախքան իմ մասին նտածելը՝ ուրիշների մասին նտածեմ: Ամեն:**

**Մեր ղարտականությունն է սիրել ուրիշներին այնուես, ինչու Աստված է սիրում: Դիսուսն աղացուցում է, որ սերն ավելին է, բան զգացումները:**

Գիտեք ձեզանից ամեն մեկին, ինչպես հայրը՝ իր զավակներին: (Ա. Թես. 2.11)

## ՍԻՐՈ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Համացանցում մեծ տարածում ունեցած տեսանյութերից մեկում մայր արջը փորձում է իր չորս աշխառյժ ձագուկներին անցկացնել բանուկ փողոցով: Անհնար է չժպտալ, երբ տեսնում ես, որ մայր արջը մեկ առ մեկ անցկացնում է քոթոթներին մյուս կողմ, բայց մինչև հետ դառնալլ նրանք դարձյալ հայտնվում են փողոցում: Բազմաթիվ անհաջող փորձերից հետո վերջապես արջին հաջողվում է իր ձագուկներին հասցնել ապահով վայր:

Այդ տեսանյութում խորհրդանշորեն ներկայացված ծնողական անխոնջ աշխատանքը համընկնում է Պողոսի օգտագործած պատկերին, երբ նկարագրում է իր հոգատարությունը թեսաղոնիկեցիների հանդեպ: Իր ունեցած իշխանությունն ընդգծելու փոխարեն՝ առաքյալլ նրանց մեջ իր կատարած իր աշխատանքը համեմատում է մանկահասակ երեխաներ ունեցող ծնողների աշխատանքի հետ (Ա. Թես. 2.7.11): Թեսաղոնիկեցիների հանդեպ խոր սերն էր (Հմ.8), որ դրդեց Պողոսին «Հորդորել և միսիթարել ու աղաչել, որ ընթանան, ինչպես վայել է Աստծուն» (Հմ.12): Աստվածապաշտությամբ ապրելու այս բուռն կոչը բխում էր կյանքի բոլոր ոլորտներում Աստծուն հարգելու նրա սիրառատ ցանկությունից:

Պողոսի օրինակը կարող է մեզ համար իբրև ուղեցույց ծառայել, հատկապես երբ հոգնում ենք մեր պարտականություններից: Աստծո Հոգով զորացած՝ մենք կարող ենք մեղմորեն ու աննահանջ սիրել մեր խնամքի ներքո եղողներին, երբ նրանց առաջնորդում ենք դեպի Տեր Հիսուսը:

**Աղոթք -** Երկնավոր Յայր, օգնի՛ ինձ, որ կարողանամ ուրիշների վրա տարածել այն սիրառատ հոգատարությունը, որ Դու ողորմածորեն ցույց ես տալիս ինձ: Ամեն:

**Ասէված մեզ սկել է Իր սիրո առաջնորդությունը: Խրախուսե՞ն մեր խնամքի ներքո եղողներին:**

Վեր բարձրացրեք ձեր աչքերը և նայեք. ո՞վ է ստեղծել սրանք. նա է սրանց գործերը թվով դուրս հանողը, սրանց բոլորին էլ իրենց անունով է կոչում: (Ես. 40. 26)

## ՅԵՏԱԶՈՏԵԼ ՎԱՏԴԵՐԸ

**2021 թ.** գիտնականների բազմազգ խմբի ջանքերի շնորհիվ  
**ՀՆԱՐԱՎՈՐ Եղավ «Ձեյմս Վեք» տիեզերական վիթխարի աստղագիտակալը տեղադրել երկիր մոլորակից մոտ մեկ միլիոն մղոն հեռավորության վրա:** Գիտության այս հրաշալիքը հնարավորություն է տալիս թափանցել տիեզերքի խորքերը և ավելի լավ ուսումնասիրել աստղերն ու երկնային այլ մարմիններ: Անշուշտ,  
 գիտական այս նվաճումը աստղագիտությունը կհարստացնի նոր բացահայտումներով, լուսանկարներով ու տեղեկություններով:  
 Բայց աստղագիտակի առաքելությունը որպես այդպիսին նորություն չէ: Եսայի մարգարեն հենց աստղերի որոնումն է նկարագրել, երբ ասել է.«Վե՛ր բարձրացրեք ձեր աչքերը և նայե՛ք. ո՞վ է ստեղծել սրանք. նա է սրանց զորքերը թվով դուրս հանողը, սրանց բոլորին էլ իրենց անունով է կոչում» (Ես. 40. 26): «Օրը օրին խոսք է հաղորդում, և գիշերը գիշերին գիտություն է ցույց տալիս» (Սաղմ. 19.2) ու նրանք խոսում են մեր Արարչի մասին,  
 որն ստեղծել է այս աննկարագրելի հսկայական ու վիթխարի տիեզերքը և դրա հետ մեկտեղ անթիվ-անհամար լուսավոր մարմինները, որոնք լուր գեղեցկացնում են մեր գիշերային երկինքը (Հմ.3): Աստված ինքն է որոշել, թե քանի լուսատու կա.«Նա հաշվում է աստղերը և նրանց բոլորին կոչում իրենց անուններով» (Սաղմ. 147.4): Բարդ ու հետաքրքիր գործիքներ ուղարկելով տիեզերք՝ մարդը կարող է հիացմունքով ու զարմանքով վայելել դրանց գիտական հայտնագործությունները, որովհետեւ ամեն անգամ նոր աստղ հայտնաբերելիս ընդգծվում է Արեգակնային համակարգն ու մնացած ամեն ինչն Ստեղծողի աշխատանքը: Այո՛, «երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հռչակում է նրա ձեռքի գործերը» (Սաղմ. 19.1):

**Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ ստեղծել ես այս զարմանալի տիեզերքը, որպեսզի ես վայելեմ: Ամեն:**  
**Աստերն ու ողջ տիեզերքը խոսում են Աստծոն և Նրա արարչագործության մասին՝ ցույց տալով Նրա ուժն ու հրաշագործությունը:**

Նրանց, ովքեր ընդունեցին Նրան և հավատացին Նրա անվանը, իշխանություն տվեց Աստծու որդիները լինելու: (Հովհ. 1.12)

## Ո՞Վ ԵՄ ԵՄ

**Ω**ռչուա Աբրահամ Նորթոնը, լինելով բավական հաջողակ գործարար առևտորի ոլորտում, ֆինանսական անհաջողություն ունեցավ Սան Ֆրանցիսկոյի նավագնացության մեջ ներդրում անելով և որոշեց փոխել ինքնությունը. 1859 թ. նա իրեն հռչակեց Միացյալ Նահանգների կայսր: Երբ տեղի մամուլը առաջին անգամ հրապարակեց «Կայսր Նորթոնի» հայտարարությունը, շատերը ծիծաղեցին: Բայց նա շարունակում էր իրեն իրեւ կայսր պահել. որոշումներ էր հրապարակում, տպեց իր սեփական դրամանիշը, նույնիսկ նամակ գրեց Վիկտորյա թագուհուն՝ ինդրելով ամուսնանալ իր հետ և միավորել իրենց թագավորությունները: Նա հագնում էր թագավորական համագետատ, բայց այդ ամենը, իհարկե, չէր օգնում նրա ինքնահռչակ էության հաստատմանը: Որովհետև մենք չենք կարող որոշել, թե ով ենք: Մեզանից շատերն են տարիներ շարունակ որոնում, ուզում հասկանալ իրենց դերն ու արժեքը այս կյանքում: Եվ հաճախ սխալվում ենք այդ ճանապարհին, որովհետև միայն Աստված կարող է մեզ ասել ճշմարտությունը մեր իսկ մասին: Բարեբախտաբար, նա մեզ անվանում է իր որդիներն ու դուստրերը, որոնք փրկություն են ստանալու իր Որդու՝ Տեր Հիսուսի միջոցով: Հովհաննեսը գրում է. «Նրանց, ովքեր ընդունեցին Նրան և հավատացին Նրա անվանը, իշխանություն տվեց Աստծու որդիները լինելու» (Հովհ. 1.12): Եվ այդ ինքնությունը նվեր է: Մենք իր սիրելի զավակներն ենք. «Նրանք չծնվեցին արյունից, ո՛չ էլ մարմնի ու մարդու կամքից, այլ ծնվեցին Աստծուց» (Հմ.13): Աստված է Քրիստոսով մեզ տալիս մեր անունն ու ինքնությունը:

**Աղոթք - Յայր, գիտեմ, որ քոնն եմ: Օգնի՛ր ինձ վստահ լինել, որ ծնվել եմ քեզնից՝ որպես թագավորի զավակ: Ամեն:**

**Եթե հավատում ենք Տեր Յիսուսին, մենք ընտրված կլինենք  
Աստծուց և կհասկանանք մեր իսկական ինքնությունը:**

Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ փրկել եմ, կանչել եմ քեզ քո անունով. դու իմն ես: (Ես. 43. 1)

## ԱՍՏՎԱԾ ՀԻՇՈՒՄ Է ԱՆՈՒՆԵՐՈՎ

**Մ**ի կիրակի եկեղեցում երիտասարդների հետ հանդիպման ժամանակ խոսեցի մի աղջնակի հետ, որ նստած էր իր մոր կողքին: Ես ժպտալով ողջունեցի ամոթիսած աղջկան և տալով իր անունը՝ հարցրի որպիսությունը: Նա բարձրացրեց գլուխը և զարմացած ասաց. «Դուք հիշո՞ւմ եք իմ անունը»: Պարզապես տալով աղջկա անունը, որը մեծահասակներով լի եկեղեցում մենակ էր զգում իրեն, ես կարողացա շահել նրա վստահությունը: Նա իրեն նկատված ու գնահատված զգաց:

Եսայի 43-ում Աստված Եսայի մարգարեին օգտագործում է իսրայելցիներին նման մի պատգամ Հաղորդելու համար: Նույնիսկ անապատում ու գերության մեջ նրանք նկատված ու գնահատված էին, որովհետև Աստված կանչեց նրանց իրենց «անունով» (Հմ.1): Նրանք օտար չէին, նրանք իրեն էին պատկանում: Թեև այդ մարդիկ լքված էին զգում, բայց «թանկագին էին», և նրա սերը իրենց հետ էր (Հմ.4): Եվ հիշելու հետ մեկտեղ նա հայտնեց նաև, որ ամեն բան կանի նրանց համար հատկապես փորձության ժամանակ: Եվ երբ նրանք անցնում էին փորձությունների միջով, նա նրանց հետ էր (Հմ.2): Նրանք վախենալու կամ անհանգստանալու կարիք չունեին, քանի որ Աստված հիշում էր իրենց անունները:

Աստված գիտի իր զավակներից յուրաքանչյուրի անունը, և դա բարի լուր է, հատկապես երբ մենք անցնում ենք կյանքի խոր ու դժվարին ճամփաներով:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ, որ ինձ անունով ես ճանաչում: Ամեն:**

**Փորձություններ ու նեղություններ կունենանք, բայց վստահ լինենք, որ Աստված մեզ հետ է և մեզ անուններով է ճանաչում:**

Նա ուրախությամբ պիտի հրճվի քեզ համար: (Սով. 3.17)

## ՀԵՏԱԶՈՏՎԵԼ ԵՆ ՏԱՏԻԿՆԵՐԸ

**Ե**մորի համալսարանի հետազոտողները մագնիսառեզոնանսային պատկերման միջոցով ուսումնասիրել են տատիկների ուղեղը՝ պարզելու նրանց վերաբերմունքը իրենց չափահաս զավակների, թոռների և անծանոթ երեխաների հանդեպ: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տատիկներն ավելի զգայուն են թոռների, քան զավակների հանդեպ: Թոռնիկն ավելի «պաշտելի» է, քան զավակը:

Հետազոտության հեղինակ Ջեյմս Ռայլինգը գրում է. «Երբ թոռնիկը ժապում է, նրա տատիկը զգում է երեխայի ուրախությունը, իսկ երբ երեխան լալիս է, զգում է նրա ցավն ու անհանգստությունը»:

Մարգարեներից մեկն ասես նկարագրած լինի Աստծու զգացումների «մագնիսառեզոնանսային պատկերը», երբ դիմելով իսրայելցիներին՝ գրում է. «Տերը ուրախությամբ պիտի հրճի քեզ համար, նա կհանդարտեցնի իր սիրով և ցնծությամբ պիտի գոչի քեզ համար» (Սով. 3.17): Ոմանք այս խոսքերն այսպես են մեկնաբանում. «Հոգատար տատիկի նման Աստված զգում է մեր ցավը»: «Նրանց բոլոր նեղությունների մեջ նա նեղություն քաշեց» (Ես.63. 9), և «Տերը հավանում է իր ժողովրդին» (Սաղմ. 149. 4):

Հուսահատության պահերին լավ լիինի հիշենք, որ Աստված իրական զգացմունքներ ունի մեր հանդեպ: Նա հեռվում նստած սառն ու անտարբեր մեկը չէ, այլ սիրում է մեզ և ուրախանում մեղնով: Ժամանակն է մոտենալ նրան, զգալ նրա ժպիտը, լսել նրա երգը:

**Աղոթք - Սիրելի՝ Աստված, օգնի՛ ինձ, որ զգամ ժպիտդ ինձ վրա: Ամեն:**

**Աստված սիրում է մեզ և ուրախանում մեղնով: Ի՞նչ երանություն:**

Նա իր ականջը խոնարհեց դեպի ինձ: (Սաղմ.116.2)

## ՔԵԶ ԼՍՈՒՄ ԵՆ

**Բ**նագիտության գրքում Զարլզ Ռիբորդ Մաննը և Ջորջ Ռանսոմ Թվիսը քննարկում են այն հարցը, թե երբ ծառն ընկնում է անտառում, և մոտակայքում չկա որևէ լսող, արդյո՞ք նա ձայն է հանում: Ձայնի և գոյության մասին այս հարցը տարիներ շարունակ եղել է փիլիսոփայական ու գիտական քննարկումների առարկա, բայց միանշանակ պատասխան դեռ չկա: Մի գիշեր, երբ մենակ ու տխուր մտորումների մեջ էի, հիշեցի այս հարցը և մտածեցի. «Երբ ոչ մեկը չի լսում օգնության իմ աղաղակը, արդյո՞ք Աստված լսում է»:

116-րդ սաղմոսի հեղինակը, տագնապների ու մահվան սպառնալիքի դեմ հանդիման, լքված ու անտեսված էր զգում: Ուստի կանչեց Աստծուն՝ իմանալով, որ նա լսում է իրեն և կօգնի.«Տերը լսեց իմ ձայնը և իմ աղաշանքը, որ իր ականջը խոնարհեց դեպի ինձ» (Հմ.1-2): Երբ ոչ մեկը չգիտի մեր ցավի մասին, Աստված գիտի: Երբ ոչ մեկը չի լսում մեր ձայնը, Աստված լսում է:

Իմանալով, որ Աստված սիրում ու պաշտպանում է մեզ (Հմ.5-6)՝ կարող ենք հանգստանալ դժվար պահերին (Հմ.7): «Հանգիստ»(τανοακή) բառը երբայերենից թարգմանաբար նշանակում է հանգիստ ու ապահով վայր: Մենք կարող ենք խաղաղվել՝ զորանալով Աստծո ներկայության և օգնության երաշխիքով:

Բնագետներ Մաննի և Թվիսի առաջադրած հարցը բազում պատասխաններ է ստացել, իսկ «Աստված լսո՞ւմ է» հարցի պատասխանը մեկն է՝ այս՝

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ միշտ լսում ես սրտիս ձայնը: Քո ներկայությունն ու օգնությունը իմ հանգիստն է: Ամեն:**

**Երբ մենակ եմ ու լված, դիմեմ Աստծուն, և նա կը լսի ու կհոգա մեր մասին:**

Աղոթի՛ր քո Հորը: (Մատթ. 6.6)

## ՄՆԱՌ ԿԱՊԻ ՄԵԶ

Հոգևոր գրականության հեղինակ Մադլեն Լենգլը սովորություն էր դարձրել շաբաթը մեկ զանգել իր տարեց մորը, որ տեղեկություն ունենար նրանից: Նույն կերպ էլ սիրում էր, որ իր զավակներն էին կապ պահպանում իր հետ: Երբեմն այդ խոսակցությունները երկար էին լինում, մանրամասն տեղեկություններով, հարցուպատասխաններով: Իսկ երբեմն էլ պարզապես հեռախոսահամարը ճշտելու մի կարճ զանգ կարող էր լինել: Ինչպես նա գրել է «Քայլել ջրի վրա» գրքում.«Երեխաների համար լավ է կապ պահպանելը: Իսկ մեզ բոլորիս համար լավ է կապ ունենալը մեր երկնավոր Հոր հետ»:

Մեզանից շատերին է ծանոթ Տերունական աղոթքը Մատթեոսի 6. 9-13-ում: Բայց դրան նախորդող համարները նույնպես կարենոր են, քանի որ դրանք երանգ են հաղորդում աղոթքին: Աղոթքը ցուցադրական չի լինելու, «որպեսզի մարդկանց տեսանելի լինի» (Հմ.5): Զկա նաև աղոթքի չափի սահմանափակում, «շատախոսությամբ ավելի լսելի» չեն լինում (Հմ.7): Այլ շեշտը դրվում է կանոնավոր կապ պահելու վրա մեր Հոր հետ, որը «գիտի, թե ի՞նչ է ձեզ պետք նախքան նրանից որևէ բան խնդրելը» (Հմ.8): Հիսուսն էլ է շեշտում, թե որքան լավ է մեզ համար մեր Հոր հետ կապ պահելը և սովորեցնում է. «Այսպես՝ աղոթեք» (Հմ.9):

Աղոթքը կենսական ընտրություն է, քանի որ մեզ կապի մեջ է պահում Աստծո՝ մեր բոլորի Հոր հետ:

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ գիտես իմ կարիքները  
նախքան դրանց նասին իմ խոսելը: Ամեն:**

**Կարևոր է հարազաների և ուրիշների հետ կատ դահելը, բայց  
ավելի կարևոր է աղոթների միջոցով մեր Յոր հետ մշտական  
կատի մեջ լինելը:**

Բայց նա մերժեց: (ԾԱ. 39. 8)

## ՄԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ

**Ա**յու Ձերսիում լողի դասատուներից մեկը մի օր նկատեց, որ մի մեքենա սուզվում է Նյուվրբրքի ծոցում և լսեց վարորդի օգնության կանչը: Մինչ հավաքվածները սարսափած նայում էին, էնթոնին վազեց դեպի մոտակա ժայռը, հանեց ոտքի պրոթեզն ու ցատկեց ջրի մեջ: Նրա այդ քաջարի քայլի շնորհիվ 68 տարեկան տղամարդու կյանքը փրկվեց: Մեր ընտրությունները շատ կարևոր են: Բազում որդիներ ունեցող իսրայելը բացահայտորեն նախապատվություն էր տալիս իր տասնյոթ տարեկան որդի Հովսեփին և «թեքերով պատմուճան էր կարել նրա համար» (ԾՆ. 37.3): Արդյունքն այն եղավ, որ Հովսեփի եղբայրներն ատեցին նրան (Հմ.4), և երբ առիթ ստեղծվեց, վաճառեցին նրան ստրկության (Հմ.28): Հովսեփը հայտնվեց Եղիպտոսում, բայց ի հեճուկս նրա եղբայրների չար մտադրության՝ Աստված օգտագործեց նրան՝ որպեսզի սովի տարիներին պահպանի Հակոբի և շատ ուրիշների ընտանիքները (տե՛ս 50.20): Այստեղ ընտրությունը Հովսեփի որոշումն էր՝ մնալ պատվասեր և փախչել Պետափրեսի կնոջից (39. 1-12), ինչի հետևանքով նա սկզբում ընկավ բանտ (39. 20) և ի վերջո հանդիպեց փարավոնին (գլ. 41):

Էնթոնին մարզված էր, բայց նա պետք է կարողանար ճիշտ ընտրություն կատարել: Երբ մենք սիրում ենք Աստծուն և ձգտում ծառայել նրան, նա օգնում է մեզ, որ կատարենք կենսահաստատ ու աստվածահաճո ընտրություն:

**Աղոթք - Սիրելի Յայր,** օգնի՛ր ինձ, որ կատարեմ իմաստուն որոշումներ, որոնք կպատվեն քեզ: Անեն:

**Յաճախ ենք ընտրության առջև լինում: Խնդրենք Ասծուն, որ իր թոգով մեզ առաջնորդի իմաստուն ընտրություններ անելու:**

Այն, ինչ տեսանք ու լսեցինք, պատմում ենք ձեզ, որպեսզի դուք էլ մեզ հետ հաղորդակից լինեք: (Ա.Հովհ.1.3)

## ՊԱՏՄԻՌ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

**Ա**մերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որդի Ռոբերտ Թագ Լինքոլնը տեսել է երկրի երեք ղեկավարի՝ իր հոր, Զեյմս Քարֆիլդի և Ռուլյամ Մըքքինլիի սպանությունները:

Իսկ Հովհաննեսը ներկա է եղել չորս պատմական կարևոր իրադարձության՝ Հիսուսի վերջին ընթրիքին, Քրիստոսի տառապանքին Գեթսեմանում, Նրա խաչելությանն ու հարությանը: Նա գիտեր, որ այդ գեպքերին վկա լինելը այդ պահերին իր ներկայության գլխավոր պատճառն էր: Հովհաննու 21. 24-ում նա գրում է. «Սա այն աշակերտն է, որ վկայում է այս բաների մասին, և որն էլ դրանք գրեց, ու գիտենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է»: Հովհաննեսը իր գրած նամակում վերահաստատում է ասվածը. «Այն, որ սկզբից էր, որին լսեցինք և մեր աչքերով տեսանք, որին նայեցինք, և որին մեր ձեռքերը շոշափեցին, այսինքն՝ կյանքի Բանի մասին» (Ա.Հովհ.1.1): Հովհաննեսը պարտականություն համարեց Հիսուսի մասին ականատեսի իր վկայությունները պատմել ուրիշներին. «Այն, ինչ տեսանք ու լսեցինք, պատմում ենք ձեզ, որպեսզի դուք էլ մեզ հետ հաղորդակից լինեք» (Հմ.1.3):

Մեր կյանքի իրադարձությունները կարող են լինել զարմանալի կամ իրական, երկու գեպքում էլ Աստված է կազմակերպում դրանք, որպեսզի մենք կարողանանք վկայություն տալ իր մասին: Երբ մենք հանգստանանք Քրիստոսի չնորհքով ու իմաստնությամբ, նույնիսկ կյանքի զարմանալի պահերին խոսե՞նք Նրա փոխարեն:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, խնդրում եմ օգնի՛ր, որ զգամ այն պահերը, երբ կարող եմ մարդկանց պատմել, թե որքան ես սիրում մեզ: Ամեն:**

**Մեր հավասի դասմության մեջ միշտ լինում են զարմանալի երևույթներ, որոնց մասին դիմի դասմենի ուրիշներին, որովհետև նրանք կարիք ունեն լսելու Ասծոն սիրո մասին:**

Արթնացի՛ր, ով քնած, վե՛ր կաց մեռելների միջից, և քրիստոսը քեզ կլուսավորի: (Եփ. 5.14)

## ԵՐԱԶ ՉԵ

**Մ**արդիկ, որոնք պայքարում են այսպես կոչված «անիրական» երևույթների դեմ, հաճախ զգում են, որ իրենց շրջապատում ամեն ինչ անիրական է: Այդ մարդիկ որպես կանոն հոգեկան խանդարում են ունենում ու տառապում ճնշվածությամբ: Այդ զգացումը առողջ մարդկանց մոտ նույնպես կարող է լինել և համեմատաբար լավ ժամանակներում: Ասես մեր միտքը չի հավատում, որ լավ բաներ էլ կարող են լինել:

Աստվածաշնչում նկարագրվում է Աստծո ժողովրդի այդպիսի պայքարներից մեկը, երբ Նրա զորությամբ փրկություն է լինում ոչ թե երազում, այլ իրականում: «Գործք Առաքելոցի» 12-ում, երբ Հրեշտակը Պետրոսին ազատում է բանտից ու հնարավոր մահապատճից (Հմ. 2.4), առաքյալին թվում է, թե դա տեսիլք է (Հմ. 9-10): Երբ Հրեշտակը նրան հանում է բանտից, Պետրոսը վերջապես «ուշքի է գալիս» և հասկանում, որ տեղի ունեցածն իրական է (Հմ.11):

Թե՛ լավ և թե՛ վատ ժամանակներում երբեմն դժվար է լինում լիովին հավատալ, որ Աստված գործում է մեր կյանքում: Բայց մենք կարող ենք վստահ լինել, որ երբ սպասենք Նրան, Նրա հարության ուժը մի օր կդառնա անհերքելիորեն իրական: Աստծո լույսը մեզ կհանի քնից՝ ու կտանի դեպի իր հետ կյանքի իրականություն:

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ քեզ, որ Դու միշտ իրական ես և ստեղծում ես կյանք ու հույս: Ամեն:**

**Կածախ դժվար է զգալ Ասծո գորությունն ու սերը: Սակայն այն իրական է ու միշտ կա:**

Որովհետև առանց նրա ո՞վ կարող է ուտել, և ո՞վ կարող է զվարճանալ: (Ժող. 2.25)

## ԱՄԵՆՈՐՅԱ ՕՐՀՆՅԱԼ ԶԲԱՂՄՈՒՆՔ

**Ն**այելով մարդկանց առավոտյան հոսքին դեպի գնացքը, կուահում ես, որ երկուշաբթի է: Ապա տեսնելով վագոնի մեջ մարդկանց քնատ, մռայլ դեմքերն ու հրմշտոցները՝ հասկանում ես, որ ոչ մեկն ուրախ չէ աշխատանքի գնալու համար: Ուղղակի սկսվում է հերթական աշխատանքային առօրյան:

Մյուս կողմից էլ հիշում ես, որ ընդամենը մեկ տարի առաջ այս գնացքները դատարկ էին, որովհետեւ թագավարակի պատճառով ամենուր արգելափակումներ էին: Հիմա կարծեք թե վերադարձել ենք մեր ընականոն առօրյային, հետեւաբար «ամենօրյա զբաղմունքը» բարի լուր է և «ձանձրալի» օրհնություն:

Սողոմոն թագավորը նման եզրակացության էր հանգել՝ խորհելով առօրյա տքնաշան աշխատանքի ունայնության մասին (Ժող. 2. 17-23): Երբեմն դա անվերջ ու «անիմաստ» զբաղմունք էր թվում (Հմ.21), բայց հետո նա հասկացավ, որ պարզապես ամեն օր ուտելը, խմելն ու աշխատելը Աստծո օրհնությունն են (Հմ. 24):

Երբ զրկված ես լինում սովորական առօրյայից, տեսնում ես, որ այդ պարզ գործողությունները շքեղություն են: Եկե՛ք շնորհակալություն հայտնենք Աստծուն, որ կարող ենք ուտել, խմել և բավարարություն գտնել աշխատանքում, քանի որ դա «Աստծո պարգևն է» (3.13):

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ Ձեզ իմ «սովորական» առօրյայի համար՝ չնայած, որ կարող եմ երբեմն ծանձրանալ ու հոգնել:**

Օգնի՛ր, որ երախտապարտ լինեմ իմ կյանքում տվածդ յուրաքանչյուր օրինության համար: Ամեն:

**Եկե՛ք այսօր ընորհակալություն հայտնենք Աստծո Տված յուրաքանչյուր, նույնիսկ դարձ ու սովորական օրհնության համար:**

Ամենը, ինչ էլ որ անեք՝ խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով արեք: (Կող. 3.17)

## ԲՈԼՈՐԸ ՀԻՍՈՒՍԻ ԴԱՍԱՐ

**Ե**րբ Զեֆը տասնչորս տարեկան էր, մայրը նրան տարավ հայտնի մի երգչի մոտ՝ ուսանելու: Հետագայում այդ շրջանի շատ երաժիշտների նման Բի Զեյ Թոմասը նույնպես երաժշտական շրջագայությունների ժամանակ բռնել էր ինքնառչնչացման ուղին: Սակայն այդպես էր, քանի դեռ ինքն ու կինը չէին ծանոթացել Հիսուսին: Քրիստոսին հավատալուց հետո նրանց կյանքն արմատապես փոխվեց:

Համերգներից մեկի ժամանակ երգիչը զվարձացնում էր մարդկանց: Նրա հայտնի երգերից մի քանիսի հնչելուց հետո հանդիսատեսներից մեկը կանչեց. «Մի ե՛րգ էլ երգիր Հիսուսի համար»: Բի Զեյն անվարան պատասխանեց, որ ինքն արդեն չորս երգ է երգել Հիսուսի համար: Այդ դեպքից տասնամյակներ են անցել, բայց երգիչը հիշում է այն պահը, երբ ինքը հասկացավ, որ այն ամենը, ինչ մենք անում ենք, պետք է լինի Հիսուսի համար: Նույնիսկ այն, ինչ ոմանք կարող են համարել «ոչ կրոնական»: Մենք երբեմն փորձում ենք մեր արածի մասին պատմել, երբ հորդորում ենք կարդալ Սուրբ Գիրքը, պատմել հավատի գալու պատմությունը, երգել հոգևոր երգեր: Սրանք սրբազն գործեր են: Կտրել բակի մոլախոտերը, գնալ վազելու, երգել գյուղական երգեր սրանք էլ աշխարհիկ բաներ են:

Կողոսացիներին ուղղված նամակի 3.16-ում Քրիստոսի պատգամը մեզ հաստատում է այնպիսի գործունեության մեջ, ինչպիսիք են ուսուցումը, երգելը և երախտապարտ լինելը: Իսկ 17-ում ընդգծվում է. «Ամենը, ինչ էլ որ անեք՝ խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով՝ արեք»: Ամեն ինչ անում ենք իր համար:

**Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր ինձ, որ քեզ հանձնեմ յուրաքանչյուր գործունեություն ու խոսք: Ամեն:**

**Ամեն բան անենք Հիսուսի անունով: Թույլ տանք, որ Աստված մեր խոսերն ու գործերն օգտագործի իր փառքի համար:**

Ահա ես չորս արձակ նարդու են տեսնում, որ շրջում են կրակի մեջ, և նրանց վնաս չի լինում. չորրորդի կերպարանքն է աստվածների որդու է նման: (Դամ. 3.25)

## ՊԱՏԱՍԽԱՎՆ Է՝ ՅԻՍՈՒՄ

**Պ**ատմում են, որ Ալբերտ Էյնշտեյնի դասախոսական շրջագայություններից մեկի ժամանակ գիտնականի վարորդն ասել է, թե այնքան է լսել նրա ելույթները, որ ինքն էլ կարող է դասախոսել: Էյնշտեյնն առաջարկում է հաջորդ քոյեջ գնալիս փոխել գերերը: Վարորդը համաձայնում ու հիանալի դասախոսություն է անցկացնում: Հարցուպատասխանի ժամանակ համառ ու հարցասեր մեկին վարորդն ասում է. «Տեսնում եմ, որ փայլուն ուսուցչապետ ես, բայց այնպիսի հարց ես տալիս, որին նույնիսկ իմ վարորդը կարող է պատասխանել»: Եվ «վարորդ» Էյնշտեյնը պատասխանում է տրված հարցին: Այսպիսի զվարճալի ավարտ է ունենում այդ պատմությունը: Դանիելի երեք ընկերները դժվարին կացության մեջ էին հայտնվել: Նրանք հրաժարվում էին ենթարկվել նաբուգոնոսոր թագավորի կուռքին երկրպագելու հրամանին, որին ի պատասխան սպառնալիք էր հնչել, թե իրենց կնետեն կրակով բորբոքված հնոցի մեջ: «Ո՞ր աստվածն է, որ ձեզ պիտի ազատի իմ ձեռքից», -հարցը էլ էր թագավորը և հրամայել երեք ընկերներին նետել ավելի ուժգին բորբոքված կրակը: Սակայն նրանց միացել էր նաև «մի հրեշտակ» (Հմ.28), ամենայն հավանականությամբ Հիսուսը՝ զերծ պահելով տղաներին կրակի լեզուներից և դրանով իսկ պատասխան տալով նաբուգոնոսոր թագավորի հարցին. «Մի՞թե մենք կապված երեք մարդ չգցեցինք կրակի մեջ:.... Ահա ես չորս արձակ մարդու եմ տեսնում, որ շրջում են կրակի մեջ, և նրանց վնաս չի լինում. չորրորդի կերպարանքն էլ աստվածների որդու է նման» (Դամ. 3.24-25): Տեսնելով այդ ամենը՝ թագավորը գովում է «Սեղբակի, Միսաքի և Աբեթնագովի Աստծո» զորությունը և ընդունում, որ «չկա մի ուրիշ աստված, որ կարողանա այսպես ազատել» (Հմ. 28-29): Երբեմն վտանգ ենք զգում, բայց Հիսուսը կանգնած է իրեն ծառայողների կողքին:

**Աղոթք - Տե՛ր, Դո՛ւ ես պատասխանը, երբ այլ պատասխան չկա: Ամեն:**

**Խնդիրներ ու մարտահրավերներ կարող ենք ունենալ, սակայն վստահ լինենք, որ այդ բոլորի մեջ Տե՛ր Հիսուսը մեզ հետ է:**

Ո՞վ է փոքր բաների օրն անարգում: (Զաք. 4.10)

## ՓՈՔՐ ԲԱՆԵՐՈՎ ՄԵԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ք**ոլեջի լողորդներից մեկը պատրաստվում էր մասնակցելու օլիմպիական խաղերին, բայց մտավախություն ուներ, թե անհրաժեշտ արագությունը չի կարողանա դրսելու: Երբ անվանի մաթեմատիկոս Կեն Օնոն ուսումնասիրեց լողալու նրա տեխնիկան, տեսավ, որ հնարավոր է նրա արդյունքը առնվազն 12 րոպեով բարելավել: Իսկ դա էական տարբերություն էր մրցակցության մեջ: Գիտնականը ոչ թե լողորդի մարմնի տարբեր մասերին էլեկտրոնային զգայարաններ ամրացնելով բարելավեց նրա ցուցանիշը, այլ հայտնաբերեց փոքրիկ սրբագրող գործողություններ, որոնք կիրառելու դեպքում մարդիկի գործողությունները ջրում կդառնային ավելի արդյունավետ:

Փոքրիկ սրբագրող գործոնները կարող են մեծ փոփոխություններ առաջացնել նաև հոգեւոր հարցերում: Զաքարիա մարգարեն նման մի սկզբունք է սովորեցնում հուսալքված հրեա ժողովրդի մնացորդներին, որոնք իրենց գերությունից հետո շինարար Զորաբարելի հետ միասին ուզում էին վերակառուցել Աստծո տաճարը: Բայց «ո՛չ գորությամբ և ո՛չ էլ ուժով, այլ իմ հոգով»-պատասխանեց ամենակարող Տերը Զորաբարելին (Զաք. 4.6):

Զաքարիան հարցնում է, թե «ո՞վ է փոքր բաների օրն անարգում» (Հմ.10): Որովհետեւ աքսորյալներն անհանգստանում էին, թե տաճարը չի համապատասխանի Սողոմոն թագավորի օրոք կառուցված տաճարին: Բայց ինչպես լողորդին հաջողվեց Օնոյի օգնությամբ հաղթել, այնպես էլ Աստծո օգնությամբ նույնիսկ փոքր ջանքերը կարող են հաջողություն բերել, եթե այդ փոքր ջանքերը փառաբանեն նրան:

**Աղոթք - Հայր, ցույց տուր ինձ փոքր, բայց լավ արարքներ, որոնք կփոխեն իմ վերաբերմունքը դեպի քեզ: Ամեն:**

**ՄԵԾ ՈՒ ԱԺԽԱՏԱՏԱՐ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՌԱՍԱԽԱՐ ԱՆԵԼ, ԲԱՅՋ ԿԱՆ ԱՆՆԾԱՆ ՎՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆԻ ԻՌԱՑՆԵՐ ՄԵԾ ԱՊԱՍ ԿՐԵՐԵՆ ՄԵԶ:**

Բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ նրանց խոսել էր տալիս Հոգին: (Գործը 2.4)

## ՄԻԱՅՆ ՀՈԳԻՆ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ

**Գ**երմանացի աստվածաբան Յուլտմանի՝ 94 տարեկանում գրած Սուրբ Հոգու մասին գրքի քննարկման ժամանակ լրագրողներից մեկը նրան հարցրեց.

«Ինչպե՞ս կարելի է գործնականում ստանալ Սուրբ Հոգի, արդյո՞ք կարելի է այն ձեռք բերել դեղատներում»:

Մոլտմանը զարմացավ հարցից և քմծիծաղով պատասխանեց.

«Ի՞նչ կարող եմ ասել, ոչինչ պետք չէ անել, սպասի՛ր Հոգուն և Հոգին կգա»:

Այս պատասխանով նա ընդգծում է մեր այն սխալը, թե մեր ուժն ու փորձը կանեն ամեն ինչ: «Գործք առաքելոցը» բացահայտում է, որ Աստված է ամեն ինչ տնօրինում: Եկեղեցու սկզբնավորման ժամանակ այն ոչ մի կապ չուներ մարդկային տպագորիչ առաջնորդության կամ որևէ ուազմավարության հետ: Այլ «սաստիկ քամու պես մի ձայն հնչեց և լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած են» (2.2): Հետո Հոգին վերացրեց ցեղային բոլոր առավելությունները, ի մի հավաքեց միմյանց հակադրվող մարդկանց: Աշակերտները ցնցված էին՝ տեսնելով Աստծո արածներն իրենց մեջ: «Բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ նրանց խոսել էր տալիս Հոգին» (Հմ. 4):

Եկեղեցին ու մեր համատեղ աշխատանքն աշխարհում չի որոշվում մեր արածներով: Մենք ամբողջովին կախված ենք իրենից, Հոգու գործողություններից: Սա մեզ թույլ կտա լինել և՝ հանգիստ, և՝ համարձակ: Այսօր, երբ մենք նշում ենք Հոգեգալուստը, սպասենք Հոգուն և պատասխանենք:

**Աղոթք - Յայր Աստված, իոդնել եմ՝ հավատալով, որ ամեն ինչ ինքս եմ անելու: Սուրբ Հոգի, եկ և օգնի՛ր ինձ: Ամեն:**

**Մենք փորձում ենք աղավինել մեր սեփական ջաներին կամ տոկունությանը, բայց ավելի լավ է հանձնվել Սուրբ Հոգու զորությանը:**

Ես Տիրոջով պիտի ցնծամ, պիտի իմ փրկության Աստծով ուրախանամ: (Զաք. 3.18)

## ՊԱՅՉՈՂ ՀՈՒՅԱՆ

«Ես գիտեմ, որ հայրեկը տուն է գալու: Նա ինձ ծաղիկներ է ուղարկել», -մորս ասում էր յոթնամյա քույրեկս, երբ մեր հայրը պատերազմի ժամանակ անհայտ կորել էր: Գնալուց առաջ նա ծաղիկներ էր պատվիրել քրոջս տարեղարձի համար, և դրանք տեղ հասան ժամանակին: Քույրս ճիշտ էր. հայրս սարսափելի պատերազմից հետո տուն դարձավ: Ու տասնամյակներ անց էլ քույրեկս, որպես հույսին կառչած մնալու հիշեցում, պահում է այն ծաղկամանը, որի մեջ դրված էին հորս ուղարկած ծաղիկները: Կոտրված ու մեղավոր այս աշխարհում երեմն շատ դժվար է լինում հույսը անվարան պահելը: Միշտ չէ, որ հայրերը վերադառնում են, հաճախ երեխաների ցանկություններն անկատար են մնում: Բայց ամենադժվար պահերին էլ Աստված հույս է տալիս մեզ: Մեկ այլ պատերազմի ժամանակ Ամբակում մարդարեն կանխագուշակեց Բաբելոնի արշավանքը Հուդայի վրա (Ամբ. 1.6, տե՛ս Բ. Թագ. 24), նաև հաստատեց, որ Աստված միշտ բարի է (Ամբ. 1.12-13): Հիշելով անցյալում Աստծո արած բարությունն իր ժողովրդի հանդեպ՝ Ամբակումը հայտարարեց. «Թեկուզ թզենին չծաղկի, և որթատունկի վրա բերք չլինի, ձիթենու արդյունքը ստի, և արտերը կերակուր չտան, ոչխարը կտրվի փարախից, և արջառ չլինի գոմերում, սակայն ես Տիրոջով պիտի ցնծամ, պիտի իմ փրկության Աստծով ուրախանամ» (3.17-18): Որոշ մեկնաբանների կարծիքով՝ Ամբակում անունը նշանակում է «կառչել»: Մենք էլ կարող ենք նույնիսկ փորձությունների պահին կառչել Աստծուն՝ որպես մեր գերագույն հույս և ուրախություն, որովհետև նա մեզ ամուր պահում է ու երբեք չի լքում:

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ ինչ էլ պատահի, ապագաս թեզ հետ լուսավոր է լինելու: Ամեն:**

**Դժվարություններն ու նեղություններն անդակաս են մեր կյանքում, սակայն Աստծով ուրախանալը կօգնի մեզ:**

Ես ձեր մեջ շունչ պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք: (Եզ. 37. 5)

## ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ԱՍՏՎԱԾ

**1** 996-ի նոյեմբերի 4-ին, երբ հտալիայի Ֆլորենցիա քաղաքում աղետալի ջրհեղեղ եղավ, Զորջիո Վագարիի «Խորհրդավոր ընթրիքը» կտավը ավելի քան տասներկու ժամ մնաց ցեխի, ջրի ու տիղմի մեջ: Քանի որ կտավի ներկը խունացել էր, շրջանակն էլ վնասվել, շատերը կարծում էին, որ արվեստի այդ գործն այլևս անհնար է վերականգնել: Սակայն հիսուն տարվա տքնաշան աշխատանքից հետո փորձագետներին ու կամավորներին հաջողվեց, բազում խոչընդոտներ հաղթահարելով, վերանորոգել այն:

Երբ բարեկոնացիները նվաճեցին հսրայելը, ժողովրդին պատեց հուսահատությունը, մաս ու կործանում էր ամենուր, և վերականգնման կարիք կար (տե՛ս Ողբ.1): Այդ պահին Աստված Եղեկիել մարգարեին տարավ մի հովիտ, որը լի էր չորացած ոսկորներով ու հարցրեց նրան. «Մի՞թե կկենդանանան այս ոսկորները»: Եղեկիելը պատասխանեց. «Ո՞վ Տեր Աստված, դու գիտես»(Եզ. 37.3): Աստված խորհուրդ տվեց մարգարեանալ այդ ոսկորների վրա, որպեսզի դրանք կենդանանան: Եղեկիելը պատմում է.«Մինչ մարգարեանում էի, մի ձայն եղավ, և ահա մի դղրդյուն, և ոսկորները մոտեցան՝ ոսկորն իր ոսկորի մոտ» (Հմ.7): Այս տեսիլքի միջոցով Աստված Եղեկիելին հայտնեց, որ հսրայելի վերականգնումը հնարավոր է միայն ի՛ր միջոցով:

Երբ զգանք, որ մեր կյանքում ինչ-որ բաներ կոտրված են և հնարավոր չէ վերանորոգել, Աստված մեզ կվստահեցնի, որ ինքը կարող է նորոգել այդ փշրված կտորները:

**Աղոթք - Հայր, կյանքիս մասերը կարծես հնարավոր չէ նորոգել: Փորձել եմ դրանք շտկել ինքնուրույն, բայց միակ հույսս Դու ես: Անեն:**

**Խնդիրների ու դժվարությունների դաշտառով շատ բաներ կոտրվում են մեր մեջ: Դրանք վերականգնելու համար միայն Ասծուն դեմք է աղավինել:**

Ժողովուրդը չէր կարողանում զանագանել ուրախության աղաղակի ձայնը ժողովրդի լացի ձայնից: (Եղբ. 3.13)

## ՎԻՇՏ ԵՎ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

**Ա**նժելայի ընտանիքը խոր վշտի մեջ էր, որովհետև ընդամենը մեկ ամսում երկու սուգ ունեցան: Եղբոր որդու մահից հետո Անժելան ու իր քույրերը երեք օր նստած էին խոհանոցում և գուրս են եկել միայն աճյունասափոր գնելու և թաղմանը մասնակցելու համար: Զարմանալին այն է, որ սիրելի Մեյսոնի մահը ողբալու հետ մեկտեղ նրանք ուրախանում էին իրենց կրտսեր քրոջ մեջ աճող նոր կյանքի համար:

Ժամանակի ընթացքում Անժելան միխթարություն ու հույս գտավ Հին Կտակարանի եղբասի գրքում: Եղբասը նկարագրում է բարեկոնացիների կողմից տաճարն ավերելուց և իրենց սիրելի քաղաքից արտաքսվելուց հետո ժողովրդի վերադարձը երուսաղեմ (տես Եղբ.1): Նա դիտում էր տաճարի վերակառուցումը, երբ լսեց ուրախ փառաբանություններ՝ ուղղված Աստծուն (3.10-11): Բայց նաև լսում էր նրանց լացը, ովքեր հիշում էին իրենց կյանքը մինչ աքսորը (Հմ.12):

Անժելային հատկապես միխթարում էր հետեյալ հատվածը. «Ճողովուրդը չէր կարողանում զանագանել ուրախության աղաղակի ձայնը ժողովրդի լացի ձայնից, որովհետև ժողովուրդը մեծ աղաղակ էր բարձրացրել» (Հմ.13): Նա հասկացավ, որ մարդը, եթե նույնիսկ խոր վշտի մեջ է, ուրախությունը դարձյալ կարող է հայտնվել:

Բոլորիս հետ էլ կարող է պատահել, երբ սգում ենք մեր սիրելիի կամ որևէ այլ կորուստ: Ուրեմն մեր ցավի ճիչը կարող ենք արտահայտել նաև ուրախության պահերին՝ վստահ լինելով, որ Աստված լսում է մեզ և հավաքում իր գրկում:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր,** այս աշխարհում մենք ցավ ու տառապանք ենք տեսնում: Բորբոքիր մեր մեջ ուրախություն, երբ մենք թեզանից ենք սպասում հույս և ուրախություն: Անեն:

**Ասծոն ժնորհիկ մենք կարող ենք միաժամանակ ժխրել և ուրախանալ:**

Հավատարիմ է նա, ով կանչեց ձեզ, և որը դեռ կանի: (Ա. Թես. 5.24)

## ԱՍՏԾՈ ՁԵՌՔԵՐՈՒՄ

**Տ**ասնութ տարեկան դառնալը նոր սկիզբ դարձավ դստերս կյանքում: Շուտով դպրոցն էլ կավարտեր ու, որպես չափահաս, նա արդեն գալիք ընտրություններում իրավունք ուներ քվեարկելու: Այս փոփոխությունը ինձ մի փոքր տագնապեցրեց, հասկացա, որ աղջկաս քիչ ժամանակ է մնում մեր հարկի ներքո լինելու, և ես յուրաքանչյուր պահն օգտագործելու եմ՝ նրան փոխանցելու այն իմաստնությունը, որ նրան պետք է գալու աշխարհի մարտահրավերներին դիմագրավելիս, նյութական միջոցները տնօրինելիս, ճիշտ որոշումներ կայացնելիս:

Իմ պարտքի զգացումը միանգամայն հասկանալի էր: Ի վերջո սիրում էի նրան և ուզում, որ նա բարգավաճի ու ճիշտ ապրի: Բայց ես նաև հասկացա, որ թեև մեծ գեր ունեմ կատարելու, սակայն դա չէր իմ գլխավոր պարտականությունը: Պողոս առաքյալը թեսաղոնիկեցիներին ուղղված նամակում մի խումբ մարդկանց, որոնց համարում էր իր հոգեզգավակները, քանի որ պատմել էր նրանց Հիսուսի մասին, հորդորեց օգնել միմյանց (Ա. Թես. 5. 14-15) և ի վերջո նրանց աճը վստահեց Աստծուն:

Այսինքն՝ Պողոսն Աստծուն վստահեց այն, ինչ ինքը չէր կարող անել. «Ճեր ամբողջ հոգին, շունչը և մարմինը անարատ պահպեն մինչև Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը» (Հմ.23): Թեսաղոնիկեցիներին ուղղված նամակները թեև պարունակում են ցուցումներ, սակայն նրանց բարօրության ու պատրաստվածության համար Աստծուն ապավինելը սովորեցնում է, որ մեր երեխաների կյանքի աճը ի վերջո Աստծո ձեռքերում է (Ա. Կորնթ.3.6):

**Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ հոգևոր աճի նախաձեռնողն ու ավարտողն ես: Խնդրում եմ օգնիր՝ վստահեմ թեզ այդ լավ աշխատանքի համար: Ամեն:**

**Ասված ամեն ձևով օգնում է մեզ, որդեսզի մենք իր ընորհիվ  
աճենք: Ուստի վստահենք նրան ու մնանք նրա ծեռիւռում:**

Նա կդատի ազգերին և կհանդիմանի շատ ժողովուրդների: (Ես. 2.4)

## ՄԻԱՎՈՐՎՈՂ ԱԶԳԵՐ

**Ա**շխարհի ամենաերկար միջազգային սահմանը ԱՄՆ-ի և Կանադայի միջև է, որն ընդգրկում է ավելի քան 5525 մղոն ցամաքային ու ջրային տարածք: Սահմանի երկու կողմի տասը ոտնաչափ տարածքի ծառերը պարբերաբար կտրվում են, որպեսզի սահմանի գիծը չծածկվի: Մաքրված հողի այդ երկար շերտի վրա, որ կոչվում է «Կտրվածք», ավելի քան ութ հազար քարե ցուցիչներ են տեղադրված՝ ի նշան բաժանարար գծի:

«Կտրվածքի» ֆիզիկական անտառահատումը ցույց է տալիս երկրների կառավարությունների ու մշակույթների տարանջատումը: Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք անհամբերությամբ սպասում ենք այն օրվան, երբ Աստված կփոխի այդ վիճակը և աշխարհի բոլոր ազգերին կմիավորի իր իշխանության ներքո: Եսայի մարդարեն խոսում է ապագայի մասին, երբ նրա տաճարը ամուր հաստատվում ու բարձրանում է (Ես. 2.2): Բոլոր ազգերի մարդիկ հավաքվում են սովորելու Աստծո ճանապարհները և «գնալու նրա շավիղներով» (Հմ.3): Մենք այլևս չենք ապագինելու մարդկային ջանքերին, որոնք ի զորու չեն պահպանելու խաղաղությունը: Որպես մեր իսկական Թագավոր՝ Աստված «կդատի ազգերին և կհանդիմանի շատ ժողովուրդների» (Հմ. 4), ասել է թե՝ կլուծի բոլոր վեճերը:

Կարո՞ղ եք պատկերացնել առանց բաժանումների ու հակամարտություններից զերծ աշխարհ: Աստված խոստանում է դա: Անկախ մեզ շրջապատող անմիաբանությունից՝ մենք կարող ենք «քայլել տիրոջ լույսով» (Հմ.5) և հավատարմորեն հետևել նրան: Որովհետև նա մի օր իր ժողովրդին միավորելու է մեկ դրոշի ներքո:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր, ընդունում են քո իշխանությունը աշխարհի բոլոր ուժերի վրա: Քո թագավորությունը ամեն բանից վեր է: Ամեն:**

**Աշխարհում եղած անմիաբանությունները ժանրանում են մեր սրերի վրա, բայց Աստծո հավիտենական արժայությունը մեզ ուժ է տալիս:**

Ո՞ւր գնամ քո Հոգուց և քո ներկայությունից ո՞ւր փախչեմ: (Սաղմ. 139.7)

## ԱՍՏԾՈ ՀԱՍԱՆԵԼԻՌԹՅԱՆ ՍՎՐՄԱՆՆԵՐՈՒՄ

**Պ**ստիկանը խուզարկեց ինձ, ու ես մտա մեր շրջանի կալանատուն, ստորագրեցի այցելուների մատյանում և նստեցի բազմամարդ նախասրահում: Լուռ աղոթեցի՝ տեսնելով, որ մեծերը անհանգիստ հառաչում էին, երեխաները՝ բողոքում երկար սպասելուց: Ավելի քան մեկ ժամ սպասելուց հետո զինված պահակը մի ցուցակ հրապարակեց, որոնց մեջ էր նաև իմ անունը: Նա մեզ ուղեկցեց մի սենյակ ու ցույց տվեց մեզ համար նշված աթոռները: Երբ ապակուց այն կողմ տեսա խորթ որդուս, որը վերցրեց լսափողը, անօգնականությունը պաշարեց ինձ: Սակայն Աստված վստահեցրեց, որ որդիս գեռես իմ հասանելիության սահմաններում է:

139-րդ սաղմոսում Դավիթն ասում է. «Տե՛ր, դու ինձ քննեցիր և ճանաչեցիր: ....Գիտես իմ բոլոր ճանապարհները» (Հմ.1-3): «Ինձ շրջապատում ես իմ հետեից ու առջեից և քո ձեռքը դրել ես ինձ վրա» (Հմ.5): Աստծո իմացության ծավալից ու Նրա անձնական կապերի խորությունից ճնշված՝ Դավիթը երկու հոետորական հարց է տալիս. «Ո՞ւր գնամ քո Հոգուց և քո ներկայությունից ո՞ւր փախչեմ» (Հմ.7):

Երբ մենք կամ մեր սիրելիները անհույս ու անօգնական վիճակներում ենք լինում, Աստծո ձեռքը մնում է ամուր ու հաստատ: Նույնիսկ, երբ ինքներս գիտակցում ենք, որ շատ ենք շեղվել Նրա սիրառատ փրկագործության ուղուց, մենք դարձյալ Աստծո հասանելիության սահմաններում ենք:

**Աղոթք - Սիրող Հայր, օգնիր հիշել, որ Դու միշտ կամենում ես և կարող ես հասնել ինձ ու իմ սիրելիներին: Անեն:**

**Երբ հայտնվում ենք անհույս ու անօգնական վիճակում, հիշենք,  
որ Աստված միշտ հասանելի է մեզ համար և դատաստ է  
միխթարելու մեզ:**

Ով իր խաչը չի վերցնում ու չի գալիս իմ հետևից, նա ինձ արժանի չէ: (Մատթ. 10.38)

## ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏ ՄՆԱԼՈՒ ՔԱԶՈՒԹՅՈՒՆ

**1** 55թ. եկեղեցական հայր Պոլիկարպին Քրիստոսին հավատալու համար սպառնում էին սպանել: Նա պատասխանեց. «Ութսունվեց տարի ես Նրան եմ ծառայել, և Նա ինձ ոչ մի վատություն չի արել: Ես ինչպե՞ս կարող եմ հայհոյել իմ թագավորին ու փրկչին»: Հայր Պոլիկարպի պատասխանը կարող է յուրատեսակ ոգեշնչող ուղենիշ լինել այն պահերին, երբ մենք նույնպես հավատի պատճառով փորձություններ ու հալածանքներ ենք դիմագրավում:

Տեր Հիսուսի մահից մի քանի ժամ առաջ Պետրոսը համարձակորեն իր հավատարմությունը խոստացավ Նրան. «Ես իմ կյանքը կտամ Քեզ համար» (Հովհ. 13.37): Հիսուսը, որ շատ ավելի լավ էր ճանաչում Պետրոսին, քան նա ինքն իրեն, պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. աքաղաղը գեռ չկանչած՝ դու ինձ երեք անգամ կուրանաս» (Հմ.38): Բայց Հիսուսի հարությունից հետո այդ նույն ուրացողը սկսեց արիաբար ծառայել Նրան և ի վերջո իր մահով փառաբանեց Նրան (տե՛ս 21. 16-19):

Պոլիկա՞րպ, թե Պետրոս: Եթե անկեղծ լինենք՝ մեզանից շատերն ավելի շատ Պետրոս են, այսինքն՝ որպես Հիսուսի հավատացյալ խոսելու կամ պատվով գործելու մեջ ձախողակ: Լինի դասարանում, ժողովարահում, թե փոքր խմբերում, պետք չէ, որ Նրանք մեզ բնորոշեն: Երբ այդ անհաջողությունները տեղի ունենան, աղոթքով մաքրենք փոշին ու դիմենք Հիսուսին՝ Նրան, ով մեռավ և ապրում է մեզ համար: Նա կօգնի մեզ հավատարիմ մնալ իրեն և ամենօրյա դժվարությունների մեջ խիզախորեն ապրել իր համար:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, ների ինձ, երբ ես վախենալով հետ եմ քաշվում և խոսրով ու գործով դավաճանում եմ քեզ: Ես քո զորության կարիքն ունեմ, որպեսզի իբրև Հիսուսին հավատացող՝ անվախ ապրեմ: Ամեն:

**Հիսուսի հավատի մեջ հաստատ մնալու համար կարիք ունենի բազության, որով կկարողանան Նրա բազ վկաները դառնալ:**

Ամեն բանի ժամանակ կա և ժամանակ՝ երկնքի տակ բոլոր գործերին: (Ժող. 3.1)

## ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐ

**Բ**նության մեջ ձմեռը ամեն ինչի դանդաղելու ժամանակն է: Բազմաթիվ գրքերի հեղինակ Քեթրին Մեյը «ձմեռել» բառն օգտագործում է նկարագրելու համար կյանքի ցուրտ եղանակներին ուժեղը վերականգնելու ու հանգստանալու անհրաժեշտության մասին: Համաձայն էի այդ մտքին, որովհետև երբ հայրս հիվանդ էր քաղցկեղով, ես ուժասպառ էի եղել: Վրդովված այդ հարկադիր պարապուրդից՝ ես սկսեցի պայքարել ձմռան դեմ՝ աղոթելով, որ ամառային կյանքը շուտ վերադառնա: Բայց ես սովորելու գեռ շատ բան ունեի: Ժողովողն ասում է. «Ամեն բանի ժամանակ կա և ժամանակ՝ երկնքի տակ բոլոր գործերին: Ծնվելու ժամանակ և մեռնելու ժամանակ, տնկելու ժամանակ և տնկածն արմատախիլ անելու ժամանակ... լացելու ժամանակ և ծիծաղելու ժամանակ, սգալու ժամանակ և պարելու ժամանակ» (Ժող. 3.1-4): Կարդացել էի այս տողերը, բայց իրապես հասկացա, երբ ինքս էի ձմռան շրջանում: Ամեն եղանակ գալիս, անցնում է իր ժամանակին, և մենք շատ քիչ վերահսկողություն ունենք դրանց վրա, որովհետև «մարդը չի կարող սկզբից մինչև վերջը հասկանալ Աստծու արած գործերը» (Հմ.11): Իմ սգի ժամանակը չէր լրացել, հետևաբար ուրախության ժամանակը գեռ գալու էր: Ինչպես բույսերն ու կենդանիները չեն պայքարում ձմռան դեմ, ես էլ պետք է հանգստանամ ու թույլ տամ, որ նա զբաղվի վերականգնման իր աշխատանքով: Ընկերներիցս մեկը, ինձ համար աղոթելով, հարցը Տիրոջը, թե նա կատարում է արդյոք իր գործն իմ կյանքում այս դժվարին եղանակին: Դա ավելի լավ աղոթք էր, քան իմը: Քանի որ Աստծո ձեռքերում եղանակները նպատակային բաներ են, եկե՛ք ենթարկվենք նրա բարենորոգիչ յուրաքանչյուր աշխատանքին:

**Աղոթք - Հայր Աստված, շնորհակալ եմ, որ յուրաքանչյուր եղանակ օգտագործում ես քո փառքի և իմ բարիքի համար: Ամեն:**

**Դաճախ ուզում ենի, որ եղանակները ըուտ ավարտվեն: Բայց իհշենի, որ Աստված դրանցով մեզ համար ինչ-որ բան է ուզում անել:**

Քեզ համար կուռք չշինես: (Ել. 20.4)

## ՄՐՏՎԱՌՈՏ ՏԵՂԵՐ

**Մ**ի քանի խորհուրդ արձակուրդի համար: Հաջորդ անգամ Վիսկոնսին նահանգի Միջթոն քաղաքում ճամփորդելիս այցելեք Մանանեխի ազգային թանգարան, որտեղ կտեսնեք 6090 տեսակի մանանեխ:

Տեխաս նահանգի Մըքլին քաղաքում կարող եք զարմանալ՝ տեսնելով Փշալարերի թանգարանը և իմանալով, որ այդտեղ շատ են սիրում ցանկապատեր պատրաստել: Մի գրող խորհուրդ չի տալիս կեսօրից հետո գնալ Բանանի թանգարան, բայց ես հակառակը կասեի:

Թվարկվածները կարող են, իհարկե, զարմանքից բացի նաև ծիծառ հարուցել, բայց հիասթափեցնող է խոստովանելը, որ բոլորս էլ ունենք մեր սրտամոտ տեղերն ու մեր իսկ ստեղծած կուռքերը: Աստված մեզ հրահանգում է. «Ինձանից բացի ուրիշ աստվածներ չունենաս» (Ել. 20.3), «Նրանց երկրպագություն չանես ու չպաշտես նրանց» (Հմ.5):

Բայց մենք, գուցե, հարստություն կամ հաջողություն ունենալու ակնկալիքով հաճախ ստեղծում ենք մեր սեփական փոքրիկ քանդակները կամ փորագրված արձանիկներն ու ծածուկ պաշտում դրանց:

Տարօրինակ թանգարանների մասին վերելի ծանուցումները մատնանշում են մեր պատասխանատվությունը մեր իսկ ստեղծած մեղքի թանգարանների համար: Բայց Աստված նաև «ողորմում է նրանց մինչև հազարերորդ սերունդը» (Հմ.6): Նա գիտե, որ մեր իսկական բավարարումը իր հանդեպ սիրո մեջ է:

**Աղոթք - Սիրելի Աստված, ուզում եմ, որ Դու լինես իմ կյանքի կենտրոնը: Օգնիր ազատվել իմ պահած կուռքերից: Ամեն:**

**Ունենի մեղքի հատվածներ, որ գաղտնի ենի դահում, բայց կարելի է դրանի տանել Ասծոն մոտ:**

Եթե եղբայրդ քո դեմ մեղանչի, գնա հանդիմանի՛ր նրան, երբ դու և նա առանձին լինեք: (Մատթ. 18. 15)

## ՍԻՐՈ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

**2010թ. Ինդոնեզիայի Սումատրա կղզում տեղի ունեցած ցունամին ավելի քան 100 մարդու մահվան պատճառ դարձավ:** Բայց այդ գժբախտությունը կարելի էր կանխել կամ հետևանքը ները նվազագույնի հասցնել, եթե նախազգուշական համակարգը ճիշտ աշխատեր: Մինչդեռ այն նույնպես անջատվել ու քշվել էր քամու պատճառով: Հիսուսն ասել է, որ իր աշակերտները պարտավոր են իրենց հավատակիցներին նախազգուշացնել այն բաների մասին, որոնք կարող են հոգեւոր վնաս հասցնել նրանց, ներառյալ նաև չզղջացած մեղքը: Նա նկարագրում է մի իրավիճակ, երբ հավատացյալի հանդեպ մեկ ուրիշը մեղք է գործել և հորդորում է.«Եթե եղբայրդ քո դեմ մեղանչի, գնա հանդիմանի՛ր նրան, երբ դու և նա առանձին լինեք» (Մատթ. 18. 15): Եթե մեղավորը զղա, ապա հակամարտությունը կարող է լուծվել, հարաբերություններն էլ՝ վերականգնվել: Բայց եթե նա հրաժարվի ապաշխարել, ապա հարցը պետք է տանել «Եկեղեցի» (ՀՃ.17): Եթե դրանից հետո էլ նա չընդունի իր մեղքը, նրան հարկավոր է հեռացնել եկեղեցուց: Բայց, իհարկե, նա կարող է աղոթել և գուցե նաև ցույց տալ Քրիստոսի իր սերը:

Որպես Հիսուսին հավատացողներ՝ եկե՛ք Աստծուց խնդրենք իմաստնություն ու քաջություն, որպեսզի բավականաչափ հոգատարություն ցուցաբերենք և սիրով միմյանց հայտնենք չզղջացած մեղքի վտանգների և մեր Հոր կատարած վերականգնումի ուրախության մասին: «Որովհետեւ որտեղ երկու կամ երեք հոգի իմ անունով հավաքված լինեն, ես այնտեղ՝ նրանց մեջ եմ» (ՀՃ.20):

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, օգնի՛ր ինձ ուրիշներին այնքան սիրել,** որ տեսնելով, որ ընկնում են մեղքի մեջ, սիրով զգուշացնեն:

**Ամեն:**

**Կարենո՞ւ է մեղքի հարցով խոնարհաբար ու սիրով դիմակայել,** որովհետև չզղջացած մեղքի վտանգները շատ են:

Նաև նեղությունների մեջ ենք պարծենում՝ գիտենալով, որ նեղությունը համբերություն է բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: (Հոռմ. 5.3-4)

## **ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶՈՐԱՑԱԾ**

Հին նամակներն էին նայում, և հետաքրքիր հիշողությունները արթնացան, երբ տեսա մի թերթոն, որի վրա գրված էր. «Ես անցել եմ աչքի զննություն»: Հիշեցի, թե ինչպես էր չորս տարեկան որդիս դիմանում աչքի այրող կաթիլներին և օրական մի քանի ժամ համբերությամբ կտորով փակում մի աչքը: Աչքի մկանների թուլության պատճառով երեխայի առողջ աչքը ստիպված էինք փակել, որպեսզի թույլ աչքը զարգանա: Նաև վիրահատության կարիք եղավ, և նա մեկ առ մեկ տարավ այդ դժվարությունները՝ մխիթարվելու համար նայելով մեզ ու մանկական հավատքով կախված լինելով Աստծուց: Այդ մարտահրավերները նրա մեջ ճկունություն գարգացրին:

Անցնելով փորձությունների ու տառապանքների միջով՝ մարդիկ հաճախ փոխվում են: Պողոս առաքյալն ավելի հեռուն գնաց՝ ասելով. «Նաև նեղությունների մեջ ենք պարծենում՝ գիտենալով, որ նեղությունը համբերություն է բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս» (Հոռմ. 5.3-4):

Պողոսը շատ փորձություններ էր տեսել՝ նավաբեկումներ ու հավատի համար բանտարկություն: Այդուհանդերձ հռոմեացիներին գրեց, որ «Հույսը չի ամաչեցնում, որովհետեւ Աստծու սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով» (Հմ.5): Առաքյալը հասկացել էր, որ Աստծո Հոգին վառ է պահում մեր հույսը Հիսուսի վրա, երբ վստահում ենք նրան:

Ինչ դժվարությունների էլ որ հանդիպես, իմացի՛ր, որ Աստված իր շնորհն ու ողորմությունը կտա քեզ:

**Աղոթք** - Հավերժ սիրող Աստված, Դու խոստանում ես, որ երբեք չես լի ինձ: Օգնի՛ր, որ կառչեմ քո խոստումներին, նույնիսկ երբ մարտահրավերի մեջ եմ: Ամեն:

**Դժվարություններն ու փորձությունները մեզ օգնում են ավելի վստահելու Աստծուն: Վստահենք ու հանձնվենք Նրա խնամքին:**

Տերը քո պահապանն է. Տերը քեզ հովանի է քո աջ ձեռքի մոտ: (Սաղմ. 121. 5)

## ՄԵՐ ԱՊԱՐԱԿ ՏԵՂԸ

**Պ**սուցչուհի Դերի Սթիֆընս Բրաուդերը կենսաթոշակի անցնելուց հետո իր առաքելությունն է դարձրել մարդկանց համոզելը, որ ինչքան հնարավոր է շատ ծառեր տնկեն: Պատճառը գլորալ տաքացումն է, որը ԱՄՆ-ում արդեն բազմաթիվ մարդկանց մահվան պատճառ է դարձել: Վաստակաշատ ուսուցչուհին համայնքները պաշտպանելու կարևոր միջոցներից է համարում ծառերի առատությունը. «Խոսքը միայն համայնքը գեղեցկացնելու մասին չէ: Խոսքն արդեն կյանքի ու մահվան մասին է», - ասում է նա:

Այն փաստը, որ ստվերը ոչ միայն թարմացնող է, այլև գաղտնի կյանք փրկող, հայտնի էր սաղմոսերգուին: 121-րդ սաղմոսում նկարագրված է, թե ինչպես Մերձավոր Արևելքում մշտապես առկա է արևահարության վտանգը: Եվ այդ համատեքստում ավելի է շեշտվում Աստծո՝ որպես ապահովության հանգրվանի դերը. «Յերեկն արեգակը չի զարկելու քեզ, ոչ էլ լուսինը՝ գիշերը» (Հմ.6):

Սաղմոսի այս հատվածը բնավ չի նշանակում, թե Հիսուսին հավատացողներն այս կյանքում պաշտպանված են ցավից, կորստից, կամ էլ բարձր ջերմաստիճանը չի վտանգելու նրանց: Ի վերջո Քրիստոսն ասում է. «Աշխարհում նեղություն պիտի ունենաք» (Հովհ. 16.33): Բայց Աստծո՝ մեր ամպհովանին լինելու խոստումը վստահեցնում է, որ ինչ էլ պատահի, Տերը կպահպանի մեզ ամեն չարից (Սաղմ. 121. 7-8): Նրա խնամքի ներքո մենք կարող ենք հանգիստ գտնել՝ վստահելով իրեն և իմանալով, որ ոչինչ չի կարող բաժանել մեզ նրա սիրուց (Հովհ. 10.28, Հռոմ. 8.39):

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ, որ իմ ամպհովանին ու ապահովության վայրն ես: Օգնի՛ ինձ, որ քո հանդեպ վստահությունս ավելացնելով՝ հանգստություն ու քաջություն գտնեմ: Ամեն:**

**Եթե աղրենի Ասծո վրկարար սսերում, ևա մեզ կորագիք բաջություն, որ հիշենի, որ Նրա խնամքի ներքո են:**

Քո բոլոր ճանապարհներին ճանաչի՛ր նրան, և նա կուղղի քո ճանապարհները: (Առ. 3.6)

## ՅԱՎԱՏՔԻ ԹՈՒՂՔ

**Պ**ատրաստվում էի Կարիբյան ավագանի Մեն Լյուիս կղզու ամենաբարձր կետից զիփլայնով անցնել, և սիրտս հանկարծ ահով լցվեց: Հարթակից ցատկելուց մի քանի րոպե առաջ մտքովս այնպիսի բաներ էին անցնում, որոնք հիմնականում սխալ էին: Բայց քանի որ այլևս չունեի հետ դառնալու տարբերակ, քաջություն հավաքեցի ու ինձ հանձնեցի պարանին: Անտառի վրայով սուրալով՝ անցնում էի փարթամ կանաչ ծառերի միջով, քամին տալիս էր մազերիս, ու մտավախություններս կամաց կամաց սկսեցին ցրվել: Երբ շարժվում էի օդում, թույլ տվեցի, որ ձգողական ուժն ինձ տանի: Երբ երևաց հաջորդ հարթակը, հանգիստ չունչ քաշեցի՝ զգալով, որ արդեն ապահով տեղ եմ հասել: Զիփլայնի վրա անցկացրած պահերն ինձ պատկերացրին այն ժամանակները, երբ Աստված ստիպում է նոր ու գժվարին ջանքեր գործադրել: Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է վստահել Աստծուն և անորոշության ու վարանումի պահերին «քո ըմբռնողությանը մի՛ ապավինիր» (Առ. 3.5): Երբ մեր միտքը լցված է կասկածով ու վախով, մեր ճանապարհները կարող են լինել անհասկանալի ու աղավաղված: Իսկ երբ դուրս գանք հավատով ու Աստծուն վստահելով՝ «նա կուղղի քո ճանապարհները» (Հմ.6): Հավատքի թուիչքներ կատարելիս մենք ավելի վստահ կդառնանք, երբ աղոթքի ու սուրբ գրությունները կարդալու միջոցով սովորենք, թե ով է Աստված:

Մենք կարող ենք նույնիսկ կյանքի գժվարությունների մեջ ազատություն ու հանգստություն գտնել, եթե կախված ենք Աստծուց և թույլ տանք, որ նա մեր կյանքում եղող փոփոխությունները կարդալու միջոցով մեզ առաջնորդի:

**Աղոթք** - Սիրելի Շայր, տո՛ւր ինձ վստահություն և ուժ, որն անհրաժեշտ է իմ կյանքը քեզ վստահելու համար: Ամեն:

**Մեր կյանքում եղած փոփոխությունները կամ մարտահրավերները տահաճում են, որ հավատքի թրիչքը հաջողությամբ իրականացնելու համար ամբողջովին վստահենք Աստծուն:**

Աստված իր առատ ողորմությամբ մեզ վերստին ծնեց կենդանի հույսի համար: (Ա.Պետ. 1.3)

## ԱՍԾՈ ՊԱՐՏԵԶԸ

**Մ**եր տան մուտքի դռան մոտ անցյալ գարնանը կինս լուսնածաղկի մի որթատունկ տնկեց: Բույսն այդպես է կոչվում կղոր ու սպիտակ՝ լիալուսնի նմանվող ծաղիկների պատճառով: Եվ այն գարձավ կյանքի գեղեցկության ու կարճ լինելու մասին մի յուրատեսակ հիշեցում: Յուրաքանչյուր ծաղիկը բացվում է մեկ գիշեր և հաջորդ օրն առավոտյան չորանում է: Բայց լինելով բեղմնավոր բույս՝ այն ամեն օր ունենում է ծաղկած թերթեր և ամեն երեկո գեղեցկուհու նման դիմավորում է մեզ:

Այդ փխրուն ծաղիկները հիշեցնում են Սուրբ Գրքի կենսական ճշմարտություններից մեկը: Պետրոս առաքյալը, հիշելով Եսայի մարգարեի խոսքերը, գրում է. «Վերածնվելով ոչ թե ապականության սերմից, այլ անապականից՝ Աստծու կենդանի ու մնայուն խոսքով: Որովհետեւ ամեն մարմին խոտի պես է, և մարդու ամբողջ փառքը՝ խոտի ծաղկի. խոտը չորանում է, և նրա ծաղիկը՝ թափվում» (Ա. Պետ.1. 23-24): Նա վստահեցնում է, որ «Տիրոջ խոսքը մնում է հավիտյան» (Հմ.25):

Այդու ծաղիկների նման մեր կյանքն էլ երկրի վրա կարծ է, երբ համեմատում ենք հավիտենականության հետ: Բայց Աստված այդ կարճ կյանքում գեղեցկություն է ներդրել: Հիսուսի բարի լուրի միջոցով մենք մի նոր սկիզբ ենք դնում Աստծո հետ և վստահում ենք անսահման կյանքի նրա խոստմանը՝ իր սիրառատ ներկայությամբ: Երբ երկրային արեն ու լուսինը միայն հիշողություն դառնան, մենք գարձյալ փառաբանելու ենք նրան:

**Աղոթք** - Գեղեցիկ Փրկիչ, գովաբանում եմ քեզ՝ իմ ստացած փրկության պարզակի համար: Քո սերը հավիտենական է, և ես սիրում եմ քեզ դրա համար: Ամեն:

**ՄԵՆԻ ՈՒՆԵՆԻ ԱՍԾՈ ԻԵՏ ԼԻՆԵԼՈՒ ԻԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՄԸ,**  
**ՈՒՍԻ ԴԱՏՐԱՍՏ ԼԻՆԵՆԻ ԻԱՎԻՏՅԱՆ ՆՐԱ ԻԵՏ ԻՐ ԴԱՐՏԵՂՈՒՄ**  
**ԼԻՆԵԼՈՒ:**

Պարտեզի բոլոր ծառերից համարձակ կե՛ր, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր: (Ծն. 2. 16-17)

## ՓՐԿԱՐԱՐ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

**2** 022թ. ձմեռային օլիմպիական խաղերում գեղասահորդուհիներից մեկը հրաշալի հանդես եկավ ու ոսկե մեղալ շահցեց: Սակայն հետո մարզուհու արյան մեջ արգելված նյութ հայտնաբերելու պատճառով նա ստիպված եղավ մասնակցել ազատ ծրագրում, և ի վերջո չնվաճեց որևէ մեղալ: Նա ցուցադրել էր գեղարվեստական ազատություն և ստեղծագործական ունակություններ, բայց այդ խայտառակությունից հետո փշրվել էին աղջկա երազանքները:

Մարդկության պատմության վաղ շրջանից ի վեր Աստված բացահայտել է Հնագանդության կարևորությունը մեր ազատ կամքը գործադրելիս: Անհնագանդությունը կործանման տարավ Ադամին ու Եվային և մեզ՝ բոլորիս, քանի որ մեղքը մեր աշխարհին մահ ու ավերածություն բերեց (Ծն. 3. 6-19): Բայց կարող էր այդպես չլինել: Աստված երկուսին էլ ասել էր. «Պարտեզի բոլոր ծառերից համարձակ կե՛ր, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր» (Ծն. 2. 16-17): Բայց լսելով չարին, թե այդ խորհրդին չենթարկվելով՝ իրենց «աչքերը կբացվեն և իրենք աստվածների նման կլինեն և կիմանան բարին ու չարը», նրանք կերան արգելված պտուղը (3.5, 2.17): Դրան հետևեցին մեղքը, ամոթն ու մահը:

Աստված մեզ կոչ է անում մեր իսկ բարօրության համար Հնագանդվել իրեն: Թող նա օգնի մեզ ընտրելու Հնագանդությունը և գտնելու ուրախությամբ լի և առանց ամաչելու կյանք:

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ քեզ՝ իսկական ազատություն ու կյանքն ընտրելու՝ քո ընձեռած հնարավորության համար: Անեն:**

**Աստված Իրեն և Իր ուղիներին հետևելու ազատություն է սկել մեզ: Իմաստուն լինենք և ծիս ընտրություն կատարենք:**

Ի՞նչ առանձին է նստում բազմամարդ քաղաքը: (Ողբ Եր. 1.1)

## ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԴԱՏԱՐԿ Է

**Ե**ղայրներով ու մեր ընտանիքներով այդ օրը զբաղված էինք ծնողներիս իրերը մեր մանկության տնից տեղափոխելով: Երբ վերջին իրերն էինք տանում, և իմանալով, որ վերջին անգամ ենք մեր ընտանեկան հարկի ներքո, միասին նկարվեցինք պատշգամբում: Զէի կարողանում զսպել հուզմունքս, երբ մայրս ասաց. «Այժմ ամբողջովին դատարկ է»: Հիսունչորս տարվա հիշատակներ պահող մեր տունն այժմ դատարկվել էր: Իմ սրտում եղած ձայնը արձագանքում էր Երեմիայի «Ողբի» առաջին խոսքերին (1.1): Բայց էական տարբերությունն այն էր, որ Երուսաղեմը դատարկվել էր «Հանցանքների շատության պատճառով» (Հմ.5): Աստված իր ժողովրդին աքսորեց Բաբելոն, որովհետև նրանք ապստամբել էին իր դեմ՝ չուզենալով ապաշխարել (Հմ.18):

Ծնողներս մեղքի պատճառով չեն, որ տեղափոխվում էին, համենայն դեպք՝ ոչ ուղղակիորեն: Դրախտում Աղամի մեղքից ի վեր ամեն մարդու առողջություն էլ կյանքի ընթացքում վատանում է: Եվ տարիքի հետ սովորական է դարձել ավելի հեշտ պահվող տներում ապրելը:

Ես շնորհակալ եմ այն հիշատակների համար, որոնք առանձնահատուկ են դարձել մեր համեստ տունը: Ցավը սիրո գինն է: Ես գիտեմ, որ հաջորդ հրաժեշտը լինելու է ոչ թե ծնողներիս տանը, այլ ծնողներիս: Եվ ես լալիս եմ, խնդրում Հիսուսին, որ դա ու վերջ դնի հրաժեշտներին և վերականգնի ամեն ինչ: Իմ հույսը նրա վրա է:

**Աղոթք - Հայր, շնորհակալ եմ քո հավերժական ընտանիքում ինձ տուն տալուդ համար: Ամեն:**

**Մենք էլ ունենք հիշատակներ, և փառ Աստում մեզ սիրողների համար: Բայց կարելի է նաև նոր հիշատակներ ստեղծել:**

Իսկ մենք ընկրկողներ չենք, որ կորսվենք, այլ մեր հոգիների փրկությանը հավատացողներ: (Եթ. 10. 39)

## ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

**Ա**շխարհի աղքատ երկրներից մեկում տիրող լարվածությունը, խռովություններն ու անհանգստությունը ջիմիին հետ չպահեցին այդ երկիր գնալուց, որպեսզի խրախուսեր այնտեղ հոգևոր ծառայություն կատարող զույգին: Մեր խմբին ուղղված հաղորդագրությունները ցույց էին տալիս այն դժվարությունները, որոնց նա հանդիպել էր ճանապարհին: Ինչպես այս մեկը օրինակ. «Ճղանե՛ր, աշխուժացրե՛ք աղոթքի գիծը: Վերջին երկու ժամում անցել ենք ընդամենը տասը մղոն: Մեքենան չափից ավելի է տաքանում»: Նա տեղ էր հասել հինգ ժամ ուշացումով, բայց դա չէր խանգարել, որ քարոզը շատ լավ անցներ: Իբրև դրա վկայություն՝ մենք ստացանք այսպիսի նամակ. «Հիանալի, քաղցր հաղորդակցման ժամանակ...մոտ մեկ տասնյակ մարդ առաջ եկավ աղոթքի: Հզոր երեկո էր»:

Աստծուն հավատարմորեն ծառայելը կարող է դժվար լինել: Երբայեցիներին ուղղված նամակում ևս դա է նկարագրված: Աստծո հանդեպ իրենց հավատքով պարտադրված՝ սովորական կանայք ու տղամարդիկ դիմագրավում էին անհարմարություններ և անհասկանալի իրավիճակներ. «Ենթարկվեցին նախատինքների ու գանահարությունների, կապանքների ու բանտի» (Հմ.36): Նրանց հավատը ստիպեց հանձն առնել վտանգը և արդյունքի համար ապավինել Աստծուն: Նույնը վերաբերում է մեզ: Հավատքով ապրելը կարող է մեզ չտանել վտանգավոր տեղեր, այլ օրինակ փողոցի կամ համալսարանի մյուս կողմը, ճաշասենյակի կամ դահլիճի դատարկ տեղը: Իսկ վտանգը հանձն առնել թերեւս արժի, որովհետև դրա պարգևները հիմա կամ հետո կլինեն, քանի որ Աստված մեզ կօգնի:

**Աղոթք - Սիրելի Հայր, խնդրում եմ ուժ ու քաջություն տուր ինձ, որ թողնեմ իմ կյանքը և վստահեմ թեզ: Ամեն:**

**Կարո՞ղ ես վտանգը հանձն առնել և հետևել Հիսուսին, չնայած որ դա անհարմարություններ կդաշտարի թեզ:**

Նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, ավարտին կհասցնի մինչև Հիսուս Քրիստոսի օրը: (Փիլ. 1.6)

## ՄԻԱՅՆԵԼ ՄԱՍԵՐԸ

**Ե**րբ համաճարակի պատճառով մեկուսացած էինք, մեր ընտանիքում մի հավակնոտ ծրագիր ձեռնարկեցինք. սկսեցինք հավաքել տասնութ հազար մասից բաղկացած մի փաղլ: Թեև դրա վրա աշխատում էինք գրեթե ամեն օր, բայց նկատելի առաջընթաց չկար: Եվ միայն հինգ ամիս անց մեր սենյակի ամբողջ հատակն զբաղեցրած գլուխկոտրուկն ամբողջությամբ հավաքվեց:

Երբեմն իմ կյանքը նմանեցնում եմ այդպիսի փաղլի, որի շատ մասեր իրենց տեղում են, բայց շատ ավելին էլ այս ու այն կողմ են ընկած: Ես գիտեմ, որ Աստված աշխատում է ինձ Հիսուսին ավելի ու ավելի նմանեցնելու համար, այնուամենայնիվ, երբեմն դժվարանում եմ առաջընթաց տեսնել:

Այդ պահերին միխթարվում եմ Պողոսի քաջալերանքով: Փիլիպպեցիներին ուղղված նամակում նա գոհություն է հայտնում Աստծուն նրանց կատարած աշխատանքի համար (1.3-4): Բայց առաքյալի վստահությունը ոչ թե նրանց կարողությունների, այլ Աստծո հանդեպ էր, որը «Ճեր մեջ այս բարի գործն սկսեց, ավարտին կհասցնի մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Հմ. 6):

Աստված խոստացել է ավարտել իր աշխատանքը մեր մեջ: Փաղլի նման մեր կյանքում էլ կարող են լինել մանր մասեր, որոնք ուշադրության արժանի են, և կարող են լինել պահեր, երբ կթվա, որ առանձնապես մեծ առաջընթաց չունենք: Բայց մենք կարող ենք վստահ լինել, որ մեր հավատարիմ Աստվածը դեռ միացնում է մասերը:

**Աղոթք -Երկնավոր Յայր, խնդրում եմ ինձ տուր հավատի աչքեր, որպեսզի տեսնեմ, որ իմ կյանքում դեռ գործում ես: Ամեն:**

**Ասւկած գործում է՝ միացնելով մեր կյանի մասերը և գեղեցկացնելով այն:**

Ես քեզ չեմ նոռանա: (Ես. 49. 15)

## ԱՍՏԾՈ ԱՏՈՒՅՑԳ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Մ**ի մարդ ավելի քան 400 մէն դոլարի հավասար բիթքոին ուներ, բայց չէր կարող օգտագործել մեկ ցենտ անգամ, որովհետև կորցրել էր հաշվեհամարի գաղտնաբառը: Սարսափելին այն էր, որ տասը անհաջող փորձից հետո քարտը ոչնչանալու էր, և նա կորցնելու էր իր ողջ կարողությունը: Ուստի նա շատ զգուշորեն էր փորձում գտնել այն: Տասը տարի շարունակ մարդը ուժ անգամ փորձեց հիշել գաղտնաբառը, բայց իզուր: 2021-ին ափսոսում էր, որ իր հարստությունը փրկելու ընդամենը երկու հնարավորությունն է մնացել:

Մարդիկ մոռացկոտ են, երբեմն մոռանում են փոքր, երբեմն էլ շատ մեծ բաներ: Բարեբախտաբար, Աստված մեզ նման չէ: Նա երբեք չի մոռանում իր համար թանկ բաներն ու մարդկանց: Իսրայելի ժողովուրդը դժբախտության մեջ վախեցավ, թե «Տերն ինձ լքել է, իմ Տերն ինձ մոռացել է» (Ես. 49.14): Սակայն Եսային մարդկանց վստահեցրեց, որ Աստված միշտ իրենց հետ է. «Մի՞թե կինը կմոռանա իր կաթնակեր մանկանը և չի դթա իր որովայնի ծնունդին: Եթե նա մոռանա իսկ, ես, սակայն, քեզ չեմ մոռանա» (Հմ.15):

Աստված ասում է. «Ահա ես իմ ձեռքերի ափերի մեջ փորագրել եմ քեզ» (Հմ.16): Աստված մեր անունները փորագրել է իր էռության մեջ: Եկե՛ք հիշենք, որ նա չի կարող մոռանալ մեզ՝ նրանց, ում սիրում է:

**Աղոթք - Սիրելի՝ Աստված, երախտապարտ եմ, որ քո հիշողությունը ամուր ու վստահելի է: Ամեն:**

**Որդես մարդ արարածներ՝ մենի հաճախ ենի մոռանում ինչ-որ բաներ: Բայց մեր հավիտնական Աստօն հիշողությունը ստույգ է ու հասաւ:**

Ահա ես իմ խոսքերը քո բերանի մեջ դրեցի: (Եր.1.9)

## ԶԱՅՆԻ ՈՒԺԸ

**Պ**ատմության մեջ քիչ չեն այն հռետորները, որոնք դրական փոփոխությունների համար օգտագործել են իրենց ձայնը և դարձել առաջնորդներ: Օրինակ, Ֆրեդերիկ Դավլասի ելույթները ազատության մասին սկսեցին մի շարժում, որն օգնեց վերջ դնել ստրկությանը ԱՄՆ-ում: Իսկ ի՞նչ կիներ, եթե նա նախընտրեր լուել: Բոլորս էլ կարող ենք օգտագործել մեր ձայնը ուրիշներին օգնելու ու ոգեշնչելու համար, սակայն բարձրաձայնելու վախը մեզ ստիպում է լուել: Ճնշվածության այդ պահերին կարող ենք դիմել Աստծուն՝ իմաստնության ու քաջալերանքի աղբյուրին:

Երբ Աստված Երեմիային կանչեց մարգարեության, նա անմիջապես սկսեց կասկածել իր կարողություններին՝ ասելով «Ո՛վ Տեր Աստված, ահա ես խոսել չգիտեմ, որովհետեւ ես մանուկ եմ» (Եր.1.6): Բայց Աստված թույլ չտվեց, որ վախը խանգարեր Երեմիայի աստվածային կոչմանը՝ իր ձայնով մի ողջ սերնդի ոգեշնչելուն: Նա մարգարեին հորդորեց ուղղակի վստահել Աստծուն, անել և ասել այն, ինչ ինքը կհրամայի (Հմ.7): Երեմիային հաստատելով այդ կոչման մեջ՝ Աստված նաև զինեց նրան.«Ահա ես իմ խոսքերը քո բերանի մեջ դրեցի» (Հմ.9):

Երբ մենք Աստծուց խնդրում ենք, որ մեզ ցույց տա, թե ինչպես է ինքը ուզում մեզ օգտագործել, նա կարող է նաև զինել մեզ՝ իրականացնելու մեր նպատակները: Նրա օգնությամբ կարող ենք համարձակորեն օգտագործել մեր ձայնը՝ մեր շրջապատի վրա դրական ազդեցություն թողնելու համար:

**Աղոթք - Երկնավոր Յայր, ինձ ուժ տուր՝ խոսքի զորությամբ դրականորեն ազդելու իմ շրջապատի վրա: Ամեն:**

**Չվախենա՞ն վկայելու համար օգտագործել մեր ձայնը և մեր հույսը դնեն Ասծո զորության ու իմաստնության վրա:**

Դրա համար ծնկի են գալիս մեր Տեր Յիսուս Քրիստոսի Դոր առաջ, որից երկնքում ու այս երկրի վրա եղող ամեն ծնունդ անուն է ստանում: (Եփ. 3. 14-15)

## ՆՈՐՈԳԵԼ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԵԶԵՆԱՆ (GO-KART)

**Ի**մ մանկության ավտոտնակի հետ կապված շատ հուշեր կան: Շաբաթ օրերին հայրս մեր ավտոմեքենան դուրս էր բերում, որպեսզի տեղ ազատվեր իմ սիրելի գործի համար. գտել էինք մի փոքրիկ փչացած մարզական մեքենա և նորոգում էիք այն: Նոր անիվներ տեղադրեցինք, պլաստիկ դիմապակի, նույնիսկ թալիսման ամրացրինք, և ես դրանով արագ սուրում էի ցած: Հիմա հետ նայելով՝ հասկանում եմ, որ այդ ժամանակ մեր ավտոտնակում շատ ավելին էր կատարվում, քան ուղղակի go-kart-ի նորոգումն է: Հոր օգնությամբ ձեւավորում էր պատանի որդին՝ այդ ընթացքում տեսնելով ու ճանաչելով Աստծուն:

Մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով (Ծնն. 1. 27-28): Մարդկային դաստիարակությունը նույնպես Աստծուց է գալիս, քանի որ Նրանից է «երկնքում ու այս երկրի վրա եղող ամեն ծնունդ անուն ստանում» (Եփ. 3. 14-15): Աշխարհ բերելով երեխաներին, ապա պաշտպանելով ու դաստիարակելով նրանց՝ ծնողներն ընդօրինակում են Աստծուն, արտահայտում հատկություններ, որոնց աղբյուրը նույնպես Հայր Աստվածն է: Նա օրինակ է, որի վրա հիմնվում են բոլոր ծնողները: Հայրս կատարյալ չէր: Մյուս ծնողների նման նրա դաստիարակությունն էլ երբեմն ուներ թերություններ: Բայց երբ ավտոտնակում նորոգում էինք իմ մարզական մեքենան, այդ պահերին նա ուզում էր նմանվել Աստծուն, որպեսզի ինձ հնարավորություն տար տեսնել նրա դաստիարակության ու պաշտպանության ձեւը:

**Աղոթք - Հայր Աստված, օգնի՛ր դաստիարակելու և պաշտպանելու մեր և ուրիշների երեխաներին՝ բացահայտելով թո լավ հատկությունները: Ամեն:**

**Աստված arتسացոլում է լավ ժնող լինելու էռությունը: Մենք էլ կարող ենք նույնը ցույց տալ մեր զավակներին:**

Այն ազատությամբ, որ Քրիստոսը մեզ ազատեց, հաստատուն կացեք: (Գաղ. 5.1)

## ԿՅԱՆՔԸ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

**S**եխասում, որտեղ ես հասակ եմ առել, ամեն հունիսի 19-ին սեամորթ համայնքներում տոնական շքերթ ու խնջույքներ են անցկացվում: Այդ օրվա իմաստը ես իմացա, երբ արդեն պատանի չէի: Հունիսի 19-ը նշվում է, որովհետև 1865թ. այդ օրն են Տեխասի ստրուկներն իմացել, որ նախագահ Աբրահամ Լինքոլնի հոչակագրով դեռ երկուսուկես տարի առաջ ստրկությունը վերացվել է: Իսկ իրենք շարունակում էին ապրել ստրկության մեջ, քանի որ չգիտեին իսկությունը:

Կարելի է լինել ազատ, բայց ապրել որպես ստրուկ: Գաղատացիներին ուղղված նամակում Պողոս առաքյալը գրում է մեկ այլ տեսակի ստրկության՝ կրոնական կապանքների մասին: Այդ առանցքային հատվածում նա իր ընթերցողներին քաջալերում է. «Այն ազատությամբ, որ Քրիստոսը մեզ ազատեց, հաստատո՞ւն կացեք ու դարձյալ ծառայության լծի տակ մի՛ մտեք» (Գաղ. 5.1): Հիսուսին հավատացողներն ազատված են արտաքին կանոններից՝ ի՞նչ ուտել, ու՞մ հետ ընկերանալ և այլն: Շատերը, սակայն, դեռ ապրում են ստրկացածի նման:

Դժբախտաբար, այսօր էլ նույն վտանգը կա: Բայց իրականությունն այն է, որ Հիսուսը մարդու ստեղծած կրոնական չափանիշներից վախելանուց մեզ ազատեց այն պահից, երբ մենք վստահեցինք իրեն: Ազատություն է հոչակված: Եկե՛ք ապրենք այն՝ նրա տված գորությամբ:

**Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ ինձ ազատեցիր ճնշող կանոնների բերից: Ամեն:**

**Կրոնական կանոնները ճնշում են մեզ, բայց մենք Տե՛ր Հիսուս Քրիստոսվ կարող ենք ազատության մեջ լինել:**

Սուրբ և անարատ կրոնասիրությունն Աստծու ու Հոր առաջ այս Է որբերին և այրիներին նրանց նեղության ժամանակ այցելել: (Հակ. 1.27)

## **ՏԵՄԱՐԻՏ ԿՐՈՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**Ք**ոլեջում սովորելու երկրորդ տարվա ամռանը դասընկեր-ներիցս մեկը հանկարծամահ եղավ: Մենք դեռ շատ երի-տասարդ էինք և քույր ու եղբայր էինք դարձել՝ միմյանց խոս-տանալով պահպանել մտերմությունն ու կապը:

Ինձ հատկապես շատ է տպավորել այն, որ մեր դասընկերոջ մահից հետո մենք ապրում էինք Հակոբոս առաքյալի անվանած «անարատ կրոնասիրությամբ» (1.27): Մեր եղբայրության տղաները հանդուցյալի քրոջ համար դարձան իսկական եղ-բայրներ. ներկա եղան նրա հարսանիքին, ապա երեխա ունենա-լու ուրախ հավաքին: Մեկը նույնիսկ նրան բջջային հեռախոս նվիրեց, որպեսզի անհրաժեշտության դեպքում կապ հաստատի իր հետ:

Ըստ Հակոբոսի՝ ճշմարիտ կրոնը սա է.«Որբերին և այրիներին նրանց նեղության ժամանակ այցելել» (Հմ. 27): Թեև դասընկե-րոջս քույրը որբ չէր ուղղակիորեն, բայց նա կորցրել էր եղբո-րը, և նոր «եղբայրները» լրացնում էին այդ բացը:

Մենք բոլորս ուղում ենք Հիսուսով ճշմարիտ ու մաքուր կյանք վարել, դրա համար հարկավոր է.«Խոսքը կատարողնե՛ր լինել և ոչ միայն լսողներ» (Հմ.22), ներառյալ կարիքավոր մարդկանց հանդեպ հոգատարությունը (Հմ. 2. 14-17): Աստծո հանդեպ մեր ունեցած հավատը մեզ հուշում է հոգ տանել խոց-վածների համար, քանի որ երբ նա օգնում է մեզ, դրանով մենք մեզ ենք պաշտպանում աշխարհի բացասական ազդեցություն-ներից: Եվ ի վերջո դա է Աստծո ընդունած իսկական կրոնասի-րությունը:

**Աղոթք - Երկնավոր Հայր, բաց աչքերս, որպեսզի տեսնեմ, թե որտեղ կարող եմ օգնել խոցելի մարդկանց, ինչպես դու ես առաջնորդում: Ամեն:**

**ԵՇԱՄԱՐԻՏ ԿՐՈՆ ՈՒ ԱՆԿԵՆԾԻ ԻԱՎԱՏ ԴՐՍՆՈՐԵԼՈՒ ԻԱՄԱՐ ԿԱՐԵԼԻԳ ԵՂԻՌ ԱՐԱՆ ԱԿԱՏՄԱՄԲ, ՈՎԵԵՐ ՈՒՆԵՆ ԴՐԱ ԿԱՐԻՒՐ:**

Ինչքա՞ն բարի և ինչքա՞ն ցանկալի է, որ եղբայրները բնակվում են միասին, իրար հետ: (Սաղմ. 133.1)

## ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

**Ե**րեք հոգանոց տասնյակ խմբերը պատրաստվում էին քառատրոփի մրցավագքի: Ցուրաքանչյուր կողմում եղածները կապված էին մեջտեղում գտնվողների հետ և յուրաքանչյուր եռյակի հայացքը հառած էր վերջնագծին: Սուլիչը հնչեց, և խմբերը նետվեցին առաջ: Վազքի ընթացքում շատերն ընկնում էին ու նորից վեր կենում, որոշ խմբեր ցատկելով էին անցնում վազքուղին: Ոմանք կես ճանապարհին հանձնվեցին: Իսկ խմբերից մեկը մի փոքր հետաձգեց մեկնարկը, ևս մեկ անգամ ճշտեց իր ծրագիրը, խմբի անդամները շփվեցին միմյանց հետ և նոր միայն առաջ շարժվեցին: Արդյունքում, թեև նրանք էլ սայթաքեցին, բայց կարողացան հասնել վերջնագծին: Նրանց օգնեց քայլ առ քայլ համագործակցելու պատրաստակամությունը:

Հիսուսին հավատացողների մեջ Աստծո համար ապրելը հաճախ նույնքան դժվար է թվում, որքան քառատրոփի վազքով առաջ գնալը: Շփվելով տարբեր մտածելակերպ ու կարծիք ունեցող մարդկանց հետ՝ մենք հաճախ սայթաքում ենք: Պետրոսը գալիք կյանքի միասնության համար խորհուրդ է տալիս օգտագործել աղոթքի, հյուրասիրության և մեր պարգևների ուժը: Նա հավատացյալներին հորդորում է «Միմյանց նկատմամբ ջերմ սեր ունեցեք» (Ա. Պետ. 4.8), «յուրաքանչյուր ոք ինչ չնորհ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեք որպես Աստծո զանազան չնորհների բարի տնտեսներ» (Հմ. 10): Երբ մենք խնդրենք Աստծուն, որ օգնի մեզ շփվել, համագործակցել, կկարողանանք առաջնորդել մրցավագքը և ուրախությամբ ընդունելով մեր տարբերությունները՝ ապրել միասին:

**Աղոթք - Յզո՞ր Աստված, խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ ուրիշների հետ շփվեմ և համագործակցեմ, երբ սովորում եմ քեզ ննան սիրել: Ամեն:**

**Ասկած կօգնի մեզ, եթե մենք դատաստ ենք մեզանից swarptեր մտածելակերդ ունեցող մարդկանց հետ աշխատելու:**

Յավատը լսելուց է, իսկ լսելը՝ Քրիստոսի խոսքից: (Հռոմ. 10.17)

## ՅԱՎԱՏԸ ԼՍԵԼՈՒՑ Է

« ովիզ Բոբը վնասվածք էր ստացել, որն ազդել էր նրա ձայնի վրա: Եվ նա շատ էր ճնշվել ու մտածում էր, թե ինչ կարող է անել հովիվն առանց խոսելու: Իր վիճակի համար զայրույթն ու տիրությունը նա հայտնեց Աստծուն՝ մտածելով. «Ես միայն մեկ բան գիտեի անել՝ գնալ Աստծո Խոսքի հետևից»: Բայց երբ ավելի շատ ժամանակ հատկացրեց Աստծո Խոսքը կարդալուն, Աստծո հանդեպ նրա սերն սկսեց աճել, և նա ասաց. «Ես իմ կյանքը նվիրել եմ Աստծո Խոսքի մեջ խորանալուն, որովհետեւ հավատը լսելուց է, իսկ լսելը՝ Քրիստոսի խոսքից»:

Պողոս առաքյալը հոռմեացիներին ուղղված նամակում նույն բանն է ասում. « Հավատը լսելուց է, իսկ լսելը՝ Քրիստոսի խոսքից» (Հմ. 10.17): Նա փափագում էր, որ հրեա ժողովուրդը հավատա Քրիստոսին ու փրկվի (Հմ.9): Իսկ ինչպե՞ս՝ այն հավատով, որը գալիս է Քրիստոսի մասին եղած խոսքը լսելով:

Հովիզ Բոբը ձգտում է ստանալ Քրիստոսի պատգամն ու հավատալ դրան, հատկապես երբ կարդալ մեջ է Աստվածաշունչը: Նրան կարդալ թույլատրված է ընդամենը մեկ ժամ: Այդ ընթացքում կոկորդն անընդհատ ցավում է, բայց նա շարունակում է խաղաղություն և գոհունակություն գտնել Աստծո Սուրբ Խոսքի միջոցով: Մենք էլ կարող ենք վստահ լինել, որ մեր պայքարի մեջ Հիսուսը իրեն է բացահայտում: Երբ մենք լսենք նրա պատգամը, նա կավելացնի մեր հավատը, ինչ մարտահրավերի էլ որ հանդիպենք:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր,** Դու ինձ հույս ես տալիս, նույնիսկ երբ ես ցավի մեջ եմ: Զևավորի՛ր ինձ որպես Քեզ ննան անձնավորություն: Ամեն:

**Աստվածաշնչի մեջ խորանալը կարմատավորի մեր հավատը, և մենք նույնիսկ կյանի՛ր դժվարի՛ն դայմաններում բավարարություն կգտնենք:**

Խրայելը տեսավ այն հղոր ձեռքը, որ Տերը ցուց տվեց եգիպտացիների վրա: Եվ ժողովորդը վախեցավ Տիրոջից, հավատաց Տիրոջն ու նրա ծառա Մովսեսին: (Ել. 14):

## **ԱՍԾՈ ԶՈՐԵԴ ՈՒԺԸ**

**2** 021 թ. տեղի ունեցավ անհնարին թվացող մի բան. «Աիդա» անունով փոթորիկը հասավ Լուիզիանայի ափերը և փոխեց Միսիսիպի գետի հունը, այն հոսում էր գեպի վերև:

Մասնագետների գնահատականներով՝ այդպիսի փոթորիկները կարող են իրենց մեջ կուտակել 10 հազար միջուկային ոռումքի ուժին հավասար հզորություն: Հոսող ջրի ընթացքը փոխելու ընդունակ անհավանական ուժի էներգիան ինձ օգնում է հասկանալ իսրայելցիների արձագանքը ելք գրքում արձանագրված շատ ավելի մեծ «հակառակ հոսանքին»:

Երբ փախչում էին դարեր շարունակ իրենց ստրկացրած եղիպտացիներից, իսրայելցիները հասան կարմիր ծովի ափ: Նրանց առջևում անծայրածիր ջուրն էր, հետեւում՝ ծանր զրահապատ զորքը: Այդ անհնարին թվացող իրավիճակում.«Տերն արելյան սաստիկ քամիով ամբողջ գիշեր քշեց ծովը և ցամաքեցրեց այն, ու ջրերը ճեղքվեցին: Իսրայելի որդիները ծովի միջով ցամաքով գնացին: Ջրերը նրանց աջ ու ձախ կողմերից պարիսպ դարձան» (Ել. 14. 21-22): Այդ անհավանական թվացող իրավիճակից փրկվելով՝ «ժողովուրդը վախեցավ Տիրոջից» (Հմ. 31):

Աստծո զորության անսահմանությունը զգալուց հետո վախը բնական էր: Ասկայն գործը դրանով չավարտվեց. իսրայելցիները նաև «հավատացին Տիրոջն ու նրա ծառա Մովսեսին» (Հմ. 31):

Մենք էլ, զգալով Աստծո արարչական ուժը, կարող ենք ակնածել նրա զորությունից և վստահել ու հավատալ նրան:

**Աղոթք - Արարի՛ Աստված, խնդրում եմ՝ օգնի՛ ինձ, որ ավելի վստահեն քեզ, երբ տեսնում եմ քո ուժի ահավոր դրսելումները: Անեն:**

**Տեսնելով Ասծո զորության դրսերումները արարչության մեջ՝ ավելի շատ ուժի վստահեն նրան:**

Ավելացած կտորները հավաքե՛ք, որպեսզի ոչինչ չկորչի: (Հովհ. 6.12)

## ՆԱ ՆՈՐԱՑՆՈՒՄ Է ՄԵԶ

**Գ**ործարար Շռն Սեյփլերը առաջին հայացքից տարօրինակ գործով է զբաղվում: Ուշադրություն դարձնելով այն փաստին, որ Հյուրանոցներում շատ քիչ օգտագործված օճառները աղբանոց են նետվում, նա որոշեց նոր կյանք տալ դրանց: Հիմնեց «Մաքուր աշխարհ» ընկերությունը, որը Հյուրանոցներից ստանալով օճառների ու շամպունների մնացորդները՝ վերամշակում է դրանք և ուղարկում ավելի քան հարյուր երկրի կարիքավոր մարդկանց: Բարեգործական կազմակերպության նախաձեռնությունն, անշուշտ, ունի մաքրության, հիվանդություններն ու մահերը կանխելու նպատակ: «Գիտեմ, որ շատերի համար կարող է ծիծաղելի թվալ, բայց Հյուրանոցի փոքրիկ օճառը կարող է կյանքեր փրկել», - ասել է Շռն Սեյփլերը:

Օգտագործված ինչ-որ բան հավաքելն ու դրան նոր կյանք հաղորդելը նաև Հիսուսի սիրած գործերից է եղել: Այսպես, երբ նա հինգ հազարանոց ամբոխին կերակրեց հինգ փոքր հացով և երկու ձկով, աշակերտներին ասաց. «Ավելացած կտորները հավաքե՛ք, որպեսզի ոչինչ չկորչի» (Հովհ. 6.12):

Մենք էլ, երբ «լվացված» ենք զգում, Աստված մեզ տեսնում է ոչ որպես «վատնված կյանքեր», այլ որպես իր հրաշքներ: Մենք իր աչքին նետված բաներ չենք, որովհետեւ ունենք աստվածային ներուժ՝ նոր ոլորտում աշխատելու համար: «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է, հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ.Կորնթ. 5.17):

Ի՞՞նչն է մեզ նորացնողը, մեր միջի Քրիստոսը:

**Աղոթք - Յայր, երբ ես անկարևոր եմ զգում, օգնի՛ր ինձ քո մեջ տեսնել իմ նոր կյանքը: Ամեն:**

**Երբ իեզ անարժեֆ զգաս, իիշի՛ր, որ Յիսուսը իեզ նորացել է իր շնորհով:**

Քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահն եք պատմում, մինչև որ նա գա: (Ա.Կորնթ. 11.26)

## ՀԻՇԵԼ ԶՈՅԵՐԻՆ

**Կ**իրակի առավոտյան պաշտամունքից հետո մոսկվացի իմ հյուրընկալն ինձ տարավ ճաշի: Տեղ հասնելուց հետո նկատեցի, որ մի քանի նորապսակ զույգեր մոտենում էին Կրեմլի պատի տակ գտնվող Անհայտ զինվորի գերեզմանին, ծաղկկ դնում ու լուսանկարվում: Իրենց կյանքի հիշարժան օրն այդտեղ այցելելով՝ նրանք հարգանքի տուրք էին մատուցում այն մարդկանց հիշատակին, որոնց շնորհիվ հնարավոր է եղել իրենց երջանկությունը: Սա իսկապես սթափեցնող տեսարան էր:

Բոլորս էլ երախտապարտության պատճառ կարող ենք ունենալ մարդկանց, որոնք զոհաբերություն են արել մեր կյանքը բարելավելու համար: Դրանք անկարեւոր չեն կարող լինել, ոչ էլ ամենակարեւորն են: Որովհետև միայն խաչի վրա է, որ մենք տեսնում ենք Հիսուսի զոհաբերությունը մեզ համար և սկսում հասկանալ, թե մեր կյանքը որքանով է պարտական Փրկչին:

Հաղորդություն ընդունելու համար Տիրոջ սեղանին մոտենալը մեզ հիշեցնում է Տեր Հիսուսի զոհաբերության մասին, որ պատկերված է հացի ու բաժակի միջոցով: Պողոսը գրել է. «Քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահն եք պատմում, մինչև որ նա գա» (Ա.Կորնթ. 11.26): Թող Նրա սեղանի մոտ անցկացրած ժամանակը մեզ հիշեցնի, որ ամեն օր ապրենք ի հիշատակ և ի երախտագիտություն այն ամենի, ինչ Տեր Հիսուսն արել է մեր մեջ ու մեզ համար:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր,** ոչինչ չի կարող հատուցել սիրո այն անգին դրսեւրումը, որ վկայում է Յիսուսի՝ խաչի վրա արած զոհաբերությունը: Օգնի՞ր ինձ, որ երախտագիտությունս ցույց տամ այն ամենի համար, ինչ Նա արել է հանուն մեզ: Ամեն:

**Ինչո՞ւ են մոտենում Տիրոջ սեղանին: Թող դա լինի հնարավորություն՝ մեր ընորհակալությունը հայսնելու իր զոհաբերության համար:**

Որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի: (Մատթ. 6.21)

## ՅԵՇ ՓՈՂ

**1** 700-ականների վերջերին մի երիտասարդ, Նովա Ակոտիա Օք կղզում առեղծվածային անհարթություններ հայտնաբերելով, մտածեց, որ հավանաբար ծովահեններն են դրանց հեղինակները, նույնիսկ ինքը՝ հրամանատար Քիղը, որ գուցե և գանձեր են թաքցրել: Եվ նա ու իր ուղեկիցներն սկսեցին փորել: Գանձ, իհարկե, չգտան, բայց սուտ լուրերն այնպիսի տարածում ունեցան, որ հետագա դարերում նույնպես այդ փնտրատուքները շարունակվեցին՝ փոսի խորությունը հասցնելով ավելի քան երեսուն մետրի: Այդպիսի մոլուցքները ցույց են տալիս մարդու սրտի դատարկությունը: Աստվածաշնչային մի պատմություն ևս փաստում է մարդու վարքագծի և էության սերտ կապը: Գեեղին եղիսե մարգարեի վստահելի ծառան էր, որ երկար տարիներ ծառայում էր նրան: Երբ եղիսեն հրաժարվեց նվերներ ընդունել Նեեման սպարապետից, որին Աստված բուժել էր բորոտությունից, եեղին որոշեց օգտվել առիթից ու ստելով ստանալ այդ նվերների մի մասը (Դ. թագ. 5.22): Տուն վերադառնալով Գեեղին խաբեց մարգարեին (Հմ.25): Բայց եղիսեին հայտնի էր իսկությունը և հարցրեց նրան. «Զէ՞ որ իմ հոգին գնացել էր այնտեղ, երբ այն մարդը ետ դարձավ, իջավ կառքից՝ քեզ դիմավորելու» (Հմ.26): Սակայն ու ագահության համար Գեեղին կորցրեց ավելի կարևոր բան՝ արժանացալ անեծքի. «Թող Նեեմանի բորոտությունը հավիտյան կազի քեզ ու քո սերնդին» (Հմ.27): Տեր Հիսուսը մեզ սովորեցնում է չհետապնդել այս աշխարհի գանձերը, փոխարենը «երկնքում գանձեր դիզեք» (Մատթ. 6.20): Զգուշանանք մեր սրտի ցանկություններից: Հիսուսին հետեւը դատարկությունը իրական բաներով լցնելու միջոց է:

**Աղոթք -** Սիրելի՝ Յայր, ցանկություններս հանձնում եմ քեզ: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ ցանկանալու Քո գանձերը, որոնք Դու գնահատում ես: Ամեն:

**Ի՞նչ ես ուզում ամենաւաս, և ո՞ր ցանկություններն ու մոլուցներն են, որ դատարկում են ինք:**

Եթե թշնամիդ սոված է, ուտելու հացդ տո՛ւր նրան, և եթե ծարավ է, խմելու ջո՛ւր տոլու նրան....որովհետև այդպիսով նրա գլխի վրա կայծեր կողիցես: (Առ. 25. 21-22)

## ԿՐԱԿԻ ԿԱՅԾԵՐ ԴԻԶԵԼ ՈՍՈԽԻ ՎՐԱ

**Ա**մեն օր բանտապահը ծեծում էր Դենին: Բայց նա զգում էր, որ Հիսուսն իրեն ստիպել էր սիրել այդ մարդուն, ուստի մի առավոտ, ծեծն սկսելուց առաջ Դենն ասաց. «Պարո՛ն, եթե մենք ամեն օր տեսնելու ենք իրար, արի՛ բարեկամանանք»: Պահակը մերժեց: Բայց Դենը պնդեց ու ձեռքը մեկնեց նրան:

Հանկարծ պահակը սկսեց դողալ, բռնեց Դենի ձեռքն ու բաց չէր թողնում: Արցունքների միջից նա ասաց. «Դե՛ն, իմ անունը Ռոսոր է, ես ուզո՛ւմ եմ քո ընկերը լինել»: Պահակն այդ օրը չծեծեց Դենին:

Սուրբ Գիրքն ասում է.«Եթե թշնամիդ սոված է, ուտելու հացդ տո՛ւր նրան, և եթե ծարավ է, խմելու ջո՛ւր տոլու նրան....որովհետև այդպիսով նրա գլխի վրա կայծեր կդիպես» (Առ. 25. 21-22): Կայծերի պատկերը կարող է նաև եղիպտական ծեսի արտացոլումը լինել, երբ մեղավորը իր զղջումը ցույց է տալիս՝ գլխին տաք ածուխով լի աման տանելով:

Այդպես էլ մեր բարությունը կարող է առիթ դառնալ, որ մեր թշնամիներն ամաչեն և դա նրանց մղի ապաշխարության:

Ո՞վ է քո թշնամին: Ո՞ւմ չես սիրում: Դենը հայտնաբերեց, որ Քրիստոսի բարությունը բավականաչափ ուժեղ է, որպեսզի փոխի ոսոխի սիրտը: Մենք էլ կարող ենք հետևել Դենին:

**Աղոթք - Սիրելի՛ Յիսուս, գովաբանում եմ Ձեզ, որ Ձո բարությունն ինձ տանում է դեպի ապաշխարություն և ոգեշնչում, որ բարի լինեն թշնամիներիս հանդեպ: Ամեն:**

**Ասված մեզ վստահեցնում է, որ բարի գործ անելով՝ մեր բժնամու գլխին կրակե կայծեր կդիպենք: Աղոթենք այդ դժվար, բայց կարևոր գործն անելու համար:**

Դու ինձ հետ ես: (Սաղմ. 23.4)

## ԵՐԲ ՄԵՆԱԿ ԵՍ

**Ե**րեկոյան Հուկի Լիանգն իր խոհանոցում բրինձ և ձկան կոտլետ էր ուտում: Հարեւան բնակարանում նույնպես ընթրում էին, և նրանց ծիծաղն ու բարձր խոսակցությունը խախտեցին Լիանգի տան լոռությունը: Կնոջ մահից հետո նա մենակ էր ապրում և վարժվել էր այդ մենակությանը, կորստյան սուր ցավն էլ բավական բթացել էր: Սակայն այդ երեկոն նրա սեղանին դրված մեկ ամանն ու երկու ձողը խոցեցին նրան:

Այդ գիշեր քնելուց առաջ Հուկի Լիանգը կարդաց իր սիրելի 23-րդ սաղմոսը: Դրանում նրա համար ամենակարեղոր բառերն էին. «Դու ինձ հետ ես» (Սաղմ. 23.4):

Իր հոտի հանդեպ հովվի ավելի քան գործնական հոգատարությունը նրա հաստատակամ ներկայությունն ու սիրառատ հայացքն էր ոչխարների կյանքի ամեն մի մանրուքի վրա (Հմ. 2-5), որը խաղաղություն պարգևեց Հուկի Լիանգին:

Միայն այն միտքը, որ այստեղ կա մեկը, որը մեզ հետ է, միսիթարում է միայնության պահերին: Աստված իր զավակներին խոստանում է, որ իր սերը միշտ մեզ հետ կլինի (Սաղմ. 103. 17) և նա մեզ երբեք չի լրի (Եթ. 13. 5): Երբ մենք մեզ միայնակ ենք զգում, դա կլինի մեր խոհանոցում, ավտորուսով տուն գնալու ճանապարհին, թե նույնիսկ լեփ-լեցուն շուկայում, կարող ենք վստահ լինել, որ մեր Հովվի հայացքը միշտ մեզ վրա է: Եվ կարող ենք ասել. «Դու ինձ հետ ես»:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր, շնորհակալ եմ թեզ, որ միշտ ինձ հետ ես: Ամեն:**

**Երբ միայնակ զգանք, որ հաճախ է դատահում, իհօւն 23-րդ սաղմոսի բաջակերական խոսքերը:**

Շատ մաքսավորներ ու մեղավորներ էին Հիսուսի ու նրա աշակերտների հետ ճաշի նստել: (Մարկ. 2.15)

## ԱՎԵՏԱՐԱՆԸ՝ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՏԵՂԵՐՈՒՄ

**Վ**երջերս Հոլիվուդում էի: Այդ անունը անթիվ-անհամար անգամ տեսել էի հեռուստացույցով՝ կինոնկարների ազդագրերում: Այժմ Հյուրանոցի պատուհանից նայում էի Հոս Անջելեսի բլուրների ստորոտում տեղադրված սպիտակ, խոշոր տառերին: Հանկարծ ներքեռում՝ ձախ կողմի վրա ուշադրությունս գրավեց մի խաչ, որը երբեք կինոնկարներում չէի նկատել: Խսկ երբ գուրս եկա սենյակից, տեղի եկեղեցու մի քանի ուսանողներ ինձ հետ սկսեցին խոսել Հիսուսի մասին:

Մենք կարող ենք մտածել, որ Հոլիվուդը Աստծո արքայությունից շատ հեռու աշխարհիկ կյանքի կենտրոն է, սակայն նույնիսկ այնտեղ Քրիստոսն իր ներկայությամբ ակնհայտորեն աշխատում է զարգացնել մարդուն: Փարիսեցիներն անընդհատ զարմանում էին, որ Հիսուսը հայտնվում էր անսպասելի վայրերում ու շփվում անսպասելի մարդկանց հետ: Մարկոս 2.13-17-ում ասվում է, որ նա շատ ժամանակ էր անցկացնում «անմաքուր» կյանքով ապրողների հետ. «շատ մաքսավորներ ու մեղավորներ էին Հիսուսի ու նրա աշակերտների հետ ճաշի նստել» (Հմ.15): Այդ զարմանքին ի պատասխան՝ Հիսուսը պատասխանում է, որ ինքը լինում է այնտեղ, որտեղ իր կարիքը կա. «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ հիվանդներին. ես եկել եմ ոչ թե արդարներին, այլ մեղավորներին ապաշխարության կոչելու» (Հմ.17): Ավելի քան երկու հազար տարի անց էլ Հիսուսը շարունակում է անսպասելի վայրերում ու անսպասելի մարդկանց մեջ սերմանել հույսի ու փրկության իր պատգամը: Եվ մեզ էլ կանչել է՝ այդ առաքելության մի մասը դառնալու:

**Աղոթք - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ, որ Դու հայտնվել ես այնպիսի տեղում, որտեղ քեզ չի սպասում : Շնորհակալ եմ, որ ինձ կանչել ես՝ դառնալու քո առաքելության մի մասը: Ամեն:**

**Երեմն զարմանում են՝ տեսնելով Աստծո հիանալի ու սիամչելի գործերը: Սակայն դատասա լինենք դրանք տեսնելու նաև անսուժասելի վայրերում:**

Տերը խոստումը չի ուշացնի, այլ համբերատար է մեր նկատմամբ: (Բ.Պետ.3. 9)

## ՅՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԵՐ

**Կ**յանքի մայրամուտին Զոն Փըրքինզը պատգամ ուներ թողնելու իր հետնորդներին: Նա, որ հայտնի է ցեղերի հաշտեցման քարոզչությամբ, ասել է. «Դեպի Աստված վերադարձի միակ ճանապարհը ապաշխարությունն է: Եթե չապաշխարեք, բոլորդ էլ կկորչեք»:

Այս խոսքերն արտացոլում են Քրիստոսի և շատ այլ մարդկանց խոսքերը, որ արձանագրված են Աստվածաշնչում: Քրիստոսն ասում է. «Եթե չապաշխարեք, բոլորդ էլ այդպես կկորչեք» (Ղուկ.13.3): Պետրոս առաքյալն ասում է. «Ապաշխարեցեք ու դարձի՛ եկեք, որպեսզի ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19-20): Աստվածաշնչում կարդում ենք, որ շատ ավելի վաղ մեկ այլ մարդ էր ցանկանում, որ իր ժողովուրդը դառնա դեպի Աստված: Իսրայելի ժողովրդին ուղղված հրաժեշտի խոսքում մարդարե, քահանա և դատավոր Սամուելն ասում է. «Մի՛ վախեցեք. թեև դուք գործել եք այս բոլոր չարիքները, սակայն մի՛ խոտորվեք Տիրոջից և ձեր ամբողջ սրտով ծառայե՛ք Տիրոջը» (Հմ.20): Սա ապաշխարության՝ չարից հետ դառնալու և ամբողջ սրտով Աստծուն հետևելու նրա պատգամն էր:

Մենք բոլորս էլ մեղք գործում ենք և չենք հասնում նրանշաճողին: Ուստի կարիք ունենք ապաշխարության, որը նշանակում է հեռանալ մեղքից և դիմել Հիսուսին, որը իրեն հետևելու համար կների ու կզորացնի մեզ: Եկե՛ք ուշադրություն դարձնենք երկու մարդկանց՝ Զոն Փըրքինզի և Սամուելի խոսքերին, որոնք հասկացել էին, թե Աստված ինչպես կարող է օգտագործել ապաշխարանքի ուժը, որպեսզի մեզ վերածի իր պատվի համար արժանի մարդկանց:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, առաջնորդի՛ր ինձ ճշնարիտ ապաշխարության: Խնդրում եմ օգնի՛ր ինձ ճանաչել մեղքս և ամբողջովին վստահել Յիսուսի փրկարար զորությանը: Անեն:

**Կարենր է մեղքից հետ դառնալն ու Քրիստոսից ներողություն խնդրելով՝ ամբողջ սրտով Ասծուն հետևելը:**



## Նյութերի ցանկ

Աղոթք	ապ. 12, մայ. 4, 5, 20
Անձնական վարմունք	եւ պատասխանատվություն.....ապ. 30
Աշկերտել	.....ապ. 5
Աստված ակնածանք	է .....մայ. 10
Աստված նկարագիր	է .....մայ. 15, 17
Աստծո ընտանիքը	.....Հուն. 18
Աստծո հետ հաղորդակցություն	.....ապ. 4
Աստծո նկարագիրը	.....ապ. 17, Հուն. 2, 9, 16, 23
Աստծո սերն ու Հոգածությունը	.....ապ. 10, 14, 18, 21, 23, մայ. 8, 19, 21, 22, 24, Հուն. 3, 28
Աստծուն վստահել	.....ապ. 3, 18, 21, 29, մայ. 4, 5, 11, 19, 29, 30, Հուն. 10, 17
Ավետարանչություն	.....ապ. 11, մայ. 1, 22, Հուն. 14
Բարեկամություն	.....ապ. 19, մայ. 20
Գոհունակություն	.....Հուն. 26
Դրախտ	.....մայ. 3, Հուն. 11
Զգացումներ	.....մայ. 12
Խնամակալություն	.....ապ. 13
Խորհրդատվություն	.....մայ. 14
Ծառայել	.....ապ. 6, 16, մայ. 14
Ծերանալ	.....մայ. 3, Հուն. 13
Կուապաշտություն	.....մայ. 10, Հուն. 6
Հալածանք	.....Հուն. 4, 14, 27
Հաղորդություն	.....Հուն. 25
Հանգիստ	.....Հուն. 9
Հաշտություն	.....ապ. 15, Հուն. 7
Հավատք	.....Հուն. 10
Հնազանդություն	.....մայ. 12
Հոգևոր աճ	եւ այլափոխություն.....ապ. 8, 20, 27 մայ. 12, 27, Հուն. 1, 5, 8, 15, 22
Հոգևոր կարգապահություն	.....մայ. 20
Մահ	.....Հուն. 13



Մատնություն	ապ. 30
Մեղք	ապ. 25
Մենակություն	Հուն. 28
Միություն	Հուն. 2
Հարաբերություններ	Հուն. 18
Հավիտենական կյանք	Հուն. 11
Հույս	ապ. 14, 28, մայ. 31, Հուն. 13
Ներել ուրիշներին	ապ. 1, 8, 15, 22, Հուն. 7, 30
Շնորհակալություն	ապ. 17, 28, մայ. 6
Որոշում կայացնել	մայ. 2, Հուն. 12
Պաշտամունք	ապ. 2, 13, մայ. 29
Զատագովություն	մայ. 1, 8, 15, 27
Սեր այլոց հանդեպ	ապ. 16, 23, մայ. 13, Հուն. 20, 27
Սուրբ Գրքի պատմությունը	Հուն. 12
Սուրբ Գրքի սերտողություն	ապ. 17
Սուրբ Հոգի	մայ. 28, Հուն. 3
Ստեղծագործություն	ապ. 2, 21, մայ. 15
Սրբություն	ապ. 1, Հուն. 12
Վավերականություն	Հուն. 20
Վիշտ	մայ. 31
Տառապանք և ողբերգություն	ապ. 13, մայ. 1, 19, 29, 30, 31
Քաջալերություն	ապ. 12, Հուն. 21
Քրիստոսի անձը եւ գործը	մայ. 26, Հուն. 24
Քրիստոսի կյանքը եւ ուսուցումը	ապ. 26, Հուն. 29
Քրիստոսի մահը	ապ. 2, 7, 9, 16
Քրիստոսի հարությունը	ապ. 9, 24
Քրիստոսը՝ Փրկիչ/Մեսիա	մայ. 7, Հուն. 25
Քրիստոսի համար ապրել	ապ. 26, 27, մայ. 2, 25, Հուն. 4, 19, 29
Քրիստոսի հետ միություն	մայ. 2, 9, 16, 23
Քրիստոսի նման ապրել	ապ. 30, մայ. 8
Քրիստոսով նույնություն	ապ. 1, 5, Հուն. 24
Փրկություն	ապ. 1, 8, 9, 25, մայ. 7, Հուն. 11, 19, 30



Նշումների համար



## Կարևոր ազդ

Հարգելի՝ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս  
գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները  
դրել ներքեւի կտրոնի վրա և ուղարկել հետեւյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ +374 10 54 3 576, +374 10 54 35 78

Էլֆոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ր</sup>

Հեռ. +374 47 945 275

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

---